ՍԱՐԳԻՍ ԴՊԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. ՀՐԴԵՀՆԵՐ. ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ. ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԵՐԿՐԱՃԱՐԺԵՐ. ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ (1760-1790-ԱԿԱՆ ԹԹ.)

Էլիզաբեթ Թաջիրեան, Մերուժան Կարապետեան

ԺԸ դարում Կ. Պոլսի հայ մատենադրական մտքի (Յ. Նալեան, Հ. Միքայէլ Զամչեանց, Հ. Ղուկաս Ինճիճեան, եւն.) կայացման գործում առաջնային դեր խաղացին քաղաքի Պալատ թաղամասի Ս. Հրեշտակապետաց եկեղեցու[1] շուրջ գործող մտաւոր անձինք: Դրանցից մեկի՝ Գէորգ դպիր Տէր-Յովհաննիսեանի (Մխիթարեան վարդապետների ներքին նամակագրութեան մէջ յայտնի «Տիրացու» մականուամբ) գործունէութեան ու թողած մատենագրական ժառանգութեան մասին արդէն կան մենագրական ուսումնասիրութիւններ[2]:

Անհամեմատ նուազ չափով է ուսումնասիրուած եւ հրատարակուած նոյն պատմագրական դպրոցի մի այլ ներկայացուցչի՝ Սարգիս դպիր Սարաֆ Յովհաննիսեանի (1740-1805[3]) գրաւոր ժառանգութիւնը:

Վիեննայի Մխիթարեան մենաստանի մատենադարանի թիւ 779 ձեռագիրն իրենից ներկայացնում է ԺԹ. դարի վերջին Հ. Գրիգորիս Գալեմքեարեանի կողմից զանազան բնագրերից արտագրուած պատմական նիւթերի հաւաքածոյ[4]:

Հաւաքածոյում ընդգրկուած մատենագրական առաջին միաւոր-տետրակը (թթ. 1ա-52ա), բաղկացած է 16 ինքնորոյն միաւորներից: Տետրակի էջերում մեզ հանդիպած յիշատակարանները յստակ տեղեկացնում են բնագրի գրչագրման տեղի *եւ* ժամանակի *մասին. ա) «Ի 1770 գրեցաւ ի մանկատան սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի՝ յուղիղ օրինակաց. դեկտեմբեր ամսոյ» (թ.*

---

1 Ս. Հրեշտակապետ եկեղեցու պատմութեան մասին տե՛ս **Մելգոն Ասատուր**, *Երեքդարեան* պատմութիւն *Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալատու (1627-1931)*, Կ. Պոլիս, 1931

2 Տե՛ս Գէորգ Բամպուքճեան, *Գէորգ դպիր Տէր-Յովհաննէսեան (1736-1811)*,- «Արմաշ» պարբերագիրք, Մոնթրէալ, 1987, Դ տարի, թիւ 2 (8), էջ 11-19, Նոյնի, *«Պալատեցի Գէորգ Դպրի գերդաստանը»*, Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1952, ապրիլ 19, թիւ 16, էջ 68-369, ապրիլ 26, թիւ 17, էջ 291-293; Բ. Զուգասզեան, *Գէորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն. 1737-1811*, Երեւան, 1994, Հ. Ս. Ճեմճեմեան, *Գէորգ Դպիր Տէր Յոհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները*, - «Բազմավէպ», 1982, թիւ 1-2, էջ 96-155, թիւ 3-4, էջ 294-319, 1983, թիւ 1-4, էջ 11-38 (էջ 32-37 տե՛ս Գ. Բամպուքճեանի կողմից կազմուած Գէորգ Պալատեցու մատենագիտութիւնը): Տե՛ս նաեւ առանձին գրքով՝ Հ. Ս. Ճեմճեմեան, *Գէորգ Դպիր Տէր Յոհաննիսեան (Պալատեցի) եւ Մխիթարեանները*, Վենետիկ-Ս. Ղազար, 1984: **Մարիանէ Սարգսեան**, *Որոշ ճշտումներ Գէորգ Դպիր Պալատացու կեանքի եւ տոհմածառի վերաբերեալ*,- ԲՄ, 25, էջ 232-244, Նոյնի, *Գէորգ դպիր Պալատեցին լեզուաբան-բառարանագիր (1737-1811)*,- ԲՄ, 15, էջ 203-221:

3 Սարգիս դպիր Սարաֆ Յովհաննիսեանի ծննդեան եւ մահուան թուականները բերում ենք ըստ Կ. Պոլսում Էդիրնէգաբուի հայոց գերեզմանատան տապանագրի (տե՛ս http://www.turkiyeermenileripatrikligi.org; հմմտ. հմմտ. նաեւ **Kevork Pamukciyan**, *Biyografilerile ermeniler* (Ermeni kaynaklarindan tarihe katkilar, Cilt IV), Istanbul, 2003, s. 346-347)

4 Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա*, հտ. Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 329-338: Մայր ցուցակի կազմողի աչքից վրիպել է յիշեալ բնագրում հեղինակային յիշատակման դէպքերը:

26բ) եւ բ) «Գրեցաւ օրինակմամբ յամի Տեառն 1793 եւ ի ՌՄԽԲ թուին Հայոց մարտի Բ. եւ ի ١٥٠٧ սէնէին շապան ամսոյ մէկին ի մանկատան սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետի ի Պալատ» (թ. 4ա):

Առաջին դէմքով հանդէս եկող հեղինակը իրեն կոչում է «Սարգիսս», կամ «Սարգիս Յոհաննէսեան որ եմ իսկ ծառայ ի մանկատան Հայրապետին Մծբնացւոյ»:

Խօսքն անտարակոյս ԺԹ. դարի վերջին Կ.Պոլսում ստեղծագործած Հայ մատենագրութեան մէջ յայտնի անձանցից մեկի՝ Սարգիս դպիր Սարաֆ Յովհաննիսեանի (1740՞-1805) մասին է[5]:

Սարգիս դպիր Յովհաննիսեանի մատենագրական ժառանգութիւնից մեզ առայսօր յայտնի են հետեւեալ մի շարք գործերը.

- «Վիպագրութիւն Կոստանդնուպոլիս մայրաքաղաքին. 1800»: *1800 թ. թուագրուող Կ.Պոլսի մանրամասն նկարագրութեան մասին Սարգիս դպրի աշխատութեան ձեռագիրը նախկինում եղել է պոլսահայ բժիշկ, մատենագէտ Վահրամ Թորգոմեանի ընտանիքի սեփականութիւնը եւ ապա հանդրուանել Երուսաղէմի Սբ. Յակոբեանց վանքի մատենադարանում[6]:*

- «Գաւազանագիրք օսմանցւոց թագաւորացն»[7]: *Աշխատութիւնն այսպէս է կոչում Սարգիս դպիրը իր այլ աշխատութիւններում (տե՛ս ստորեւ):*

- Ժողովածոյ *(Աբրահամու Անկիւրացւոյ Տաղ վասն առմանն Ստամպօլայ: Կարգ օսմանցոց թագաւորաց յՕսմանէ մինչեւ ցայժմ: Պատրիարքունիք Հայոց նստօղք յԵրուսաղէմ...: Պատրիարքունիք Հայոց նստօղք ի Ստամպօլ: Նամակ Սուլթան Սուլէյմանի: 49ա-բ Ամրոցոլու գերահռչակ դպրատան վարժապետ Վարդան վրդ.՝ աշակերտ երանելի Յոհաննէս պատրիարքին, ձեռնադրած աշակերտքն կարդաւ են այսոքիկ: Յակոբ [Նալեան] պատրիարքի աշակերտքն են...: Սուրբ էջմիածնի նուիրակունքն են մնծք: Կաթողիկոսք Սսայ յետ բաժանման յէջմիածնէ: Ժամանակագրական կտորներ: Վասն հրակիզութեան: Հրայրեացքն են այսոքիկ: [Վասն Յակոբայ Նալեան]: Պատմութիւն նորոգութեան եկեղեցւոյն Սբ. Լուսաւորչին որ ի Ղալատիա եւն.:[8]*

- Կանոնական Յիշատակարան, Հաշիւք, Տարեգրականք[9]: *Վահրամ Թորգոմեանի ընտանիքի սեփականութիւնն է եղել նաեւ Գր. Գալեմքեարեանի կողմից արտագրուած*

---

5 Սարգիս դպիր Սարաֆ Յովհաննիսեանի մասին ցայսօր եղած ամենաընդարձակ գրութիւնը Գէորգ Բամպուքչեանինն է (տե՛ս Kevork Pamukciyan, *Biyografilerile ermeniler* (Ermeni kaynaklarindan tarihe katkilar, Cilt IV), Istanbul, 2003, s. 346-347):

6 Ձեռագրի մասին տե՛ս *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, կազմեց Նորայր արքեպ. Պողարեան, հտ.11, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1991, էջ 309: Աշխատութիւնը առանց ուսումնասիրութեան սկզբում լոյս տեսաւ մասմաս «Սիոն»-ում (1967, թիւ 1-10), ապա առանձին գրքով՝ Սարգիս դպիր Յովհաննիսեան, *Վիպագրութիւն Կոստանդնուպոլիս մայրաքաղաքին. 1800*, Հրատարակեց Արա Գալայճեան, Երուսաղէմ, 1967, 74 էջ:

7 Տե՛ս *Գիրք Պատմութեան Օսմանցոց Թագաւորացն* (նաեւ Համառօտութիւն պատմութեան ազգին թուրքաց: [Ժամանակագրութիւն թագաւորաց Բիւզանդիոյ]: [Վասն քաղաքին Վիզանտիոն].- Երեւանի մատենադարան, ձեռ. 10716, 1771-1808՞ թթ.) (համառօտ նկարագրութիւնը ըստ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Գ, Կազմեց Ա. Մալխասեան, Խմբ. Ա. Տէր-Ստեփանեանի, Երեւան, 2007, էջ 97-98):

8 Տե՛ս Երեւանի մատենադարան, ձեռ. 10721, 1792-ից յետոյ) (համառօտ նկարագրութիւնը ըստ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Գ, էջ 99: Ձեռագրացուցակի կազմողի աչքից վրիպել է ձեռագիր ժողովածոյի գրիչ-հեղինակի մասին վկայութիւնը):

9 Տե՛ս Սբ. Ղազարի մատենադարան, Յարութիւն Քիւրտեան հաւաքածոյ, ձեռ. թիւ 261: Ժամանակ՝ 1778-1803: Թերթք՝ 100: Կ.Պոլսի Պալատի Հրեշ-

Վիեննայի թիւ 779 ձեռագրի հիմք գրչագիրը: *Այդ մասին են վկայում Վ. Թորգոմեանի կողմից կատարուած ընդարձակ մէջբերումներն ու յղումները այդ ձեռագրին*[10]: *Միաժամանակ բաւական շատ են վկայութիւնները Գր. Գալեմքեարեանի կողմից, որին լիովին մատչելի են եղել Վահրամ Թորգոմեանի ունեցած ձեռագրերը, որոնց յղումները եւ կատարած մէջբերումները բազմաթիւ են իր հետազօտութիւններում*[11]:

Հետազօտութեան ընթացքում պարզուեց, որ Վիեննայի թիւ 779 ձեռագրի հիմք գրչագիր-ժողովածոն *հանդիսանում է Երեւանի մատենադարանում (ձեռագիր թիւ 10721, համառօտ նկարագրութիւնը տե՛ս վերեւում, յղում 8):*

Ստորեւ հրատարակում ենք յիշեալ ժողովածոյից Կ.Պոլսի հրդեհների, բնական աղետների, համաճարակների վերաբերեալ հատուածը, որ իրենից ներկայացնում է ժողովածոյում ընդգրկուած առանձին մատենագրական միաւոր (ՄՄ, ձեռ. 10721, թթ. 67բ-169ա (դատարկ՝ 82բ-98բ, 100ա-103բ, 119բ-122բ, 124բ, 129բ, 134ա-136բ, 139բ-142բ, 145բ-148բ)):

Ձեռագրի այս հատուածն ունի մի քանի ներքին ստորաբաժանումներ հետեւեալ ենթավերնագրերով՝

- «Վասն հրակիզութեան» (Կ. Պոլսի 1762-1766 թթ. հրդեհների նկարագրութիւն՝ թթ. 67բ-70բ),

- «Հրայրեացքն են այսոքիկ» (Կ. Պոլսի հրդեհները 1756-1768 թթ. - թթ. 71ա-72բ)

- Պատրիարքական անցուդարձերը 1740-60-ական թթ. (թթ. 73-88ա, բաց ենք թողնում)

- Ժամանակագրականք (թթ. 99աբ, բաց ենք թողնում)

- Ռազմա-քաղաքական անցուդարձ (թթ. 104-116բ)

- «Պատմութիւն նորոգութեան եկեղեցւոյն Սրբոյ Լուսաւորչին որ ի Ղալաթիայ» (թթ. 117ա-119ա)

- Հրեշտակապետաց եկեղեցու անցուդարձը (թթ. 123ա-124ա)

- Հրավառութիւններ Կ. Պոլսում, ներպետական եւ ներհամայնքային կեանք (թթ. 125ա-129ա):

- Հրավառութիւններ եւ հրդեհներ Կ. Պոլսում 1761-1769 թթ. (թթ. 130ա-133բ):

- Երկրաշարժեր եւ այլ բնական աղետներ Կ.Պոլսում (թթ. 137ա-139ա):

- Գիսաւոր աստղի յայտնութիւն (թթ. 143աբ):

- Կրկին աստղի յայտնութիւն (թթ. 144ա-145ա):

տակապետաց եկեղեցական դպրոցի կանոնական յիշատակարանը: Զանազան հաշիւներ եւ Տարեգրականք):

Աշխատութեան մէկ այլ օրինակ, գրուած «ի խնդրոյ դպրապետ տիրացու Ռափայէլ խոճեմազարդ առնն եւ հրամանաւ Տէր Վարդան աւագերէցին մերոյ...» պահւում է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի մատենադարանում (շապիկի հրատարակութիւնը տե՛ս **Garo Kürkman**, *Armenian Painters in the Ottoman Empire. 1600-1923*, Vol. II, Istanbul, 2004, s. 714):

10 Այսպէս, ծանօթագրելով Երեմիա Քէօմիւրճեանի «*Ստամպօլոյ պատմութիւն*»ը, Վ. Թորգոմեանը Եէնի Գաբուի թաղում հայոց եկեղեցու առկայութեան մասին, շարունակում է. «Ունեցած են հոն Հայերը եկեղեցի այն ատեն. ո՛չ, դժբախտաբար, ինչպէս կ'իմանանք *Սուլթան Մուսդաֆայի կեանքը պատմող գրուածքէ մը, զոր շարադրած է նոյնպէս Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան*, 1770ին՝ վերոյիշեալ [Կոստանդնուպոլսի] Տեղագրութենէն շատ առաջ, եւ որ *սեպհական է մեր ընտանիքին*»: Ապա հետեւում է ընդարձակ քաղուած ձեռագրից (տե՛ս **Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան**, *Ստամպօլոյ պատմութիւն*, հտ. Ա, Հրատարակեց եւ ծանօթագրեց Վահրամ Յ. Թորգոմեան, Վիեննա, 1913, (Ազգային մատենադարան, ՀԱ.), էջ 222-223):

11 Տե՛ս Հ. Գրիգորիս Գալեմքեարեան, *Կենսագրութիւն Սարգիս Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք. 1720-1775* (Ազգային մատենադարան, ԾԵ.), Վիեննա, 1908, էջ 154, 250, 262, 307-308, 334, 361, 409,

- «Յամի Տեառն 1778 եւ ի մերս թուոջ ՌՄԻԷ, եղեւ մահտարաժամ յոյժ սաստիկ, որ կարի կոտորեաց զազգ մարդկան ի Կոստանդնուպօլիս մեծի քաղաքին...» (թթ. 149ա-158ա):

- 1782 թ. Կ. Պոլսի մեծ հրդեհը (թթ. 158բ-167ա-):

- Վասն մեծի հրկիզման, որ եղեւ ի քաղաքիս ... ի թուին Հայոց ՌՄԽԱ [1792] (թթ. 167ա-169ա):

- Ճշգրիտ հաշիւ տանց ազգիս Հայոց 'ի Կոստանդնուպօլիս (Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի մենաստանի մատենադարան, ձեռ. 779, թ. 33բ):

Սարգիս դպիր Սառաֆ Յովհաննէսեանի ժամանակագրական գրառումները Կ. Պոլսի հրդեհների ու հրկիզումների, համաճարակների ու բնական աղետների մասին իրենց մանրատեղանուանական մանրամասնութիւններով կարեւորագոյն աղբիւր են քաղաքի եւ շրջակայ բնակչութեան տեղաբաշխման, էթնոսոցիալական շարժերի, բնակչութեան արտագաղթերի եւ շատ այլ հարցերի ուսումնասիրութեան համար: Հեղինակի հաղորդած մանրամասնութիւններն ու ճշգրտութիւնը յաճախ տպաւորութիւն է թողնում, որ հեղինակի ձեռքի տակ են եղել Կ.Պոլսի հրշէջ եւ համաճարակային ծառայութիւնների մատեանները:

Ստորեւ հրատարակում ենք Սարգիս դպիր Սառաֆ Յովհաննէսեանի ձեռագիր ժողովածոյից նկարագրուած մատենագրական միաւորը պահպանելով ժամանակակից ձեռագրագիտութեան պահանջները:

/67բ/ ՎԱՍՆ ՀՐԱԿԻԶՈՒԹԵԱՆ

Յամի Փրկչին 1762, իսկ հայոց տումարի ՌՄԺԱ [1211=1762], մայիսի Ժ. [10]. շէ[վ]վալ լուսնի 28. եւ ԼԴ. օր յինանց, յաւուր ուրբաթու երեկոյին ժամն էր 4. սկսաւ հրակիզութիւնն ի դրանէ Սուլթան Պայազրտին (որ է Պուղտա[յ]ճըլար խարուսին) ֆիլ եօխուշիէն իջեալ գնիշանճի բազանիսն այրեաց եւ անտի շարունակաբար այրելով անցեալ գնաց մինչեւ ի սուրբ Աստուածածնի մայր եկեղեցւոյ զշուրջ եղեալ տունսն հայոց կիզեաց եւ յետոյ զմեծամեծ պալատսն այլազգեաց (այսինքն տաճկաց) այրելով էհաս մինչեւ ի Հիսարտիպին, որ անդ էր մեծագոյն պալատն դստերն Ռահիպ փաշային՝ գնա այրեաց եւս: Սակայն մայրագոյնն Յիսուս պահեաց եկեղեցին, որ էր կերտեալ յանուն ամէնօրհնեալ ծնողին իւրոյ եւ ի շաբաթու գիշերի 4 ժամում շիջաւ. հրակիզումնս այս տեւեաց 24 ժամ:

Զկնի աւուրց մեռասանից որ էր խե.երրորդ օր յինանց եւ Բշաբթի օրն խնամատարութեամբ Ռա/68ա/հիպ փաշային սկսան նորոգել զսուրբ Աստուածածնայ եկեղեցին, զի ի ժամանակի հրայրէցութեան ի տեղիս տեղիս խանգարեալք էին վասն կոխան լինելոյ մարդկանց եւ աւերեալք: Վասն որոյ ողորմութեամբն Աստուծոյ եւ հրամանաւ թագաւորին եւ խրատիւք եւ օգնականութեամբ Ռահիպ փաշային եւ մեծաջան հոգաբարձութեամբ Յակոբ Աստուծաբան Պատրիարքին[12], եղեւ բազմաց իրաց նորոգումն, իբր ի հիմանէ շինելով, զոր Տէր պահեսցէ հաստատուն ամէն:

Եւ այս եւս եղեւ այսպէս, զի ի ժամանակի հրակիզութեան պօստանճի պաշին բարկութեամբ զհրաշիջոյց գործարանսն՝ (այսինքն պիուլումպայսն) որ կային ներ յեկեղեցւոյն, առ ի օգնութիւն զհրակայծան շիջուցանելոյ, ի դուրս էր առեալ ասելով, թէ մեր անթիւ վճարանքն այրեցաւ՝ թող նա եւս այրի եւ այլ հայհոյանս տեղացոյց ի վերայ եկեղեցւոյն անասելիս: Իսկ ի ասել բանիս ոչ էանց չորս եւ կամ հինգ բոպէ եւ ինքն ելեալ ի վերայ բարձրագոյն շինու իմիք առ ի նկա[68բ]տել զհուրն եւ շէնքն այն իսկոյն կոր-

12 Իմա՛ Յակոբ Նալեան պատրիարք:

ծանեալ եւ ինքն վերուստ ի վայր անկեալ եւ անդամքն խորտակեալ եւ փշրեալ էր եւ եդին ի մէջ կարպէտի իմիք եւ տարին ի բնակութիւնն իւր եւ զկնի աւուրց երկուց մեռաւ դառնապէս:

Յամի Տեառն 1763. օգոստոսի Ի [20] յաւուր Դշաբաթի գիշերուոջ եղեալ հրակիզութիւնն փոքր ինչ մեծագոյն էր ի յիւսկիւտարն. եւ տեւեաց ժամս տասն:

Յամի Տեառն 1764. օգոստոսի ԺԲ [12]. յաւուր Եշաբաթի, Ե.երրորդ օր Վերափոխման, ի սոյն գիշերոջս եղեւ հրակիզութիւն Ֆէնէրի Ենիխաբուն ի մէջ յունաց քրիստոնէից. սկսաւ ի 4 ժամուն եւ շիջաւ 11 ժամուն: Ի մէջ երկուց դրանց եղեւ /34բ/ հրայրեցութիւնս այս առ ծովեզերքն, այսինքն ի մէջ Եէնիխաբուն եւ Ճիպալուն: Շատ վնաս հասոյց յունաց եւ եկեղեցին եւս վնա-/68բ/սեցաւ եւ կամարաշէն մեծագոյն խուղ մի գոյր առընթեր եկեղեցւոյն եւ ի մէջ նորին այրեցան ԺԸ [18[անձինք, թէ այր եւ թէ կին:

Յամի Տեառն 1764, հայոց ՌՄԺԳ. յամի այսմիկ ձմերայնի եղեանակն՝ որպէս զգարուն եւ զամառ՝ ջերմ եւ չոր անցուցաք, մինչեւ ի մարտի երրորդում օրն, յորում աւուր եկն սակաւ ձիւն ինչ եւ չկարաց կալ եւ մնալ ի ջերմութենէ եղանակին, այլ իսկոյն հալեցաւ եւ զառաջի իսկն դարձաւ. այլ եւ եկն սակաւ ինչ ձիւն ի չորեքտասաներորդում օրն եւ այն որպէս յառաջն՝ այնպէս եղեւ: Դարձեալ եկն սակաւ ինչ ինն եւ տասներորդում օրն եւ այն նման առաջնոյն եղեւ եւ ո՛չ տեւեալ եւ զկնի ո՛չ եկն բնաւ:

Յամի 1765 եւս յամի այսմիկ ձմերանի եղանակն քան զվերոյն եւս առաւել մեղմագոյն եւ ջերմագոյն գոլոյն, բնաւ ամենեւին չտեսաք զձիւն, այլ երբեմնապէս անձրեւ, որ այնպէս բոլորեցաւ տարին:

/69բ/ [Յամի] 1768. Ի թուին հայոց ՌՄԺԷ. յունիսի 26. սէֆէր լուսնի 23. յաւուր Եշաբաթի եկն ի Հրեշտակապետու եկեղեցին Զաքարիա եպիսկոպոսն առաքեալ ի Ծայրագոյն հովուապետէ Ս[իմէօն]է Ա[մենայն] Կ[աթողիկոսէ] վասն նուիրակութեան սրբոյ աթոռոյն էջմիածնի, որ էր կաղզուանցի եւ էր ընդ Սիմէօնի ի ժամանակս նուիրակութեան իւրոյ[13], յորժամ եկն յառաջ քան զրասենցին[14]:

[Յամի] 1766, ՌՄԺԵ յամսեանն յուլիսի Ը [8]. սէֆէր լուսնի 12 յաւուր շաբաթու Գիւտի նշխարաց Լուսաւուին, ընթեռնանեցաւ յեկեղեցին Հրեշտակապետու զկոնդակն Հովուապետին մերոյ վասն կիւրակէից հնգից կրկնահաստատելոց, որոց մինն է այս օրս: Որ ներ կոնդակում պատուիրեալ էր՝ ոչ պատուել զսուրբ աւուրքս այսոքիկ գինարբմամբք եւ յանցանաբեր իրօք, այլ որպէս իցէ արժանի աւուրց տէրունականաց եւ այլք խրատք բազումք, որոց իցէ լսելի՝ լուիցէ:

[70ա] Ի ամի Տեառն 1766. ՌՄԺԵ յամսեանն նոյեմբերի 23. (ճէմազիյել-ահռ լուսնի 28. եկն ի Կոստանդնուպօլիս) եւ ըէճէպի 2. եկն յեկեղեցին Հրեշտակապետու Յօհան Վարդապետն Շնորհալի, առաջնորդ շնորհասփիւռ գահի Մշու սրբոյ Կարապետի եւ էր ամենեւին հոգիացեալ իբրեւ զհրեշտակ Աստուծոյ հեզ ըստ ամենայնի եւ խոնարհ, սուրբ կենօք եւ վարուք առաքինի ճգնազգեաց եւ մաքուր անձն, գերիմաստ եւ շնորհապերճ իմաստուն, տեղեակ գրոց սրբոց եւ արտաքնոց գիտութեանց, զի աղբիւրաբար եւ գիտօրէն հեղոյր զբանն կենաց ի լսելիս մեր, եւ գերազանց մարդ, ո՛չ իբրեւ զմարդ կենցաղավարէր, այլ իբրեւ զհրեշտակ Աստուծոյ էր, ի մարմնի անմարմնաբար կեայր, զառաւօտեան ժամն եւ զերեկոյն անդանդաղօրէն լսէր եւ կատարէր մինչ յաւարտ, մանաւանդ սուրբ պատարագն ամբողջ լսէր, բանաւոր պատճառաւ եւս չէր մնայր յետս ի տեսանելոյ եւ վերջապէս ո՛չ կարեմ զսրբութիւնն նորին ընդ գ/70բ/բով արկանել, այլ միայն զայս ասացից, զի յորժամ ՌՄԺԷ յունիսի ԺԸ [18] յաւուր Դշաբաթի Լուսա-

13 Զաքարիա Կաղզուանցու մասին տե՛ս Պօղոս Կաղզուանցի, *Գիրք պատմութեանց*,- Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ժ., Մանր մատենագիրք, կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ Բահ. Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 207-352:

14 Իմա՛ Յարութիւն եպիսկոպոս Բասենցի (1696-1796):

ուրչին չուեաց յեկեղեցւոյն մերմէ առ Լուսաւորչին եկեղեցին Ղալաթիոյ շիւանօք եւ տխրութեամբք լցոյց զժողովուրդն եւ կաթոգնեալ խելագրաւս թողեալ գնաց[15]:

/71ա/ ՀՐԱՑՐԵԱՑՔՆ ԵՆ ԱՅՍՈՔԻԿ

Ի թուին ՌՄԵ [1756] ՌՆԶԱ սկնէին ... 23. Հօճա փաշայէն սկսաւ՝ զՁուխաճի խանն, զՍիւլեյման փաշայ խանն, Պախճէ խաբուն, Այտասոֆեան, Փաշայի դուռն, Խօճայ խանն, Մահմուտ փաշայն, զհրեայքն, Վալիսէ համամին. շինուած մզկիթն անդ այրեաց եւ զայլ մեծամեծ պալատս այլազգեաց յաւուր սրբոյ Խաչի. 36 ժամ տեւեաց:

ՌՄԶ [1757]: ՌՆԶԳ յունվարի ԺԴ [24]. այրեցաւ Ֆէնէրի դուրսն Եալքն Հասմանին փեսին տունն եւ այլոց ոմանց եւս:

Փետրվարի ԺԷ [17]: 28 յաւուր շաբաթու, Սամաթիայն Ուզուն Եօռկոյին տունն այրեցաւ:

Մարտի երեկոյեան 11 այրեցաւ Ռաստին[16] *եւ ծերունին Եալքմն Օրթագիւղն:*

Յունիսի ԻԴ [24]. շէվալի 9. Լուսաւորչի բարեկենդանի գիշերոջն, սկսաւ այրել Ճիպալիէն Խալէէն՝ ի ներս եմուտ զՍուլթան Սելիմն, Սուլթան Մուհամէտն, Սառաճհանան, Աթբազարն, Հասան փաշայ խանն, Պօղուզան քէմէրին եւ էջ անտի Լանկա, Եէնիխաբուն, Մու[71բ]սալայն, Շահզէտէ պաշին, Խսկի օտալարն, Ագսարայն, Քըրք տիրէկն, Ճէուահ փաշայն, Օտունխաբուի ներսի կողմն մինչեւ ի Խուպուր Պէշիյի Մէյմար չէշմէսին, Ալի փաշայ շարշըսին, Ազայի դուռն միայն հարէմն այրեաւ 36 ժամ տեւեաց այսքան հրայրեացս եւ շիջաւ:

ռ: ՌՆՎԿ Գշաբաթի գերեկն այրեցաւ ի Էօքիւնճինէրն՝ Զընարլը չէշմէն եւ շիջաւ:

ՌՆՎՌ Սեպտեմբերի ԻԲ [22[. 19 յաւուր Բշաբաթի ի Տաւուտ փաշայ Մէհկէմէն, եալլըգճի համամն այրեցաւ:

ՌՄԷ [1758] մարտի Գ [3]. Ալթը Մէրմէրն Քէփճէ համամին այրեցաւ:

ՌՄԷ ապրիլի ԺԹ [19]. Թահմիզի մէջն այրեցաւ զատկի գիշերոջն:

Յունիսի Է [7]. 12 Թահթա մինարէն մօտ Պալատու Զավուշլար էմինին տունն այրեցաւ: Սեպտեմբեր Ե [5]. Ֆէնէրի դուրսն խամպուր օղլուի գինետունն այրեցաւ:

/72ա/ ՌՄԸ [1759]: Յակոբ Մծբնացւոյ տօնի օրն շաբաթու Նաքլպէնտու կրակն:

Յունվարի ԻԵ [25] Բշաբթի. Սէնէն Ազայ համամին էհօքուշ չէշմէն եղեւ:

ՌՄԸ [1759] մարտի Գ [4]. ՌՆԼԲ ըէճէպի 17, յաւուր Եշաբթի երեկոյին եղեւ կրակ Եքշի Քարաթութն եւ նոյն երեկոյին եւս եղեւ Միլիվրի խաբուսին, որ նոյն օրն էր տօնանմայն առաջին:

: ՌՆՎԲ: Քեչէճիլէրն Եէնի պախճայի գլուխն օտալարին մէջն եղեւ: Փաշայի դուռն, խանթար էմինին տունն այրեցաւ: Պալատու Յաղն Մէհկէմէին մօտն միւթվէլլուն տունն այրեցաւ:

ՌՄԺ [1761]: Օրթայ գիւղն Եալքքն այրեցան, Շուվային տունէն ել եւ այրեաց:

ՌՆՎՕ օգոստոսի ԺԸ [18] խառթալն եղեւ յունայ եկեղեցւոյն ել:

---

15 Այս պարբերութիւնն ամբողջութեամբ մեջբերուել է ծանօթագրելու համար Յօնան վարդապետի մասին Սարգիս դպրի տեղեկութիւնը ձեռագրի սեփականատէր Վ. Թորգոմեանի կողմից, միաժամանակ հնչեցնելով «Գիտենք թէ ո՞վ էր այդ Յօնան վարդապետը» հարցը (տե՛ս Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան. *Ստամպօլոյ պատմութիւն*. Հտ. Ա, հրատարակեց եւ ծանօթագրեց Վահրամ Յ. Թորգոմեան. Վիեննա, 1913 (Ազգային մատենադարան, ՀԱ.), էջ 326-327): Մշոյ Սուրբ Կարապետ վանքի առաջնորդ Յօնան եպիսկոպոսի հոգեւոր-եկեղեցական եւ տնտեսական գործունէութեան մասին հսկայական նիւթ է պարունակում Սիմէօն Երեւանցու *Յիշատակարանը*, իսկ քաղաքական գործունէութեան (յարաբերութիւններ Յովսէփ Էմինի, վրաց Հերակլ թագաւորի եւ այլոց հետ) մասին աւելի մանրամասն տե՛ս Պաւել Զորանեան, *Հայ-ռուս-վրացական փոխյարաբերութիւնները ԺԸ դարի երկրորդ կէսին*, Ս. Էջմիածին, 2006, էջ 161-162, 194, 417; Յովսէփ Էմին. *Յովսէփ Էմինի կեանքն ու արկածները*, Երեւան, 2018, եւն.:

16 Ռաստի - Ռաստեան (Ըռաստեան, Ռաստ օղլու, Ռէստէն) տոհմի (որի մի ճիւղն է համարւում նաեւ ռուսահայ Պատկանեան ընտանիքը) մասին տե՛ս նաեւ Յ. Գ. Մրմրեան, *Մասնական պատմութիւն հայ մեծատուններու*, Կ.Պոլիս, 1910, էջ 57, Գ. Բամպուքճեան. *Յակոբ Նալեան Պատրիարք*, էջ 211:

١١٧٥ սէպտէմբերի 21 Քէթէնճոց դուռն եղեւ, սէպտէմբերի 25 Աթ փաղարն եղեւ կրակ: 23 Օտուն /35բ/ խաբուլի ներսն պարուրճոց խանութն այ- /72բ/ռեաց:

[ՌՄԺ] [1761]: ١١ շապանի 29. խուռու չէշմէն եալլքն այրեցան:

ՌՄԺԱ [1762] մայիսի Զ [6]. ١١ Քըրք Տեօրթ խաբուն աճէմ խըլըճին տունն եղեւ:

ՌՄԺԱ [1762] Մայիսի Ժ [10]. Սուլթան Պայազըտէն ել էջ ի Հիսարտիպին եւ զեկեղեցին եւս վնասեաց. 24 ժամ տեւեաց:

Սեպտեմբերի Թ [9]. Պէյօղլուն ֆռանսուզ էլչուն[17] սարային քովն թէրճիմանին տնէն ել եւ այրեաց սուրբ Երրորդութեան եկեղեցին եւ Անտոնին եւս:

ՌՄԺԱ [1762]: ١١٧٦ նոյեմբերի ԻԴ [24]. ճեմազիյել էվէլի 20 ֆէնէրի եւ ի մէջ Պալատու եղեւ ընդ եալը այրեցաւ:

ՌՄԺԲ [1763]. մայիսի Թ [9]. Սուլթան Մէհէմէտի դուռնէն ել խառամանի բաղնիքն եւ պախալքն այրեցան:

ՌՄԺԳ [1764]. օգոստոս ١٠ Ասլան Իսկելէն Շիմոնին մտան եղեւ:

ՌՄԺԷ [1768]. նոյեմբերի Ի [20]. ١١٠ խումխափուլի դուրսի կրակն եղեւ:

١١٨١ րէճէպի 2. խասում փաշայն եղեւ կրակ. շապանի 8 սուլթան Ահմէտի քովն եղեւ. շապանի 9 միւս օրն վերոյ գրելոյն այնաճինեբուն մէջն:

* * *

/99ա/ Ի թուին հայոց ՌՃԾԲ [1703] օգոստոսի ԺԱ [11] յաւուր չորեքշաբաթի սուլթան Մուստաֆայն իջուցին ի թագաւորութենէն եւ նստաւ սուլթան Ահմէտն ԻԷ [17] տարի եւ ամիս մի:

ՌՃՀԹ [1730] սեպտեմբերի ԻԱ [21]. վերցուցին սուլթան Ահմէտն եւ եդին զՄահմուտն յաւուր Բշաբաթի. քանզի Եշաբաթի աւուրն ելին ի վերայ ոտից ապստամբքն, վասն այն ԺԴ [14] օր չեն բացեր խանութ, սէնէ տաճկաց ١١٤٣ բ[ե]պ[ի ու]լ [էվ]վ[ե]լ ամսոյ:

Մուսլուն Ղուլքեախիասի եղեւ նոյեմբերի Ժ [10]. յաւուր Գշաբաթի: Զկնի չորս աւուր յաւուր շաբաթու ԺԴ [14] նոյեմբերի, սուլթան Մահմուտն ժողովեալ զաղայն եւ սէրտէն կեչտի աղասիքն վասն միշավէրէի եւ զամենեսեան Չարդեաց խրատիւք Ճանըմ հօճայ կոչեցելոյն եւ զայլ մնացեալսն եւս ժողովեաց ի դուրսն եւ սպանեաց եւ այլքն ցրուեցան: Զկնի որոյ Նիշ փաշասի Միւհսին օղլին աղայ եղեւ եւ ١٧ պէօլիւկին չօսպաճին ներկայ գտանեցաւ ներ պալատումն, որ էր խըզըլպա/99բ/շու էլչիի Պէքճի այն եւս զՄուսլուն սպանեաց եւ անցաւ ի տեղն:

Սէնէ ١١٤٣ ճեմազիյել էվէլի ١٥ մարտի ԺԶ [16] յաւուր կիւրակէի երեկոյին կրկին ելին ի վերայ ոտից: Յետոյ սանճախն հանեցին եւ ջարդեցին եւ յաւուրն ուրբաթի Շահին Մէհէմէտ աղայն եղեւ աղայ մարտի ԺԹ [19]:

Իպրահիմ քեախիայն մատնի եղեւ ١١٤٣ շապանի ١٣ [14]:

١١٥٠ ճեմազիյել էվէլի ٧ Քիւրքճիւ պաշի Մանօլն կախեցին:

Հայոց ՌՃՀԵ [1726], մեծ պասի առաջին կիրակի Կարապետ Վարդապետն կաթողիկոս եղեւ:

١١٤٥ հին փարայն վերացաւ մայիսի ԻԸ [28] շէվվալի ٢٥ [25]. տրամն ١٤٢ ստակ ծախեցաւ:

ՌՃՁԵ [1736] յունիսի ԺԲ [12]. սուլթան Ահմէտն մեռաւ:

ՌՃՀԸ ١١٤٢ սէնէին մուհարէմի ١ին. յուլիսի ԺԶ [16] այրեցաւ Պալատն եւ ֆէնէռն վարդավառի պասի չորեքշաբթին:

*

/104ա/ Ի վերայ խառայտաղու ուղարկեցին զՄելեզ Մէհէմմէտ /36ա/ փաշան բազում զօրօք եւ զկնի ութսուն եւ վեց աւուր ֆէթ[հ] արա-

17 ԺԸ դարի երկրորդ կէսին Օսմանեան կայսրութիւնում ֆրանսիական դեսպաններ եղան 1755–1768՝ Շառլ Գրաւիէ Վերժէնը (Charles Gravier, comte de Vergennes), 1768–1784՝ Ֆրանսուա Էմանուէլ Գիգնեար Սէն Պրին (François-Emmanuel Guignard, comte de Saint-Priest), 1784–1792՝ Մարի Գաբրիէլ Ֆլորան Օգիւստ դե Շուազոլ-Գուֆիէն (Marie-Gabriel-Florent-Auguste de Choiseul-Gouffier)

բաք ասելով միւճաէՀի ուղարկեցին ասա ի քաղաքս հանդերձ բազում քէլլէիւք, զորս ի Մարայ մեյատանին շարեցին. ՌՌՀՕ սէնէին ճեմազիյել էվէլի 6:

ՌՌՀՂ սէֆէրի ամսոյն զպատրիարքունքն ի գուռն փաշային կոչեցին եւ ասացին պատուիրել ի տունս բայէից զի մինչեւ ցերիս աւուրս անհետ առնիցեն զսիլահս եւ զփուսատս ի տանց իւրեանց եւ արարին այնպէս:

/104բ/ [Յամի] 1769. Ի Թուին Հայոց ՌՄԺԸ. մարտի ԺԶ [16]. զիլքատէի 19, յաւուր Բշաբաթի (ՌՌՀՂ) անառակի կիւրակի: Եկ փաշայն եւ սէրասկէր գլխաւոր առաջնորդ վեզիրն Եպղըխճի զատէն, որոյ անունն էր Էմին Մուհամմէտ, մեծաւ հանդիսիւ եւ ալայիւ եւ պաշտպան սանճախն իւրեանց ընդ ալային եւ վասն սոյն սանճախին վնասս հասուցին բա[յ]էից բազումս, որք տեսանել եւ ի զբօսնուլ հանդիսին երթեալ էին ի գուրսն Թօփխաբուին, զորոց զոմանս սպանանեցին ընդ մեջ կտրելով, զոմանս վիրաւորելով եւ զայլ վնասս հասուցանելով ըստ մարմնոյ եւ իսկ ըստ հոգւոյ: Որ այնքան կատաղեցան, մինչ զի ի մէնջ տանց մտեալ զրայէսն կամեցան սպանանել, որք եւ արարին իսկ. եւ զդեսպանն Նեմցէի վիրաւորեցին եւ զընտանիսն ընդ նմա բէգիլ արարին, որք ի տես հանդէսին եկեալք էին ի մէջ միոյ տան այլազգեաց: Որ իսկ մեռաւ զկնի ոմանց աւուրց դեսպանն եւ կինն ընդ գնա/105ա/ն յերկիրն իւր նաւիւ մերկացուցին սոքա, որպէս եւ ասա արարին ի տան այլազգւոյն ի սանճախ սէյիրիին: Եւ զրայէսն որք ի սանճախէն իբրեւ մէկ սահմթ հեռի եղեալսն եւ կամ այլ աւելի եւ պակաս, երթեալ սպանեցին եւ վիրաւորեցին: Եւ ներ քաղաքին մտա ի Թօփխաբուն, մտեալ անզգամքն ի խանութսն սափրչաց եւ այլոց, զմանկունսն ի գրկաց հարց եւ զփոքրահասակսն խլեալ սպանանել կամելով վիրաւորեցին եւ զպաշտպանօղսն նոցա սպանեալ քարշէին զնոսա ի ձեռաց. Յո՛ղ զայլ կերպիւ վիրաւորեալսն ի գլուխս եւ յայլ անդամս յոյժ բազում: Եւ այս ո՛չ բայէից միայն՝ այլ եւ այլազգեաց իսկ արարին մտանելով ի տունս նոցա՝ պատճառաւ որոնելոյ զրայէս կողոպտեալ թալանեցին զնոսա եւս: Եւ այսպիսի բազում անասուածական արարս արարեալ ի մէջ կասկածի թողին զմեզ. յորոց փրկեսցէ զմեզ ի ժանեաց նոցա փրկիչն. ամէն: Եւ ի նոյն իրակութեանն ապատամբական գործ եւս կամէին ի /105բ/ գլուխ հանել, բայց արթնութեամբն թագաւորին ո՛չ կարացին:

Եւ մարտի ԻԲ [22]. զիլքատէ 25. յաւուր անտեսի կիւրակէին, եկ ի Տավուս փաշայէն վէզիրն ուզեւորեալ առ չէտրէնէ, որ անտի ի պատերազմ եւ ի ճանապարհին արարեալ գործսն անզգամական ի գիւղորայսն եւ ի խասապայսն թողում նրբանկատից, որոց արարսն ի քաղաքիս արարեցելովքն նոցա անիրաւութեանց եւ ի սովորական բնութեանց նոցա գազանականաց իմանալ:

Եւ ի ճանապարհին ընդ երթալն իւրեանց՝ օրթայ ընդ օրթայի կապ եւ կռիւ իբրեւ մարտի արարեալ, թէ մեր օրթայն յառաջ, եւ միւսն թէ մերն՝ յառաջ եւ վիրաւորեալ զմիմեանս, վիրաւորեալք բազումք մեռեալ եւ բազումք կիսամեռք անկեալք, եւ վիրաւորք ի չէքմէՀէն եւ յայլ տեղեաց յոգունք եկեալք ասա /106ա/ առ ի առողջանալ, որոց ոմանք առողջացան եւ ոմանք բազումք մեռան:

ՌՌՀԿ. սեպտեմբերի Ե [5] ճեմազիյել էվէլի 16. յաւուր շաբաթու լուսաբ, զոր ի յԱստամպօլու երթօղ սէրասկէրն Եպղըխճի Զատէի գլուխն էտրէնու բերին. զի զպատերազմի ՀՀվալն՝ զոր ինչ կարծէին՝ հակառակն եղեւ, չդիպեալ ի նպատակն՝ զոր յուսային: Եւ որպէս բնական է բարք նոցա, որ չեղեալ իրսն ըստ ախորժակաց իւրեանց՝ զգլուխ եղեալսն այնմ իրակութեան պատժեն, թէ նա է պատճառն, եւ թէ նա այսքան բան էառ ի նոցանէ եւ զԳբասանան ետ մերոց թշնամեաց, որ ընդ սրիւք նոցա գրաւեցաք եւ ենթ եղաք նոցա ի մարտի:

/106բ/ ՌՌՀԷ սէնէին օգոստոսի ժ [10] ճեմազիյել էվէլի Ի յաւուր Գշաբաթի պասի վերափոխման. բերին յԱստամպօլ ճէնռալ մի իբր երեք սպասաւորաք հնարիւ իմն ըմբռնեալ եւ այժմ պատուով պահեալ յԵդիրնուլէն: Որ մինչեւ

ցայժմ բազում տեղիս եռուն քրիստոնէից զԿամանիձայն[18] (որոյ բանալիքն բազում անգամ եկեալ հրատարակէին եւ ոչինչ ամենեւին ելանէին սուտ) եւ զՀօթունն, զՈւլահն եւ զՊուղտանն եւ զայլ շրջակայ տեղիսն ասեմ եւ մինչեւ ցեղր Դանոբ գետոյն իսկ: Եւ զՊէնտէրն լուաք ներ հոկտեմբեր ամսոյն առնանիլն ի քրիստոնէից բազում հանրական պատերազմօք եւ զբնակօղ այլազգսն ի սուր մաշեալք են սուսերի յերից ամաց ցանգր եղեալքն, վասն կոտորելոյ իւրեանց այլազգեաց զրայէ բնակիչս նոյն քաղաքին յառաջագոյն քան զնոսա եւ մեծաւ յաղթանակութեամբ տիրեալ նոյնոյ քաղաքին եւ զեամախսն ամենեսեան կոտորեալ, սպաննեալ, ցրուեալ եւ ի սուր սուսերի մաշեալ տիրապետեցին /107ա/ եւ զիւրեանց բայէսն, որքան եկն ի ձեռս իւրեանց այլազգեաց, ըմբռնեալ բերին ի քաղաքս իբր զՄոսկովացի գերի վաճառեցին, զարսն սպաննելով եւ զկանայսն եւ զաղջկունսն եւ զփոքրահասակ մանկունսն նոցա: Ի յէտրենէէ ցանգր եղեալ գիւղից ամենեցունց ըմբռնեցին եւ սպաննեցին եւ իբրեւ զգերի վաճառեցին, յորոց ելանէր ի վերայէն զթուղթս խարաճի եւ ոչ ոք էր որ լսէր նոցա եւ իրաւունս դատաստանաց առնէր: Թողում զանլսելի գործսն նոցա վավաշոտական եւ պղծասիրական արարսն, զկանայս եւ զաղջկունս քրիստոնէից եւ զվայելչադէմ մանկունսն ապականեալ, գարշելի գործակցութեամբ միմեանց զզուեցուցանել զամենեսեան եւ այս վասն մերոցս մեղաց: Եւ ոչ եւ եթ քրիստոնէից առնէին զայս գործ, այլ եւ ազգակցաց իւրեանց եւս. որոյ տունն կերակրէին եւ զաչս իւրեանց յընտանիսն ձգեալ կատարէին զչար կամսն իւրեանց: /107բ/ Եւ որքան անիրաւական առնէին գործս, այնքան վատաբաղդ /37ա/ լուր յիւրեանց կողմանէ լսելի լինիւր պատերազմի եւ զորս ասացից, զկոտորելոցն այսոցիկ անթուից եւ զփախչիլն սոցա յերեսաց նոցա եւ զգերիլսն սոցա եւ անհաշիւ սոցա առաքեալ նոցա ի բնակեալ քաղաքսն իւրեանց, զհասարակս, զօտապաշիս, զպայրախտարս եւ զչօրպաշիս եւ զայլ մեծամեծ մարդիկս որոց ոչ գոյ թիւ. թողում ասել զփաշայից եւ զթաթարխանից գերիլսն եւ ըմբռնիլսն ի նոցանէ:

Բայց զի՞նչ ասացից ի Սպիտակ ծովու կղզեացն եւ կասկածիցն որ եկեալ նաւիւ բազմաւ նոցա, զնաւսն սոցա մեծամեծս արքունականս այրեցին, տոչորեցին եւ ոչնչացուցին, ոչ մի անգամ այլ քանիցս եւ այլոց թիկնապահ կրօնակցաց սոցա նաւսն եւս անհետ առնէին եւ այրեալ փախուցանէին եւ զոմանս ըմբռնեալ գերեցուցանէին:

/108ա/ Եւս եւ ի կողմանէ Սեաւ ծովու եղեւ կասկած ի ՌՄի [1771] մերս թուում եւ ի յուլիս ամսոյ, նաւից բազմաց քրիստոնէից այնոցիկ որք ունին այժմ պատերազմ ընդ սոսա: Եւ ի նեղուցն սոյն ծովուս սկսան ուղարկել զօրս բազումս որք պաշտպանեսցեն եւ զերկու եղերսն սոյն նեղուցիս շինել սկսան զիալէս բազմածախս եւ հաստատս առ ի դէմ ունել նոքօք եկեալ նաւացն թշնամեաց իւրեանց եւ այլովք պատրաստութեամբք զինուորեցան եւ մեծաւ նեղութեամբք պատրաստին եւ երկիւղիւն այնու շուրջպատեալ կան եւ մնան մեծի վնասու ամենեւին հատեալ ակնկալութեամբ:

Եւ ի սոյն ամում, որ էր ՌՌՀՕ յամսեանն սեպտեմբերի ԺԳ [13]. եւ բէճէպի 16. յաւուր Եշաբաթի երեկոյին ժամ իբրեւ երկու այրեցաւ զգուռն Աղայի համանգամայն եւ բէճէպի 22 լուաք սուուգապէս զօրաւոյի սոցա կոխիլն որ ի Պապատադն եւ ի սուր սու/108բ/սերի մաշիլն սոցա ընդ սրով թշնամեաց իւրոց: Եւ այսպիսեօք նեղութեամբք պաշարեալք եւ բարերարացն իւրեանց փոխարէնն չար հատուցեալք, որպէս եւ բարք սոցա է, յաւուրն ուրբաթու բէպի-ուլ էվվէլ ամսոյ ՌՌՀԶ ամին եւ ՌՄԻԱ [1772] յունիսի ամսոյ 1. նոյն աւուր գիշերոջն կոխեցին զցորենաբեր նաւն Ֆռանսզի ոմանք սրիկայ եէնիչէրիք առաջի Ունխաբանի ի մերկացուցանել զնոսա. բայց իմացեալ նոցա՝ եկեալ ի քնոյ՝ ըմբռնեալ արս ի սոցանէ զերիս. եւս եւ զերիս արս սպաննեալ ի սոցանէ եւ այլքն փախուցեալք զերծան եւ կենդանի ըմբռնեցեալքն կարծեմ թէ պատժեցին սպանութեամբ:

Քանզի ազգս այս այնքան լցեալք են կուրութեամբ, մինչ զի ի մէջ այսպիսի նեղութեան գոլով, զհոգեպահ կերլի բերօղ քրիստոնէիցն

18 Իմա՛ Կամենից կամ Каменец-Подольский:

գժգմնին եւ մեծաւ գժուարութեամբ տանին, զի լաւ համարին ի կողմանէ կերակրոյ եւս նեղիլ, քան թէ զնոսա տեսանել ի բարերարել իւրեանց: Քանզի եթէ նոքա ո՛չ էին /109ա/ օգնեալ բերելով ի քաղաքս զոր ինչ պէտքն է, մինչեւ ցայժմ մեռեալ էր քաղաքն անսուաղութեամբ: Զի զնեղուցն Սպիտակ ծովու այնպէս կալեալ էին թշնամիքն սոցա, որ բաց ի քրիստոնէից նաւուց, այլ նաւք ո՛չ կարէին երթեւեկութիւնս առնել:

Եւ ի սոյն ամսոյ ելին գեսպանն Պռանտապուրքի եւ զգեսպանն Նեմցէի հանդերձ Եէնի Շէհիրլի Օսման էֆենտիի եւ գնացին յօտուն եւ բազում խնդութիւն եղեւ քաղաքին վասն հաշտութեան եւ իսկ վասն հաշտութեան ուղեւորեցան: Բայց չեղեւ հնար հաշտութեան ամենեւին եւ զրկեցաւ քաղաքն յայնմ յուսոյ եւս եւ օր ըստ օրէ վատալուր եւ բօթ այսոցիկ կողմանց եղեալ գոլն լսելի լինէր: Եւ Միհնիսն օղլուն որ էր այժմ վեզիր ի յօտուն բազմաւ իմաստութեամբ զպատերազմական գործն կառավարէր. որոյ սակս բազում անգամ լուաք փարատիլն յիս/109բ/բոցն զօրաց, բայց ասուածով սուտ եւ մինչեւ ցայժմ: Եւ ի զօրացն սոցա բազումք փախուցեալք յետս դառնային եւ երթային ի բնակութիւնս իւրեանց պատճառելով անթօշակ եւ թարց ռօճկի գոլով ո՛չ կարեմք դէմ ունել մերոցն թշնամեացն եւ ի փախուցելոցն այնոցիկ յորժամ ի քաղաքս անկանէին կուրաբար, ըմբռնեալ լինէին ի սոցանէ եւ սպանեալ վասն գոլոյ իւրեանց փախստեայ յօտուից: Որպէս եւ իսկ տեսաք պօղուղցի զօրք փախուցեալք ի պատերազմէ ի Քեհատխանէն եւ ի Ղարաղաշն: Եւ յետ քանի մի աւուր ժողովեալ ի կալանս պօստանճու պաշուն յամսեանն օգոստոսի վերոգրեալ ամի, եւ աքսորեալ ի Լիմեայ կղզին եւ անդ սքիս պօղաղ արարին, որոց կապուտն ի Խրրխազաճի լեառն մեք եւս տեսաք, որք ի փախչիլն իւրեանց խղճաբար թողեալ զինչս իւրեանց /110ա/ ազատեալք էին:

Եւ ի յամսեանն հոկտեմբերի եւ բէճէպ լուսնի 1 մեռաւ որդի այժմու թագաւորին ի ժանտախտէ Մուհամմէտ անուամբ, որոյ մեծ եղբօր անունն է Սէլիմ եւ է կենդանի: Եւ ի յայսպիսի միջի եղեալ վասնզի, բազում լուրք կերպ կերպ եւ երկիւղալի բօթ ի կողմանէ սոյն քաղաքիս լսելի լինէր եւ զոգումն պատճառէր անձանց մերոց վասն գոլոյ ազգիս այսորիկ անգութ ամենեւին ի վերայ բայէից իւրոց:

Զի ի [յ]այսմ միջոցիս երկիւղալոյ լուաք թէ՝ ի Լեհաստան, թուրթ իմն եկեալ հայոցս ազգի եւ ի միջի գրեալ էր, թէ յայսմ ամի որ է ՌՄԻԲ [1773] եւ ԺԱՎ երեւին միաբանեալք չքնաղն եգիպտական, հաւատարիմն կոչման, սենացին մարի հակ: Եւ վասն այն եւ զուք շարժիլ մարթասջիք: Որոյ լուրն էհաս առ մեզ յամսեանն յունիսի եւ ի բէպի-ուլ ախրի. 14: Որ զբանս զայս ոմանք կերպ կերպ մեկնէին եւ /110բ/ երկիւղիւ լցուցանէին զսիրտս մեր: Եւ այժմ ամենեւին ի միոյ կողմանէ եւս ո՛չ գոլոյ հանդարտութիւն տագնապիմք եւ նեղիմք. թէ լսելով արտաքուստ գերութիւնն քրիստոնէից եւ կոխան լինիլն քաղաքաց, գիւղից եւ այլոց նահանգաց բազմաց ի պատճառէ այսմիկ պատերազմի եւ բնակելոցն ի նոսա քրիստոնեայ անձանց ոգւոց հանելն: Եւ կամ թէ ասա ի քաղաքս ի ձեռաց ոլոքամերկ անզգամացն արարմանց եւ սրիկայ անձանց անզթից, որքա՞ն նեղութիւնս եւ անձկութիւնս բազումս եւ ամեն/38ա/եւին զրաբար եւ ոչինչ պատճառաւ մեռանիլն եւ զրկեցեալ գոլն մեր անխիղճ զրպարտութեամբքն նոցա, ո՛չ կարեմ գրով արկանել, զոր Տէր գթասցի եւ ինքն բժշկեսցէ զվիրաւորեալս ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ. ամէն:

Որ եւ ի յայսմ ամի, ամսեանն յունվարի Ժ [10] եւ զիլքատէի 9 յաւուրն ուրբաթու ժամ 6. մեռաւ սուլթան Մուստաֆայն թագաւորելով տասն եւ վեց տա/111ա/րի ութն ամիս քսան եւ երեք օր իբր: Եւ նոյն օրն իսկոյն առանց շշնջանաց իմիք նստուցին յաթոռն թագաւորական զսուլթան Յամիթ կոչեցեալսն՝ որ է եղբայր մեռանողին, որ եւ բաց ի սմանէ ոչ գոյ թագաւորացու ի ներքս եւ զորդի մեռանողին եդին ի տեղի թագաւորացուաց. որոյ անունն է Սէլիմ եւ անթլպատ: Զի ո՛չ կարաց թլպատել զնա հայրն իւր եւ է ամաց երկոտասանից եւ հինգ ամսոց եւ աւուրց ընդ[illegible], յորժամ հայրն իւր սուլթան Մուստաֆայն մեռաւ եւ սուլթան Ապտիլ Յամիթն նստաւ յաթոռ թագաւորութեանն եղբօր իւրոյ:

Եւ ի սոյն ամի ԺԱՎ սէնէի նոցա եւ զիլքատէի 15. որ եւ էր թիւն մեր ՌՄԻԳ [1774] յամսեանն յունվարի ԺԶ [16], յաւուր Եշաբաթի, Գ.

օր զկնի ութօրէից ծննդեան Քրիստոսի, մեծաւ հանդիսիւ եւ յոգնախումբ ժողովիւք մարդկանց եւ յոլով բիճալից եւ կարդացողացն իւրեանց բազ/111բ/մութեամբքն, որք եւ կարդ առ կարդ ընթանային յառաջոյ քան զթագաւորն, հանդերձ բազմաց Ջավուշից հասարակաց եւ տիվան Ջավուշից եւ պալթաճիից. եւ պոստանճի պառաթայա զգենլոց ի գլուխս եւ երկրորդիւ թագաւորին խայմախամ վեզիրին: Որ եւ ի գլուխն գոյր խալլէվի կոչեցեալ միթր եւ այլովք յոգնախուռն պաշտօնէիւք եւ զկնի սոցա նորանիստ արքայն զկոչեցեալն Ապտիլ Յամիթ թագաւորն եւ զկնի սորա զիլիֆտարն իւր ունելով յուսն իւր զթուրն թագաւորական, որ զկնի սակաւ ժամանակի ի մզկիթն էյուպն կապելոց էր զմէջն իւր թագաւորն: Եւ զկնի սորա խզլար աղասի կոչեցեալ տգեղամարմին եւ սեւատեսիլ այրն ամենատգեղ եւ յետ այսորիկ այլք սորա նմանք եւ աք աղայք եւ ձիովք թմբկահարիչք եւ փողահնչողք եւ քեօղ չալողք մեծամեծ ըղտիւք եւ սփոՕղն փողից զհետ սոցա եւ այլովք մանրամասնից /112ա/ եւ տէօքիւնտիւ խոռանտայիւք, որ եւ գնաց ի մզկիթն նոյն էյիպի եւ ի վերայ գոռելի էյուպի էնսարիի, կապելոյ սակս զթագաւորականն թուր, որպէս օրէն եւ կարգ է ի Ֆէթիհ Մուհամմէտէն զթուրն անդ կապելն զմէջն իւր: Եւ ի տեսանելն մեր զսոսա. վերջապէս ի դառնալն զհետ նաւիւք եւ ինքն ի զանճապաշն նստեալ էանց գնաց ի պալատն իւր եւ զնաւքն պազիրկեան քրիստոնէիցն ամենից պայրախիւք կարմրովք զարդարեալ կային ի մէջ ծովու եւ թօփիւք բազմօք ամենքն զուրախութիւնս եւ զհանդէսս յոգունս ցուցին արքային դեռանստի:

Քանզի դեսպանացն լատինացւոց զկնի զբօսանացն տեսութեան ի ցամաքի՝ իսկոյն իջեալ անտի իւրաքանչիւրքն ի նոցանէ գնացեալ ի նաւս իւրեանց՝ որք կանգ/38բ/նեալք էին յայնժամ ի ծովու: Եւ նստեալ ի խալեօնն զհետ կանանցն իւրեանց եւ ընդ բա/112բ/րեկամացն եւ պարապեալք ի խրախճութիւնս կերլեաց եւ ընպելեաց: Եւ յորժամ դարձաւ թագաւորն ի էյուպէ նաւիւ եւ ի յանցանելն յառաջոյ խալեօնիցն այնոցիկ՝ յորս ուրախանային դեսպանքն բաժակ ի ձեռս իւրեանց հնչեցուցանել տային զթօփս նաւիցն այնոցիկ եւ խրախճանային յուրախութիւնս իւրեանց եւ ըմպէին զգինին ընդ ահեացն եւ ընդ որդւոց եւ ընտանեացն. եւ այնպէս այնքան բազմութիւնքն նաւիցն այնոցիկ մինչեւ ցերեկոյ ժամ իբրեւ երկոտասան թօփիւք եւ հնչեցուցմամբքն նոցա պատիւ նորանիստ արքային մատուցին:

Թէպէտ ընդ չուելն դեսպանացն ի յերեկոյն՝ ի նաւիցն այնոցիկ իբրեւ բարի լիցի երթալն ձեր սակս հնչեցուցանէին զթօփսն. բայց եւս առ նորանիստ արքայն վերաբերելն զայնոսիկ հանդիսութիւնսն եւս ո՛չ վրիպիմք: Քանզի վասն այնորիկ եղեւ այն ուրախական խրախճանն. եւ դարձումն նոցա անտի այնքան զուարճական հան/113ա/դիսութեամբ եւ հրացանահարութեամբ:

Եւ զայս ե՛ւս գիտելի է՝ զի յորժամ նստաւ սա յաթոռ թագաւորական, էր ամաց իբրեւ յիսնից. զի յորժամ սուլթան Ահմէտ թագաւորն հայր սորա էջ ի յաթոռէն. եղեալ է սա իբր վեց տարեկան՝ որ ի յարգելարանն եդեալ են եւ անդ՝ թլպատեալ: Բայց այժմ, որպէս յառաջ ասացաք, նստաւ սա ի գահն թագաւորական, ամենեւին ո՛չ հաւանեալ մեռանողի արարմանցն եւ պարսաւեալ ժլատութիւն նորա եւ զրկողական գործոցն նորա գժգոհեալ, սկսաւ ինքն սիրել եւ բազմաց շնորհս ոսկեաց տալով խնդացուցանէր եւ զամենայն նորահնար իրսն Մուստաֆայի անհետ առնել երեւեցուցանէր: Զոր նա ամենայնից կերլեաց եւ ցորեան բերողաց հասս առ ինքն կապեալ էր եւ բազում դրամս ժողովելոյ ի զանազան իրաց հնարեալ էր. ի բրընձից, ի յիւղից, ձիթոց եւ այլոց. եւ կարծի թէ յամենայնից իսկ: Զի եւ ի Պէշիկթաշու պալատն թագաւորական արարեալ էր շտեմարան բրնձից՝ զոր վաճառէր պազիրկեանցդէն զի շա/113բ/հեսցի: Եւ նախատանցելոց թագաւորաց զապեալ դրամսն ժողովեալ, տայր նորապէս ձուլել եւ զդրամս նոցա կարճեցուցեալ, զինքեան դրամոյ տիպն տպել տայր. որ բազում ինչս ինքեան շահելոյ գործեալ հնարս եւ զէրմահպուպ ոսկեաց զգինսն առաւելացուցանեալ զհարիւր տասնական յոսկիսն՝ երեքական զուրուշ անցանել հրամայեաց եւ զֆնտքիս ոսկիսն չորսական զուրուշ արար, զոր յառաջ հինգ փարայ պակաս էր: Եւ զայլ այսպիսի նորահնարական շահս օրըստօրէ ստեղծանէր: Եւ մանաւանդապէս ի Ֆէթիհէ հետէ զկոստանդանիէ ա-

նունն ի վերայ տպեալ գրամոցն սոցա՝ վերացուցեալ, ի տեղի նորա Իսլամպոլ տպել հնարեաց, զի կորնչիցի զայն գեղեցիկ անունն եւ իւրեանցն [յ]այնմհետէ իմացի բազմութիւնս տաճկաց (զոր սա նորանիստ արքայն Յամիթ ընդ բարձրանալն ի յաթոռ իսկոյն Իսլամպոլն ի Կոստանդանիէ փոխարկել տայր որպէս յառաջն ասելով թէ՝ որպէս յառաջն զոյր ե՛ւս լիցի եւ եղեւ): եւ զին/114ա/չախտան ամենայն ոք շինեալ վաճառէին եւ կամ ինքեանք ի պէտս իւրեանց կիր առնուին, եւ կամ ի յերկրէն զայր քրիստոնէից եւ վաճառեցեալ լինէր ասա: Որ սա ի յիւսկիւտար քերթանայ շինեալ, անդ շինել եւ արքունական միրի արար եւ արգելեաց զշինելն ասա հասարակաց եւ զգալն, պատժօք երկեցուցեալ զշինօղսն եւ զբերօղսն. ամ յամէ գանձս բազումս գալ յօրինեաց անտի, նմա մաքսի որ մինչեւ տարին ... կէլիւր եւ հաս հնարաւորեաց անտի, եւ նոյն հասն առ նոր շինեալ մզկիթն իւր կապեաց ի յիւսկիւտար: եւ այլ զինչ երկարեցից զգործոցն թագաւորիս այսորիկ Մուստաֆայի, զի խրատիւք առն ուրումն չարի Դահեր ազայ կոչեցելոյ զամենայն պիտոյիցն քաղաքիս զհասս ի նոցունց առ ինքն գրաւեաց: եւ ի Լանկայի եէնի խարուն լծովն լցեալ ցամաքեցոյց բազում ծախիւք եւ աշխատութեամբք: եւ իբրեւ ցամաք զպինայս տանց շինեալ վաճառեաց մերոյս ազ/114բ/գի. խաբելով թէ՝ եկեղեցի եւս շինել տացից ձեզ: եւ զտեղի եկեղեցւոյն ետ յատկացուցանել, որ մինչեւ ցայժմ կայ տեղին, որ յուսովն այնու բազումք ի մէջ քաղաքի զտունս իւրեանց թողեալ եւ վաճառեալ, անդ զտունս իւրեանց սեպհականեցին: եւ յորժամ ո՛չ յաջողեցաւ խոստումն այն՝ գագարեցան յայնմ սիրոյ, զի բազումս այժմ տեղի ամայի գոյ անդ, զոր իբրեւ անտառ խոտաճարակին եղինք հացագործաց եւ ապրխտաշինից:

Եւս անդ շինեալ տունքն՝ մանաւանդ առ եզերբ ծովու կերտեալքն զբազումս կրեն նեղութիւնս՝ ի նոստս քամւոյ զջուրց յարուցմունս եւ զբաղխմունս տանց եւ զբայքայմունս ի պատճառէ ջուրցն ծովու հարկանելոյ եւ ազգս մեր ուրախանայր վասն հայոց միայն զայս բարերարութիւնս առնելոյ: եւ մերոյս ազգի եւ եթ բնակութեան տեղի յատկացուցանելոյ, որ մինչեւ ցայժմ զեռեղօղքն անդ յոգունս կ/115ա/բեն զնեղութիւնս ի վերոգրեալ պատճառէ, որ եւ այժմ ամենքն կարծեմ ստրջացեալք են. իսկ սակս զբնակութիւն անդ ստանալոյ իւրեանց: եւ զվախճֆներաց կէլիւրան կարճացուցեալ առ ինքն կապեաց աղբիւրանայ: եւ զայլ ազգի ազգի կերպս վաստակոց գտեալ հնարագէտս այս՝ օրրատօրէ առատանայր շահիւք. եւ զամենայն քաղաքն տեղի մեծագոյն վաստակի արարեալ զգանձս կուտեալ հարստանայր. վասն որոյ բարձրամտեալ բազմութեամբքն գանձուց եւ ընչից կուտեցմամբքն, զպատերազմականն պատրաստեցաւ մղել զգործս եւ զտեղի թագաւորութեանն լայնեցուցանել կամելով եւ անուն քաջութեան ստանալ յուսալով. ամենայնից զրկեցաւ յուսոցն եւ աղքատացաւ իսկ քաղաքօք եւ այլովք որպէս յառաջն գրեցաք եւ այնպիսի յուսոյ զրկեցմամբ՝ մեռաւ խղճութեամբ:

Քանզի ժլատ այրս այս զկարգաւորեալ շռայլական գործս թագաւորաց պատկանեցեալս եւս արհամարհեալ ամենեւին զձեռս իւր ամփոփեալ, /115բ/ զիւրոյ թագաւորութեան զրիճալից բնութիւնս հանգոյն զիւրեանն նմանեցոյց ժլատութեամբ: Զոր իբրեւ ապառաժս գարձոյց զքաղաքն եւ անպտուղ առ աղքատս եւ անյաջողութեամբ պատեաց զբնակեցեալսն ասա: Եւ զոգւոց հանումն այրեաց եւ աղքատաց ո՛չ կարեմ ընդ գրով արկանել եւ զշշունչն հասարակաց ամենեւին պատմել: Որ առ ոչինչ համարեալ զգանկատն հասարակաց զհաճոյսն իւր յառաջացուցանէր միշտ. մինչ զի զիւրոյ պալատաբնակսն եւս աղքատութեամբ կաշկանդելոյ լեալ առիթ տագնապէին համայնքն. եւ զհանդերձս իւրեանց վաճառեալ զկարեացն իւրեանց զպիտոյս հոգային, թո՛ղ թէ զվայելչականն վայելել զբարիս: Զի ինքն իսկ հանեալ զվայելչական իրսն ի պալատէն վաճառէր եւ զգինս նոցին ժողովէր ի գանձարանս եւ զմեռեալ բիճալից զապրանս իւրացուցեալ զէղեայս նոցա ի պալատն իւր բերեալ, անդ մէգաթիւ վաճառէր եւ զգին նոցին ամբարէր եւ զրկէր զմէրասխորս մեռելոցն /116ա/ այնոցիկ: եւ այլ եւս զինչ ասացից. զի չէ՛ բաւական վասն պատմելոյ ի տեսարիկս զայս զգործոցն զրկողականաց առնս այսորիկ ագա-

հի: Զի ոչ մնաց ամենեւին իր իմն, յորմէ զվաստակ եւ զկէլիւր առ ինքն ոչ հեղեղօրէն հոսեցոյց: Եւ ի ապստամբական արարմանց զօրացն իւրոց չգանգիտեալ զթօշակս նոցունց հատեալ ո՛չ տայր ասելով՝ թէ այսքան ետու եւ զպատերազմական գործն իմ ո՛չ յառաջացուցիք. զինչ եւս տացից այսուհետեւ ձեզ ոՀՃիկս, որք ըստ ամենայնի անզօրք եղէք ընդդէմ իմոյս թշնամւոյ:

Որ եւ այսպիսի խստութեամբ ըմբռնեալ զզօրս իւր, նոքա ամենեւին չկարէին իր իմն առնել թագաւորիս այսորիկ, զի զգուշութեամբ կառավարէր եւ հնարական գիտութեամբ ընկճեալ ունէր զնոսա: Զի ո՛չ կարէին մտաբերել ամենեւին զապստամբութիւն ինչ, քանզի պարաւանդեալ էր զնոսա յամենից կողմանց:

Իսկ յորժամ մեռաւ սա եւ տեղակալեաց զԱպտիլ Ցամիթն, իբր թէ նսեմօրէն լոյս ծագեցաւ բայէից /116բ/ եւ փառք ժողովրդեանն իւրում մահմէտականի:

/117ա/ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՈՐ Ի ՂԱԼԱԹԻԱՅ[19]

Շնորհիւ եւ ողորմութեամբ Աստուծոյ յայսմ ամի որ էր թուականն հայոց ՌՄԽԸ [1799] սեպտեմբերի ԺԲ [12], յաւուր Բշաբաթի՝ եղեւ սկիզբն հիմնարկութեան տաճարին կառուցեալ յանուն սուրբ Լուսաւորչին մերոյ որ ի Ղալաղիա, զկնի այրեցմանէն 28 ամաց, 7 ամսոց եւ 11 աւուրց:

Բայց այսու օրինակաւ. քանզի յորմէհէտ այրեցաւ տաճարս այս, բազմիցս մատուցաւ նամակ աղերսանաց թագաւորաց երից այսինքն սուլթան Մուստէֆային, որոյ յաւուրս այրեցաւ, սուլթան Համիտին եւ սուլթան Սէլիմին: Բայց չեզեւ հնար առնուլ հրաման շինութեան եւ նորոգութեան խանգարեալ աւերակաց եկեղեցւոյս այսորիկ (որոյ տեսութիւնն միայն արտասուալից հառաչանօք լինէր, թող թէ բնակ ժողովրդեանն յամարան արեւակէզ եւ ի ձմերան ցրտասառոյց եղելութիւնն ի բացօդեայ յաւերական արանց եւ կանանց): Եւ այսմ ամենայն լինէր յազգս /117բ/ անմիաբանութեան եւ երկպառակութեանն ժողովրդոց եւ մանաւանդ իշխանաց տեղւոյն՝ որք զգանձս տաճարին յափշտակեալ իւրացուցանէին: Եւ ուստի ո՛չ կամէին լռելեայն շինութիւն նորին, զի մի՛ սեփականեալ դրամքն պահանջիցին ի նոցանէ բռնութեամբ: Եւ իբրեւ իրս այս այսպէս անցանէր ի բազում ամս, ապա ի յոգիս ապաստան եղեալ յարեան ի վերայ նոցա խումբք ռամկաց արիկայից եւ ոլոգամերկից, որոց բազմութիւնք այնք էին, որք պաշտօնէից արքայական պալատանն սինլիքոր նաւուց թիավարացն էին: Մանաւանդ զի տեսանէին զազգս յունաց գուն գործեալ հեղգհէտ նորոգեն զեկեղեցիս իւրեանց: Ի նախանձ բարի շարժեալ՝ բոլոք բարձեալ զիմեցին առ հասարակ արք եւ կանայք յեպիսկոպոսարանն Հայոց՝ առ ոտս Դանիէլի Պատրիարքին[20]: Աղաղակէին խնդրելով զիրաւունս եւ ասեն. իշխանսն մեր /118ա/ գողացեալ զինչս եկեղեցւոյն մերոյ, այժմ զօրեալ թագուցեան կան, եւ ո՛չ կամին միաբան հաւանութեամբ փոյթ ունել եկեղեցեացս շինութեան: Եւ արդ զա՛ս արա ընդ մեզ եւ ընդ նոսա, ապա թէ ո՛չ վախճան իրին դառնութեամբ վճարի: Եւ նորա ունկնդիր եղեալ բանից նոցա՝ քաղցրութեամբ եւ քաջալերս տուեալ մխիթարեաց ամոքական եւ յորդոր բանիւք գնալ իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց խաղաղութեամբ, ասելով՝ ահա ես եկից զկնի ձեր եւ ընդ բարեխորհ արանց զելս իրացն խորհել մարթասցուք եւ վաղվաղակի ել ի

19 Կ. Պոլսի թաղամասերից Ղալաթիոյ (ԺԸ. դարում հիմնականում քրիստոնէաբնակ (յոյներ, հայեր, եւրոպացիներ), մահմեդականների եւ հրեաների առկայութեամբ) Ս. Լուսաւորիչ Հայոց եկեղեցին հիմնուած 1436-ին, հրդեհի ճարակ դարձաւ 1731-ին, ապա վերականգնուեց «վայելուչ քան զառաջինի ձեռն անուանի Սարգիս Խալֆային» 1733 թուականին (տե՛ս Հ. Ղուկաս Ինճիճեան. *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամերիկոյ*, Մասն երկրորդ, Եւրոպա, հտ. Ե, Վենետիկ-Ս.Ղազար, 1804, էջ 180-183: Եկեղեցու վերաշինութեան մասին (ինչպէս այս, այնպէս էլ 1771 հրդեհի եւ ապա 1799, 1834 եւ 1888 թթ. թ. վերաշինութիւնների մասին) տե՛ս Վահրամ Թորգոմեանի հիմնարար ուսումնասիրութիւնը՝ **Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան**. *Ստամպօլոյ պատմութիւն*, հրատարակեց եւ ծանօթագրեց Վահրամ Յ. Թորգոմեան, հտ. Բ, Վիեննա, 1932 (Ազգային մատենադարան, ճԼ), էջ 477-500):

20 Իմա՛ Դանիէլ Սուրմառեցի:

նաև գնալ ի Զալաթիա: Եւ յայն ինչ եհաս հրամանն արքայի աւետաւոր՝ յաղագս շինման տաճարին: Եւ ի վաղիւն՝ որ էր օր միաշաբաթի առաքեցաւ իշխանն հիւսանց ճարտարաց, որ ասի մէյմար ազա, որում անունն Արիֆ ազա ճանաչիւր, ընդ որում էր եւ ճարտարապետ ամն քաղաքացի, Մի/118բ/նաս անուն կոչեցեալ, առ ի գնել զվայրն որպէս սովոր են՝ առ որ յանձնեցաւ շինութիւն տաճարիս ըստ հաճոյից կամաց իւրեանց եւ ի վաղիւն հրաման եւ բրել զհիմունս նորա: Եւ նախ առաջին Դանիէլ եպիսկոպոսն քաղաքիս առեալ ի ձեռս օրհնութեամբ զբրիչ գործի եւ եհար նովաւ զչորս կողմունս աւերակին՝ առ ի բարեյաջողութիւն առաջիկայ գործոյն յԱստուած յուսացեալ: Եւ յետ ումն շաբաթուց յանկ ելեալ իբր աւարտելոյ ձեռն տուեալ շինութիւն տաճարիս, շքեղ եւ փառաւոր, հոյակապ եւ զարմանալի կամարաձեւ յօրինեալ կրաման սպիտակ եւ պայծառ ըստ ամենայնի գեղեցիկ, իբրեւ զհիացումն կարգեալ տեսողաց:

Եւ յաւուր երեքտասաներորդի նոյեմբեր ամսոյն շոգաւ Պատրիարք քաղաքիս Դանիէլ Վարդապետ եւ մեծահանդէս տօնախմբութեամբ կատարեաց գնաւակատիս /119ա/ օրհնութեան օծման նորակերտ տաճարիս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ կենդանի նահատակին իւրոյ սրբոյն Գրիգորի, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն[21]:

* * *

/123ա/ Յամի Տեառն 1769 եւ հայոց ՌՄԸ, փետրվարի ԺԳ [13]. ճեմազիւել ահռ լուսնի ՀՎ յաւուր շաբաթու սրբոյն Խաչակայ Պարթեւի, եղեւ ձեռնադրութիւն քահանայական ի սուրբ եկեղեցին Հրեշտակապետաց ի Պալատ եւ էր եպիսկոպոսն արեւելցի Յոհաննէս Վարդապետն խրոխտաձայն եւ ոխորտաբարբառ: Եւ ձեռնադրեալքն էին այսոքիկ. Տէր Ռափայէլ պիւքիւճիւթէնէ, Տէր Անտոն ի դերձակութենէ եւ Տէր Յոհաննէս ումն անծանօթ մեզ գոնովացի՝ որ եւ գնաց անդ եւ էր առաջին անունն Գալուստ: Եւս երեք սարկաւագ, տիրացու Մկրտիչ խապզէճի օղլու եւ խաբամաճի, տիրացու Յակոբ Լազի թոռ եւ ոսկերիչ եւ լուսարար եկեղեցւոյն, տիրացու Յովսէփ սակաւակուլ եւ ոսկերիչ: Նաեւ քանն հինգ դպիր եւ նոցունց տասն էին հրահանգեցեալք ի մանկատան սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի:

Նախ Սարգիս Յոհաննէսեան, որ եմ իսկ ծառայ ի մանկատան հայրապետին Մծբնացւոյ եւ Մանասէ պատկերահան Ռափայէլի, Ալիքսան Աճէմ, Մխիթար Սառաֆի, Յոհաննէս Ղազէզ Ղազարի, Պօղոս /123բ/ դերձակ Տօնիկի, խաչատուր սարաֆ Զաքարի, Կարապետ աւագերէց Տէր Վարդանի, Թագաւոր խազանճի մահտեսի Աւետիքի, Աբիսղօմ քէրէստէճի Իւսուֆի, Պետրոս հանգուցեալ խուլումճի տիրացու Սերոբի. այժմ հանգուցեալ մահտեսի դերձակ Մեծատուրի:

[Յամի] 1769. Հայոց ՌՄԺԸ, մարտի ԻԹ [29]. յաւուր դատաւորի կիւրակէի առաւօտ եղեւ ձեռնադրութիւն եօթն քահանայից, որոց չորս էր մեր եկեղեցւոյն. Տէր Գէորգ աթոռակալի փեսայ, Տէր խաչատուր խաբամաճի ազգական Տէր Կարապետին, Տէր Սահակ քէրէստէճի մահտեսի Յարութեան, որոյ առաջին անունն էր Զօրայ եւ Տէր Աւետիք բասուճճի՝ պաճանախ մահտեսի Գաբրիէլի մշկածախի: Երկուքն խասգիւղցի եւ մինն՝ զալաթիացի. Տէր Թոմայ կոչեցեալ վկայութեամբ տեառն Յոհանու եւ երկու սարկաւագ տիրացու Կիրակոս Սէմէրճի եւ միւսն խասգեղցի. եւ երեսուն եւ մէկ դպիր, որոյ բազումք էին մեր մօտն հրահանգեալ ի մանկատան սրբոյն Յակոբայ եւ ձեռնադրօղն էր Սարգիս եպիսկոպոսն լուսարար սուրբ Կարապետու:

/124ա/ [Յամի] 1771. հայոց ՌՄԻ. յամսեանն յունիսի ԺԱ [11]. յաւուր գիւտի նշխարաց Լուսաւորչի մերոյ շաբաթու եղեւ ձեռնադրումն ի Հրեշտակապետ յեկեղեցւոջ, որ էր ձեռնադրօղ

21 Առանց աղբիւրի յիշատակութեան Սարգիս դպրի կողմից գրուած այս բաժնի հրատարակութիւնը տե՛ս Բաբգէն ծ. Վ. Կիւլէսէրեան, *Կոյոտ Յովհաննէս պատրիարք*, Վիեննա, 1904 (Ազգային մատենադարան ԽԶ), էջ 114-115: Ապա Երեմիա Քէօմիւրճեանի աշխատութիւնը ծանօթագրելիս վերահրատարակել է Սարգիս դպրի ձեռագրի սեփականատէր Վահրամ Թորգոմեանը (տե՛ս Հանդէս ամսօրեայ, 1928, էջ 367-368, ապա առանձին՝ Երեմիա Քիւմիւրճեան, *Ստամպօլոյ պատմութիւն*, հտ. Բ, էջ 495-497):

եպիսկոպոսն սիսցի Պօղոս Վարդապետ Տարսօնացի: Եւ քահանայացուքն էին չորս մեր եկեղեցւոյն. Տէր Կիրակոս Սէմէրճի ի սարկաւագէ, Տէր Կարապետ դեռ հանգուցեալ Տէր Կարապետի աթոռակալի, որ Դիօն էր անունն առաջին. Տէր Իգնատիոս Լօնճացի Կելինճիկեան եւ Տէր Յոհան տիրացու սարկաւագ խաչատուրի պաճանախ եւ երեք եւս՝ երկուքն՝ Լանկայու եւ մինն՝ Իսկիւտարու եւ երկու սարկաւագ վերոյիշեալ խաչատուրն խազէզ եւ Պետրոսն հանգուցեալ Տէր Պօղոսի եւ քսան եւ երեք դպիր:

[Յամի] ՌՄԹ [1760]. փետրվարի ԺԳ [13]. կոչումն եղեւ յերեկոյն, որ էր կիւրակէ եւ յԲշաբթի տօն Տեառն ընդ առաջին՝ արար Ձեռնադրութիւն Պետրոս եպիսկոպոսն Ծերունի՝ Լազի թոռն Տէր Յակոբ եղեւ ի սարակաւագութենէ, Տէր Յարութիւն Զիֆտիլի ի դպրութենէ, Տէր Յոհաննէս Ղազէզ, Տէր Փիլիպպոս դերձակ:

/125ա/ Ի թուին հայոց ՌՄԸ [1759]. մարտի Դ [4]. ՅԱՎԱՐ սէնէ սարակինացւոց ըէճէպ լուսնի 17. յաւուր հինգշաբաթի, ձայն բՀ. ժա.ում օրն աղուհացից արար սուլթան Մուստաֆայն զսօնանմայն առաջին եւ էր դուստր որոյ անունն էր ....: Եւ տասն օր տօնանմայ էառ ուրախութեամբ եւ ամենից էսնաֆից ալայ հրամայեաց առնել շՐՕՁԵՂ զարդուք եւ իսկոյն կատարեցաւ հրամանն: Եւ արարին ըստ ամենայնի զարդապաճոյճ տեսողաց եւ դեղեցիկ իմն հիանալի տեսարան ըստ մարմնոյ (խոհեմանկատն վասն այն հնարեաց զայս՝ զի իմանայցէ եւ տեսանիցէ զհարստութիւնս էսնաֆից՝ րիճալից եւ բայէից, որ եւ մագնիսանման քարշեաց իսկ ի նոցանէ զինչսն իւրեանց զոմանս ի կախաղանս բարձրացուցանելով եւ զոմանս այլ ինչ փառօք չփառաւորելով եւ զհաւատակից րիճալսն իւր եւս զրկելով ի կենաց. իրաւցոյց զստացուածս նոցա, պատրուակեցեալն չարեօք եւ նախանձախնդիրն ազահութեան):

Եւ եօթներորդում օրն զարդարանաց մեք գնացաք ի /125բ/ զրօսանս առնել. Սարգիս, վարժապետն իմ եւ տղայ մի անուն նորա Յոհաննէս Խորասանճի Մառուկի: Եւ պատահեցեալն մեզ այսոքիկ էին՝ կերպ կերպ զարմանալի ալայք էսնաֆից եւ հրճուալի մահեայք եւ այլք ծաղրաշարժ տեսարանք՝ յորոց զսակաւսն ասացից: Զի ի հօճայ փաշան կնտակից մեծաւորի խաղն ամենածաղր եւ փաշայի պալատն տեսաք մեծ Հէեալի Ֆէնէռքն ի դիվան խանայն նկարեցելովք. զայլայն աղային ի վերայ Ֆէնէռացն: Զարմանալի ստաշէն պարտէզքն անդ. եւ արտաքոյ պալատումն շինեալ ջաղարջն պտուտեցեալն առիւծիւ եւ ընձիւ եւ ի գլուխ նորին շինեալ ստաշէն մարդն, առաջի իւր ունելով զթմպուկ, առ որ հարկանէր ձեռօք եւ հնչեցուցանէր, եւն:

Նոր պալատի մօտն ձիոյ Ճամպազից արշաւանաց հանդէսն զարդարանօք: Ներ նոր պալատի ջրոյ ջաղացն եւ եղն հերկողաց հանդերձ բեռնեցեալ մեծագոյն յոյժ երկու բլիթով (եւ պապա հիւմայիւն սարային թագաւորական առաջին դրանէն մինչեւ ի միջին երեւեալ դուռնն, էր չորս հար/126ա/իւր քայլ՝ սակաւ ինչ առաւել կամ նուազ): Եւ եւս կենդանին այն սուռնաբիս կոչեցեալ, զոր եդեալ կայր ահեակ կողմն երկրորդ դրան, մեծ նման ըղտու խայտամորթ եւ երկայնավիզ, զոր կարծեցաք լինիլ անալութ կենդանին՝ որ եւ ընձուղտ վերակոչի: Եւ ի մօտ սորին կայր ուլ մի եօթնոտանի փամպակիւ լցեալ: Եւ հայելիքն երկու՝ եդեալ ի յերկուս կողմս դրան՝ Դեւ այնասը կոչեցեալ բոլորակ: Դրմբշխի հայելին եւ մեծագոյն հայելիքն գեղեցկատեսք: Ստակ կտրելու զրօսանքն, Ճեպխանայի քեօշքն եւ ջուրն Ճեպխանայի այազմային զոր իսկ ըմպեցաք եւ ասպարքն ներ նորին կախեալք առ որմովք Ճեպխանային: Եւ կոկորդիլոս Դիմսիհ պալըզին՝ լայն իբրեւ միոյ կանգնոյ եւ կիսոյ եւ երկայն իբրեւ չորից կանգնոց. եւս երկու կոկորդիլոս մօտ նորին, փոքր առ այն համեմատեալ: Եւ դուռն Դառապխանային զարդարեալ ոսկովք եւ արծաթովք եւ դրան սաչախբլիթի շուրջն ոսկւով զերմահպուպիւ չիթմէ շինեալ գեղեցիկ. եւ չորս կողմն դրան /126բ/ վատսուննոցիւ եւ զուռուշիւ եւ տասնոցիւ պատեալ, իբրեւ արծաթ դուռն լեալ յամենայնից կողմանց եւ ի ներքս եղեալ օտայքն եւ այլ տեղիքն զարդարեալ ոսկւով եւ արծաթիւ եւ շինեալ փիւսկիւլ յոսկեաց, եւ ի խարխաց վերայ եւ այլոց գերանաց եւ սնգլխից: Մանաւանդ ի դաւանից առաստաղից կախեալ եւ զարմանալի նկատողաց չքաւորաց լեալ եւ մա-

նաւանդ ռամկաց, որք ապուշ մնացեալք բերանաբաց դիտմամբ, լորձունահեղ եւ ատամնահացից շուարմամբ աքանչացեալք ասէին վա՛շ:

Եւ զկնի բազմաց Արօսանաց որ անդ եւ կամ ի ճանապարհին, ալայքն ամենայնից էսնաֆից, թէ քիւրքճոց թէ պէզէստէնցւոց եւ թէ այլոց, զորոց թէ խօսեսցի, կարծեմ մեծ իմն գիրք լինիլ քան զայսմաւուրք (եւ վասն այն՝ կարծեցեալ լինիմք յուսալ ունայնավիպի անուն ըստանալ, զոր այսքան եւս անշահ ամենեւին խոստովանիմ եւ թակարթ միամիտ արանց ի վարմս գիւաց սպրդմամբ անկեալ ելոյ առիթ տեսանեմ: Զորմէ գանկատելոց եմք յառաջիկայն, առ որ /127ա/ նկրտիմք գրել):

Տեսաք կրկին յետ գառնալն մեր արշաւանքն ձիօք ճամպազից ընդ ալայ քէօշկիւ, զի էր թագաւորն անդ եւ առին զպաղշիշն իւրեանց: Զկնի այնր նաւավարաց հանդէսն ընթեր գրանն բդեշխի՝ հանդերձ նաւիւ եւ բեռնեցեալ ցորենով եւ գարւով. եւ արք երկու գոյր ներ նաւին եւ բազում ազաղակաւ քարշէին գնան ի ցամաքի պարանիւ: Եւ էին արք բազումք քարշօղք զառասանին իրրեւ երկերիւր եւ այլ աւելի, եւ նաւն էր ի վերայ սալի՝ որ ունէր յառաջ կոյսն անիւս երկուս:

Յետ այնորիկ տեսաք հանդէսն հացագործաց հանդերձ իւրեանց պատշաճաւոր գործեօք եւ մսածախից նմանապէս: Յետոյ տեսաք Չուլհակաց հանդէսն ամենայն գործեօք իւրեանց ծաղերբ հանդերձ:

Զկնի այսց ամենայնից պատահեցաւ մեզ ամենասոգեղ տեսարան առնն այնորիկ չարի, զոր սուր իմն մեծ մխեալ էր ի ձախ բազուկն իւր, եւ ի նոյն ձեռին ունէր զասպար իմն, եւ գոյր կարծեօք այրն /127բ/ վատասուն ամաց եւ այլ աւելի: Եւ էր ալեխառն մօրուսիւ եւ ի մէջ ջրոյ անկեալ նմանիւր մկան՝ կախեալ ունելով զականջս իւր, կորացուցեալ զգլուխն իրրեւ զշան եւ ծունկք իւր թողթոչէին որպէս տերեւ ի հողմոյ եւ այլանդակեալ կերպարանիւ որպէս յարհաւրաց պակուցելոց: Եւ ոսքն յետս ընկրկիւր յառաջ քայլէն եւ կարծեմ թէ սիրտն եւս արեամբ էր ճապաղեցեալ որպէս զբազուկն իւր, եւ երթայր եւ ո՛չ գիտէր առ յո՞ կամ ո՞ւր դիմէր, զի շուարեալ էր բոլորովիմբ: Մանաւանդ զի չէր յաջողեալ զպախշիշն ըստ իւրումն կարծեաց, սակս անհաւան տեսարան ինքն լինելոյն այլոց: Եւ ի բաց գնալ ստիպմամբ արտաքսեալ էին՝ տհաճ ցուցանելով անճոռնի գործոյն:

Յետ որոյ տեսաք ազան այլակերպ ներ նոր մկկթի: Զկնի պատահեցաք ստաձեւ մունեսիկ թէլլային, որ վաճառէր զթահմիզի եղեալ խառնութեան խահվէճոց եւ այլոց վաճառականաց: Յետոյ տեսաք զկնի յոգունց իգական ստակերպ մահեայից՝ զառնակերպ իմն մահեայ /128ա/ նման ե[է]նիշերուց, գեղեցիկ զարդարեալ կայտ[ա]ռատեսիկ երիտասարդի, որ խաղացուցանէին:

Պատահեցաք եւս բեռնակրաց ալային, որք ուռեցուցեալք էին զգատարկ իւղոյ տիկսն եւ կապեալ ընդ միմեանս եւ առեալ ի վերայ թիկանց իւրեանց խաղացուցանելով ընթանային եւ ունէին ընդ իւրեանս թմբուկ եւ տիգար, եւ մեծաձայն ազաղակէին հա՛յ, հա՛յ, մաշալլա՛հ:

Բայց զի պատահեցեալ իրքն եւ այլք ունայնախաբ ըԱրօսանքն եւ գործեցեալքն ամենքն յայնս աւուրս եւ կերպ կերպ մահեայքն, եթէ ամենքն մի ըստ միոջէ իցէին գրեցեալք, որպէս յառաջ ասացաք՝ չկարէին բաւել ո՛չ միայն յիսուն կամ հարիւր տեսր նման սմին, այլեւս տասնապատիկ եւ յոյժ առաւել:

Բայց սակայն անօգուտ եւ անշահ ամենեւին եւ անշահ վարկեալ զայսպիսեաց սօնանմայից խօսել, այլ զայսքանեօք անցաք յեզերացն, առ ի իմանալ բարենկատ եւ խոհեմագէտ արանց զկնի եկելոց, թէ այսոքիկ ամենքն ո՞րքան վնասս գործեցին ազգին մերում կամ այլ ռայէ ազգաց, իմանայցեն եւ չախտոր/128բ/ժեցին միւսանգամ տեսանել. քանզի ո՛չ սակաւ վնասս գործեաց առ մեր թեթեւամիտ ճահիլսն, եւս ծանրամտից:

Իսկ այլ վնասքն հոգեկան անթուելիք, զի պատրեալքն ի մարմնական շահուց՝ հայոց ազգէն կամ յունաց (թո՛ղ զհրէայսն՝ զորոց ո՛չ է մեզ փոյթ) առեալ զնորահաս գեղեցկատեսիլ աղջկունս իւրեանց եւ վայելչագեղ մանկունս իւրեանց ծաղկափթիթս իրրեւ երկոտասանից ամաց, կամ այլ առաւել եւ նուազ սակս չարայոյս մամօնայի՝ զոր ստանալոց գոլ կարծէին՝ տեարքն չարայոյզք: Եւ իրրեւ աւար գտեալ յայսպիսի պահ եւ ժամանակ որպէս ըզՅուդայ՝ զգնեալսն արեամբն Քրիստոսի զծնունդս իւրեանց մատնէին ի ձեռս թշնամեացն խաչին

Քրիստոսի առաջի նոցա խաղացուցանելով: Եւ զարդարէին ցանկաշարժ եւ տուիական զգեստուք, իբրեւ զդուստրն Հոգիադայ՝ առ ի շահիլ զկորստական ինչս եւ այնպիսեօք շարժմամբք մղէին զնոսա ի մոլեկան խենեղախաղ պարս եւ կերպ կերպ ցոփաբան իրս եւ /129ա/ ի դիւական վտանգս եւ առ գործս անհանգուրժելիս:

Բայց թողցուք ոմանց հաւատարուժ լինելն եւ յետս ընկրկմունքն յիւրեանց կրօնից եւ միամիտ հեշտագրաւ անձանց նկրտմունքն առ դիւրատեսիլ, լայնընթաց եւ հեշտախտ կրօնս խեղաթիւր ազգին հարաւանոյ: Եւ եւս կատարեալքն արք, որոց ոչ զոյր կասկած ընկեցման, նոքին եւս հետեցան ի ճանապարհէ՝ ըստ Տեառն ասից թէ եթէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն՝ եւն[22]. ոչ մերս ազգ եւ եթ այսպէս, այլեւ եւս յունաց (այլ առաւել քան զմերն) եւ հրէից:

/130ա/ Ի թուին հայոց ՌՄԺ [1761], յամսեանն ապրիլի Թ /9/, յաւուր մեծի Բշաբաթի, սէնէ տաճկաց ՌՄԷ ռամազան լունի 16, ծնաւ դուստր սուլթան Մուստաֆային, անուն նորա Շահ սուլթան եւ շեվալի 2ին ասնանմայ արար յաւուր Դշաբաթի եօթն օր, որ էր ապրիլի Իե [25] եւ ԺԱ [11] օր յինանց:

Ի նոյն ամին՝ յամսեանն գեկտեմբերի ԺԵ [15] յաւուր շաբաթու սէնէ ՌՄՀ ճեմազիյել էվէլի 30. ծնաւ որդի թագաւորին՝ սուլթան Սէլիմ անուն նորա. յաւուր յայնմիկ սկսեաց զասնանմայն զուրախութեան եօթն օր:

/130բ/ Ի թուին ՌՄԺԱ [1762] յամսեանն հոկտեմբերի ԻԴ [24]. յաւուր եշաբաթի. սէնէ ՌՄԷ րէպի ուլախր լունի 18. սկսեցին զասնանմայն վասն զասերն իւրոյ ծնեցելոյ, Միհրիմահ սուլթան կոչեցելոյ, չորս օր եւ աւարտեցին հնգում օրն: Զի յառաջին զիշերին յորում հինգերորդն լուսացաւ օր՝ ժամ 4, եղեւ խսկոյնասասատիկ փայլատակմամբ անձրեւ յորդահոս յանկարծակի որոտմամբ եւ ճայթմամբ ամպոց եւ խառվամարտ հողմոց բաղխելոց: Մինչ զի իրքն զարդարանաց վեր ի վայր հոսեաց, ցրուեաց եւ ոփոեաց ասա եւ անդ, եւ ահաբեկ երկիւղիւ լցոյց զիւրաքանչիւրս զամենեսեան զահագնակայծակ հարկանմունքն եւ խստաճայթ որոտմունքն: Որ հարկանեցեալ եղեւ իսկ ի մէջ ծովուն եղեալ պէյլիկ նաւն՝ ասնանմայ զալեօնն խշլայի, զորոյ գերանն միջին այրեցաւ, որ լոյս տայր ծովափնեայ տեղեաց: Վասն այսորիկ վերջացուցին զասնանմայն, զի քանի մի օր եւս վերադիր առնելոց էր թագաւորն զպարկեշտապատիր եւ ի հաղրս անառակութեան գրաւող ուրախութիւնն:

/131ա/ Ի նոյն ամին յամսեանն նոյեմբերի ԻԸ [28] յաւուր եշաբաթի, սէնէ նոյն, ճեմազիյել էվէլ լունի 24, ծնաւ դուստր թագաւորին՝ անուն նորա Միրիշահ սուլթան, ոչ արար զասնանմայ, այլ նետիչիք եւ ոչնչազեկ տէյիզ իբր ասնանմայիս անցուցին:

Եւ յառաջ քան զայս նոյեմբերի 23 եւ ճեմազիյել էվէլի 19, յաւուր շաբաթու երեկորին, եղեւ հրդեհումն ի ծովեզերն՝ որ ի մէջ Պալատու եւ Ֆէնէրի: Ժամ մէկ եւ կէս էր սկսաւ եւ 6ին շիջաւ. որ եւ այրեաց գյոգնածախ եւ գեղեցկաշէն պալատն յունաց արհնոտայից, եւս զմեծաշէն եւ նորակերտ գեղեցկատեսիլ յոյժ պալատն մահտեսի Յարութեան, որ էր եղբայր Պօղոս աղային եւ Պետրոս պազիրկեան պաշուն Բաղիպ փաշային, զոր վեց օր զկնի լրանալոյն հազիւ թէ վայելից զասունն:

/131բ/ Ի թուին հայոց ՌՄԺԷ [1768] յամսեանն յունվարի Բ [2]. յաւուր Բշաբաթի. սէնէ ՌՄԹ շապանի 2 ծնաւ թագաւորին դուստր, որոյ անունն է ... ...: Դշաբաթի սկսան զասնանմայն երեք օր եւ վերջացուցին երկրորդում օրն ծննդեան յաւուր շաբաթու: Բայց յորժամ սկսան զասնանմայն նոյն Դշաբաթի գիշերոջ եղեւ հրայրեցումն քիրէմիտ մահալլէն Պալատու: Եւս եւ յաջորդեալ աւուր գիշերոջն՝ որ էր խդումն ծննդեան Քրիստոսի, եղեւ կրակ կրկին ի Ղալաթիայ կոչեցեալ տեղին Ղուլէ գաբուսու, զի եւ ի տանէ էնտազէ օղլու կոչեցելոյ հայ առնն[23] եւ այրեաց զասունն բազումն հայոց իբրեւ երեսուն եւ պատճառ հրայրեցմանն եղեալ տան եղեւ շատ վնաս՝ ոչ զոլով տեարց անդ, յորժամ զխնամտին արկեալ էին:

22 «Զի յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք. եւ տացեն նշանս եւ արուեստս առ ի մոլորեցուցանելոյ, եթէ հնար ինչ իցէ. եւ զընտրեալսն»: (Մարկ ԺԳ. 22)

23 Իմա՛ Էնտազեան ընտանիքի նախահայրը:

/132ա/ ի թուին հայոց ՌՄԺԵ [1766], յամսեանն դեկտեմբերի Իէ [27], յաւուր Դշաբաթի. սէնէ ՌՌԱ. շէվվալի 6, ծնաւ Թագաւորին ուսար, անուն նորա եդին Սուլթան Մուհամմէտ: Ո՛չ արար տօնանմայ ամենեւին, ո՛չ նետիշիք եւ ոչ բնաւ այլ ինչ իրօք. զի այնմ գիշերոջ՝ որ եղեւ ծնեցեալ, պատահեաց իր իմն բօթալի:

Զի նաւն այն մեծ, զոր տօնանմայ քալեօնու կոչի, որ սովաւ եւ նման սորա այլովք, երթան իբր պատսպարել ի վերայ ծովու եղեալ նաւսն վաճառական պազիրկեանից եւ զիրաւունս առնել եւ լինիլ ցանգ եւ ամուր պարիսպ ծովափնեայ գիւղից եւ քաղաքաց եւ այլոց թալէհի պաշնտայ եղելոց: Զոր Տէր զիւրեանց պատսպարութիւնսն եւ զիրաւարար պաշտպանութիւնսն հեռի արասցէ ի քրիստոնէից ամէն:

Սա հրդեցեաւ ի Ճեպհանեյէն եւ կամ որպէս ոմանք ասացին, յայլ ինչ տեղեաց: Եւ արձակեալ ի մէջ գիշերին այնմիկ, զոր կանգ/132բ/նեալ եւ պատրաստեալ կայր ի Մոմխանայի ազբիսրն, առ ի գնալ մօտ աւուրսն զիւր պաշտօնն կատարելոյ: Եկեալ գնաց ի կպրամածեղ տեղին՝ զոր Խալաֆատ երի կոչեն, եւ անդ քանի մի նաւ՝ մեծ եւ փոքր այրեաց եւ անտի եկեալ դէպ ի քաղաքս եւ ի ծովեզրն կոչեցեալ Ճիպալի: Այրեաց զբազում խանութս մրգածախ այլազգեաց եւ մաղազաս ածխածախից եւ այլոց մասնաւոր վաճառականաց: Եւ եւս զմեծամեծ օտալարս հրէաբնակաց եւ զտունս նոցունց բոլորովին աճիւնացոյց եւ ոչինչ դարձոյց զաղքատ անձանց բնակութիւնսն՝ զոր Տէր ցոյց մի՛ տացէ քրիստոնէից:

Իսկ զնաւսն զայնոսիկ զոր խալաֆաթատեղն այրեաց, որպէս յառաջն ասացաք, նոքա արձակեալք անտի գնացին ահեղահոս հրդեհմամբ եւ ահագնաշառաչ ընթացմամբ առ պէյլիկ արքունական զալեօնսն: Բայց ոչ մերձեցուցին մղեցմամբ գերանաց եւ այլովք դիմակալ գործեօք եւ այնոցիկ նաւից հր/133ա/դեհելոց մինն՝ առաջի զալեօնից անկար լինիլն հեռացուցման, ծակեցին արտաքուստ ի ներքոյ կողմանէ եւ ընկղմեցին անդ առաջի պէյլիկ նաւից: Եւ միւսքն շրջմրջկելով աստ եւ անդ իբրեւ զզամբար բորբոքեալ, մինն գնաց այրեաց խպատ զբեօշքն թագաւորական Այլնալը խավարն՝ որ է հանդէպ Պալատու ծովեզրին: Եւ միւսքն գնացին՝ մինն առաջի Այվասար կոչեցեալ տեղին եւ անդ այրեաց զնաւ իմն դեռաշէն եւ մինն առաջի Խասգիւղի կայ առեալ մնաց: Եւ բազումս գործեաց վնասս մարդկանց եւ հասոյց յոգունց անձանց: Զի արքայական նաւն այն զոմանց վաճառականաց նաւսն ոչնչացոյց հանդերձ ապրանօք եւ ոմանց զտունս եւ զբնակութիւնսն եւ զխանութս աճիւնացոյց յոյժ, զոր Տէր Յիսուս պահեսցէ յայսպիսի փորձանաց:

Եւ ի հետեւեալ աւուր գիշերոջ ժամ իրրեւ եօթն եղեւ շարժ սաստիկ եւ զոմանս տեղիս բլոյց:

/133բ/ [Յամի] 1768 եւ ի թուին հայոց ՌՄԺԷ յամսեանն յունիսի Բ [2], սէնէ ՌՌԱԷ մուհարէմի 28, յաւուր Բշաբաթի ժամ իրրեւ երկու. մունետիկն գոչէր հրատարակմամբ զանուն ծնիցելոյն՝ որ էր գուսար Հաթիճէ սուլթան կոչեցեալ: Եւ յաջորդեալ աւուր գիշերոջն սկսան տէյիզ տօնանմասին չորս օր եւ աւարտեցին գիշերոջն ուրբաթու, թողլով զառհաւատչեայ յոյսն բազմավնաս թլպատութեանն հարսանեաց, զոր Տէր թարց հոգեկան վնասու անցուսցէ զմեօք:

[Յամի] 1769, ի թուին հայոց ՌՄԺԸ յամսեանն դեկտեմբերի Լ [30]. սէնէ ՌՌԱՐ ռամազանի ՌՐ յաւուր չորեքշաբաթի, ժամ իրրեւ եօթն նետիշիք բազմօք լուաք եւ յետոյ մունետիկօք իսկ ծնանիլն Ֆաթմայ սուլթանին: Եւ ամենեւին նշոյլ ուրախութեան տօնանմայի չարար թագաւորն սակս պատճառի պատերազմին՝ զոր ընդ ռուսաց եւ մինչեւ ցարդ ենթ յաղթութեան է նորա եւ զկնին Տեառն է գիտելի, որ փրկիչն Յիսուս փրկեսցէ զմեզ՝ ամէն:

/137ա/ Յամի Տեառն 1766. Հայոց ՌՄԺԵ յամսեանն մայիսի ԺԱ [11] եւ զիլհիճէ լունի 13. (ՌՌՎՊ սէնէին) յաւուր Եշաբաթի ԺԹ.երորդում օրն յինանց, ի յառաւօտեան պահու ժամ՝ անցեալ մէկ ջէյրէկ տասն. եղեւ շարժ իմն ի Կոստանդնուպօլիս սաստիկ որոտմամբ եւ յանկարծազեկ երերմամբ, ահաբեկ յոյժ թնդմամբ, տեւելով հազիւ թէ ըՕպէ երկու (բայց ոմանք ասացին եւ կարծեցին կէս ժամ լինիլ կամ այլ աւելի եւ պակաս, բայց ոչ այնպէս՝ որք յաւելորդաց եւ եթ գիտէին խօսիլ եւ ոչ զբանն հաւաստեալ ասէին): Մինչ զի քաղաքն լցոյց քարակուտիւք՝ բլուցանելով զմեծամեծ մզկիթսն, մանաւանդ մայր

մզկիթն եւ իբր հաստատութիւնն իւրեանց Սուլթան Մուհամմէտ կոչեցեալն՝ որ ի Ֆէթհիէն էր շինեալ (եւ վասն սորին կործանմանն յոյնք բազումս մարգարէացան բանս)։ Եւ զայլ մզկիթսն նմանապէս, զորն Բլոյց, եւ զորն կիսաքուլ եւ կամ չորրորդ մասի մինն Բլեալ եւ ապա- /137բ/կանեալ եթող։ Եւ զիսանսն նմանապէս, մանաւանդ զՎէզիր խան կոչեցեալն, զորոյ ի Բլատակսն բազումք մեռան ի քրիստոնէից, որոց մինն մանաւանդապէս էր տիրացու Գէորգն Կեսարեան. իմաստասէր յոյժ եւ դպրութեանց ոմանց ազգաց իսկ տեղեակ։ Եւ ծաղկաքաղ ասացից, զի զամենայն տեղիսն քաղաքին, զբերդսն եւ զայլ քարաշէն տեղիսն զամենեսեան քայքայեալ խանգարեաց, նման արտասուաց կոյսն քարանց առաջի իւր իջոյց եւ զչարշն նմանապէս վիրաւորեալ խանգարեաց։ Եւ նորին քէմէրսն յոմանս տեղիս ընդ երկիր խոնարհեցոյց, մինչ զի ահաբեկ լեալ բազմաց իսկ եւ համայնից, թարց ծածկութեան տեղիս բնակէին։

Իսկ ժամանակ առ ժամանակ եւս վերայիշումն առնէր շարժն, որպէս յուլիսի եօթներորդում օրն՝ յորում գիշերոջն եղեւ եւ յառաջ քան զայս սոյն ամսոյս Ճերորդում աւուրն գիշերուոջ բլաւ դարպասն Թագաւորական՝ որ ի դէմն իսկելէին Պալատու Այնալը խավախ կոչեցեալ տեղին ժամ /138/ երեքին։ Եւս սոյն ամսոյս Իե[25]երորդ [օրն], ժամ իբրեւ 5 եւ կէս եղեւ սաստիկ եւ ահագին՝ ոչինչ նուազ քան զառաջինն եւ բլոյց նմանապէս զբազում տեղիս եւ դուռն բերդին ի կողմն ցամաքին Էտրէնէ Գաբուսու կոչեցեալն բլոյց իսպառ, ենթ առնելով զոմանս բնակողս ներ դրանն հրեայս եւ այլազգս. այսպէս անցուցաք այս տարիս։

Եւ ի յաջորդեալ ամին ՌՄԺԶ [1767] ամին յունվարի ԺԹ [19] ի պահու երեկոյի ժամ՝ իբրեւ ջէյրէկ անցեալ ԺԲ[12]ին, եղեւ սաստիկ հանդերձ յոլով վնասիւք. յորում գիշերոջ բազմապատիկ անգամ լինել վկայեցին բազումք։ Եւս սոյն ամսոյս Իէ[27]ում գիշերոջ, ժամ երեք կրկին եղեւ սաստկապէս։

Դարձեալ մարտի ԺԲ [12], յորում գիշերոջն եղեւ եւս շարժ սաստիկ եւ ժամ եօթնում եկն կարկուտ ահռելի որոտմամբ եւ ճայթմամբ ամպոց եւ բաղխմամբ նոցին։ Եւս կրկին սոյն ամսոյս Ժե[15]ումն, յաւուր եշաբաթի, Իե[25]երորդ օր աղուհացից ժամ Ժ[10] եւ կէս եղեւ շարժ ահագին երերմամբ, որ մեք ասէաք յեկեղեցին Թագաւոր յաւիտենի վերջի տունն՝ վերի յաջ դասն սրբոյ Աստուածածնի։ Օգոստոսի Լ [30] ժամ տասն եւ կէսն էր, եղեւ շարժ կրկին։

Դարձեալ սեպտեմբերի Ը [8]. յորում գիշերոջ ի պահու առաւօտեան, Թերորդ օրն եղեւ շարժ կրկին։ Եւս այսմ պահու եղեւ սաստիկ անձրեւ հանդերձ մրրկաւ, որ ի սոյն պահու եղեալ վկայեցին խարդալի կարկուտն, /139ա/ կայծակն եւ հեղեղն։ Եւս իբրեւ երկերիւր անձինք ընկղմիլն եւ կորնչիլն ի հեղեղէ եւ բլանիլն տանց եւ քան զքսան եւ հինգն առաւել հրէայ լինիլն յընկղմելոց, եւն.։ Զորոց ո՛չ գիտելով զհաւաստին ո՛չ խօսեցաք ասա։

Եւ վերջապէս եդր տուեալ բանիս ասացուք զաստուածասաստ բարկութիւնն վասն մերոց յանցանացս պատճառեալն։ Տեւեաց ժամանակ առ ժամանակ անմիջաբար կամ սաստկապէս կամ թուլաբար, մինչեւ ցաւարտումն սոյն տարւոյս, զկնի այսորիկ միայնոյն գիտելի է Աստուծոյ։

ՌՄԺԷ, սեպտեմբերի Լ[30]երորդում օրն, յորում գիշերոջ ժամ իբրեւ ԺԱ[11], եղեւ շարժ կրկին։

/143ա/ Յամի Տեառն 1769 եւ Հայոց ՌՄԺԸ յամսեանն օգոստոսի յորում պատերազմ օսմանցւոց ընդ ռուսաց սաստկանայր եւ վատաբախտական լուր մինչեւ ցայժմ լսելի լինէր ի կողմանէ այսոցիկ ազգաց՝ որք ընդ քրիստոնէից ունէին եւ առնէին պատերազմ։

Յայսմ ժամանակի եւ ի միջոցի տասն եւ հինգերորդ աւուր սոյն ամսոյս վերայիշեցելոյ, երեւեցաւ ասող մի գիսաւոր աղօտագոյն տեսլեամբ, երկար իբրեւ չորս կամ հինգ կանգնաչափ, տուտս ունելով գիսաւորս մռայլանմանս ձգեալ յարեւելից՝ թէքեալ սակաւ ինչ առ հիւսիս գլուխն առ ունելով եւ զտուտն առ կողմն հարաւոյ ուղղեալ, թէքեալ առ արեւմտեան կողմն։ Զորմէ բանագէտք եւ աստեղաբանք բազում ինչ խօսին կամ ըստ բնութեանն եւ կամ ի կամացն Աստուծոյ յառաջեալ. եւ նշանակք ահեղք գուշակել եւ վնասակար եւ պատճառիչ ժանտախ/143բ/տի յապականութենէն օդոյ որոյ ներգործութենէն յառաջագայիլ

եւ այլք ցուցմունք բօթալիք, զոր Տէր բարեկարգեսցէ ըստ կամայ իւրոց:



/144ա/ Յամի Տեառն 1770 եւ հայոց ՌՄԺԹ, յամսեանն յունիսի ԺԴ [14]. ՝՝ԱՀ՝՝ բէպի-ուլ էվ-վէլ լուսնի 2. որ յամենայնից կուսէ եւ ի կողմանց պատերազմն սաստկանայր ի վերայ քաղաքիս: Զի ի կողմանէ գետոյն Դանոբայ զոյր հրդեհ պատերազմի կարի յոյժ: եւ ի Սպիտակ ծովու կասկած բազմայ նաւից մեծայ եւ փոքունց հանդերձ մեծաւ վնասու: Եւս եւ շփոթ ի կողմանէ արեւելեան կուսէ ի տանէ Վրաց, թող զիսառնակ վրդովսն յիւրեանցն ազգակցէ եւ որ յնգիպտոս եւ յայլոց բազմայ: Կամ զինչ ասացից իւրեանց անզգամական արարսն ի մէջ քաղաքիս եւ յայլ տեղիսն, որ քան զպատերազմական մարտսն էր սաստիկ եւ ընդդէմ բնութեան: Յայսմ միջոցի եւ ի յաւուրս վերոգրեալս երեւեցաւ աստղ մի վարսաւոր բոլորակատես՝ ազօտ լուսով գէսս սփռեալս ունելով ընդ իւրեւ: Ծեր լուսանման փակ ընդ աստղիւ երեւ/144բ/եալ եւ բոլորութիւն երեւելոյն իբրեւ երկուց կանգնոց յամենայնից կողմանց եւ ի միջի մթնագոյն երեւեալ աստղն եւ զվարսքն ազօտ քան զինքն: Եւ յամենայ հազիւ աւուրս ութն: Եւ կարծի թէ (եւ է իսկ) ի տեսակաց տատաւորաց իցէ աստեղայ, որ յառաջ քան զտասն ամիս երեւեցաւ այլ իմն ձեւով, որպէս տեսանի յառաջագ: Եւս բազումք վկայեցին յաւուրսս յայսոցիկ երեւիլ կերպ կերպ աստեղաց տեսիլք ի կողմանէ հիւսիսոյ, եւ այլք ան[ը]նտել երեւոյթք: Զոր մեք ոչ տեսաք վասն անհոգութեան եւ կամ վասն անտքնութեան գիշերոյ յորում երեւէին:

Եւ որպէս յանցեալ ամին սոյն ժամանակս տեղայ յերկրի մերում մարախ, նոյնպէս եւս այժմ եկն եւ լցոյց գերեսս քաղաքին, որ յոմանս տեղիս սակաւ եւ յոմանս՝ յոլով, զոր Տէր բարեկարգեսցէ ըստ իւրոցն կամայ:

Եւ տեսիլ աստեղին էր այսպէս:



/149ա/ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1778 ԵՒ Ի ՄԵՐՍ ԹՈՒՈՋ ՌՄԻԷ, ԵՂԵՒ ՄԱՀՏԱՐԱԺԱՄ ՅՈՅԺ ՍԱՍՏԻԿ, ՈՐ ԿԱՐԻ ԿՈՏՈՐԵԱՑ ՋԱՋԳ ՄԱՐԴԿԱՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԻՆ ԵՒ ՍՈՅՆ ԱՄՍ ՎԱՍՆ ԱՅՆ ԿՈՉԵՑԱՒ ՄԵԾԱԳՈՒՆԵՂ ՏԱՐԻ ԺԱՆՏԱՑԱՒԻ, ՋԻ ԿԱՐԻ ՏԱՊԱՍՏ ԷԱՐԿ ՋՄԱՐԴԻԿ:

Ուստի կա՞մ եղեւ ինձ գրել զվիշտս տառապանաց ի քաղաքիս եղելոց, եւ զարժանահաս կոտորուածս ի ժանտէ՝ զոր եհաս ի վերայ մեր ըստ մերոցս յանցանաց կուտակեցման: Բայց ի գրելն սիրտ իմ ճմլի եւ ազիք իմ գալարին եւ արտասուաց վտակ թորեալ իջուցանի յաչաց իմոց: Եւ ո՞չ բաւել կարեմ ասասանօր՝ թէ որո՞վ օրինակաւ եւ տարագու ոդբս առեալ աշխարեցիս զանձինս մեր, զոր տեսաք եւ լուաք եւ անձամբք մերովք զփորձ առաք ամենեքս եւ զկսկծանաց այսորիկ տարաժամ մահու:

/149բ/ Քանզի մինչ չէր յաջորդեալ սոյն ազետալի տարիս՝ զոր յառաջն յիշեցաք զթիւս. օգոստոսի ամսոյն սկսաւ երեւ ելանել եւ ի մէջ այլազգեաց անկանիլ, բայց ի թաքստի էր եւ յանկեան ուրեք մերթ առ մերթ լինիլ լուսեւաք: Եւ

յորժամ յաջորդեցաւ սոյն ամս, սկսաւ առ քրիստոնեայս ցոլացուցանել զհուր բարկութեան իւրոյ: Եւ մինչ ի սուրբ Յարութեան տօնին սրբոյ Զատկին ցանցառակի ընթանայր եւ ուրեք ուրեք յայտնիւր. բայց յետ նոյնոց աւուրցն երեւութանալ սկսաւ յայտնի եւ ճապաղիլ եւ սփռիլ ի քաղաքս առ հասարակ եւ բոց կիզմանն իւրոյ շուրջ պատեալ զքաղաքաւ եւ բորբոքմամբ տոջորեալ կիզեալ լափել եւ յաճին դարձուցանել, եւ զսիրտս ծնողացն աղեխարշ խորովեցուցանել եւ զծաղկանման մանկունսն եւ զաղջկունսն թառամեցուցեալ առ յերկիր առաջի տեսից նոցին թաւալեցուցանէր. եւ իբրեւ զծա/150ա/զիկս ծառոց խորշակահար արարեալ առաջի նոցին կուտէր, բարդէր եւ իբրեւ զկոճղ կիսայրեաց տարածեալ ձգէր:

Եւ զայնոսիկ փափկանունդ աղջկունսն, զորոց մերձեալ էր ժամանակ ամուսնութեան եւ նշանադրեալք ի հարսնութեան եւ զուստերս որոց նոյնդունակ նշանադրեալք ի փեսայութեան, որք զվարդս իբրեւ փայլէին եւ որպէս զգեղեցիկ շուշանս ի հոտ գեղեցկութեան բուրէին ծնողացն եւ բարեկամաց եւ համայն տեսողաց: Եւ զնոսա միջակատոր արարեալ տապաստ արկանէր ի յերկիր եւ ոչ մերձակայից միայն զսիրտս նուաղեցուցանէր, այլ եւ ամենեցուն զսիրտս ճմլեցուցանէր եւ յարտասուս հարեալ լացուցանէր:

Անդ էր տեսանել ողբս եւ յորդ արտասուս աչաց իբրեւ զաղբիւրս հեղանիւ եւ հոսիւ: /150բ/ Եւ ձայն լալեաց եւ հառաչանաց եւ որպէս հասելոյ երկանց յղեաց առ ցաւս իւրեանց ճչել: Այսպէս եւ դեր ի վերոյ քան զնոյնս պատեաց զքաղաքս այս, եւ բազմանայր օր աւուր ձայն վայից, կսկծանաց եւ մորմոքմանց: Եւ զայսոքիկ զՅշուառալի կիրսն ընդ միմեանս խառնեալ զոչեցուցանէր ուժգին աղաղակաւ բոլոր զքաղաքն թէ՛ զքրիստոնեայս թէ՛ զհրէայս եւ թէ՛ զայլազգս մանաւանդ:

Եւ յորժամ մտանէր ոմանց ի տունս առ հասարակ կոտորէր զուստերս եւ զդստերս նոցա եւ միսիթար առ մի իմն ոչ թողոյր եւ կարգաւ սկսեալ ի մեծաց եւ կամ ի փոքերց զամենեսեան սրբէր մաքրէր եւ կոտորէր առաջի հարց եւ մարց նոցին եւ իբրեւ զբու միայնակ թողոյր զծնողսն ի մէջ աւերակի տան անմխիթար եւ թարց սփոփա- /151ա/նաց ինչ իմիք եւ բազումս տեսաք զծնողս եւ լուաք խելացընօր եղեալ, ի փողոցս եւ ի գերեզմանատունս շրջիլ, պատառեցեալ եւ արիւնրուիշտ կերպարանօք: Վասն զի թէ ունէին եօթն եւ կամ այլ աւելի եւ պակաս զզաւակս, զհամայնս մեռոյց ի մէջ քանի մի աւուր, միոյն մեռանիլն ոչ իմացեալ՝ իսկ զմիւսն հանդերձէր. նոյնպէս նորայն եւս չիմացած զերրորդն ըմբռնէր: Եւ յորժամ զրաւէր զամենեսեան, յայնժամ զզային ծնողքն զաղէտս իւրեանց եւ խելագրաւ լեալ ի փողոցս անկանէին եւ այնպէս յուսակտուր եղեալ առ բարձրեալն անպատեհ իրս բառբառէին, վասն կսկծանաց սրտից իւրեանց եւ ուշոյ իւրեանց կորուսմանց:

Եւ վասն նորապէս ամուսնացելոց զի՞նչ ասացից եւ ո՞րպէս զնոցայն պատմեցից զվիշտս: /151բ/ Զի դեռ չէին գիտացեալ զմիմեանս ի կողմանէ սիրոյ ամուսնական կապակցութեանց, զրկեցեալք լինէին ի միմեանց եւ լցակիցք մեռանողացն դեռ ներ նեղութեանց գոլով՝ այնքան փարէին զհանդերձիւք սիրելեացն իւրեանց, մինչեւ տոգորեցեալք ի հոտոյ եւ ի ժանտավտանգ կրից՝ ախտից մեռանողաց, իսկոյն զկնի քանի մի աւուրց, զինքեանս առ լծակցացն իւրեանց ընկեր ընկողմանեալք լինէին ի գերեզմանի: Տե՛ս ուրեմն եւ դու՝ թէ յերկոցունց ազգայինքն եւ մանաւանդ ծնողքն զի՞նչ ինչ ոչ կրէին զցաւս կսկծանաց եւ մորմոքմանց սրտից իւրեանց այնպիսիքն: Եւ նոյն ծնողքն զո՛րքան կսկիծ եւ զցաւս կրեցին եւ զվիշտս յանձինս իւրեանց բերին ի վատաբաղդ դիպուածոց շրջանին անգթոյ:

Իսկ յորժամ տեսին զայնոսիկ գեղեցկավայել հասակս տղայոցն եւ աղջկանց իւրեանց՝ արկեալ ի տապաստ սրով չարագունեղ ախտիս այսորիկ, որպէ՞ս հանդուրժեալ տոկային /152ա/ եւ ոչ փղձկեալ ի յողբ եւ ի յարտասուս՝ զանձինս իւրեանց կոծել չփութային, որոց գիտմունքն էր փեսայացուցանել զնոսա եւ հարսնացուցանել եւ վայելել ի նոցանէ զմխիթարութիւն: Եւ յուսային ի հողոյ տալ զմարմինս իւրեանց ի նոցանէ եւ իւրեանք եղեն տուօղք անձանց նոցա զհող: Ո՜հ աղէտիս, զի բարկութիւն մահտարաժամ ախտիս օր աւուր յաւելումն փութայր վասն մերոցս մեղաց եւ դառնակսկիծ վտանգն մահուս շատա-

նայր բազմանայր. յոլովագոյն կրիւք ծանրաբեռնէր զքաղաքն եւ միանգամայն լացուցանէր եւ աղբիւրս արտասուաց յորդէր առ համայնս, զի ո՛չ մնաց ոք ի քաղաքիս՝ որ ոչ էլաց ի վերայ սիրելւոյ իւրոյ եւ չեղեւ հնար. զի մնայցէր ակն ինչ թարց արտասուաց եւ բո/152բ/լոր իսկ զհամայնն պատեալ պաշարեաց եւ տապաստ էարկ մահուամբ զամենեսեան: Եւ զփախուցեալսն իսկ ի ցանցս իւր արկ, զի ի կողմանէ Պօղազիչիին եւ յԱտայիցն օր ըստ օրէ դային ախտացեալք ի քաղաքս եւ մտանէին իբրեւ ոչխարք ի սալախանայս, մինչեւ որ եղեւ նման ի մէջ քաղաքիս տագորեցեալք ի նոյն ախտէ եւ լինէին յուսակտուր ի նոյնոց տեղեացն եւս:

Զի չգիտէին զկերպն փախչելոյ եւ հնարն ո՛չ կարէին գտանել խոյս տալոյ սոյն աղէտէ. զի բնակէին անդ՝ եւ ինքեանք երթեւեկս առնէին ի քաղաքս, վասն գոլոյ նոցա ի մէջ առեւտրից:

Քանզի ըստ գրոց իմացուցմանց եւ իմաստնոց կիրառմանց լինելոց է փախուստն սոյն ախտէս այնպէս՝ որ յառաջ քան զտարածումն սորին՝ հանդերձեալ զամենայն պիտոյս տան՝ այնպէս խոյս տուեալ ի քաղաքէս, ներ փակելոց են ի տան. /153ա/ եւ ո՛չ ելանելոց անտի, մինչեւ զցաւումն իւր անցուցանիցէ ախտն այն ժամնտ: Եւ թէ ելանիցես ի կայէն քումմէ, ի դառնալն քո եւս ի նոյն կայարանն քո, պարտ է ծխանելեօք ծխանիցիս ըստ ամենայն կերպիւ զանձամբ, եւ հանեալ զհանդերձսն քո, զայլս հագանիցես լուացեալս եւ մաքուրս զհանդերձս եւ տագորեցեալս ծխանելեօք եւ զուտելիս եւս ի տանելդ տուն ծխիւք պատեալ եւ անցուցեալ ի նմանէ, այնպէս ընդունիցիս ներ տան քում եւ այսպիսեօք արարողութեամբք վարելոց ես միշտ, մինչեւ թուլանայցէ եւ ի սպառ անհետ եղիցի ցաւս այս:

Բայց զի՞նչ ասացիս մերոց միամտաց մարդկանց մերոցս ազգաց եւ ո՞րպէս պրծեցայց հաստագոյն անձանց կոպտաց ի /153բ/ ձեռաց, որք այսպիսեօք զվարօղսս անհաւատ կոչեն եւ անաստուած յորջորջմամբ տարանջատ գտանին ի մէնջ եւ յիշայոյս ըզձիւ պատճառ լինին անձանց իւրեանց եւ իսկ այլոց բազմաց եւ յոգունց:

Զի՞նչ ասացիս վասն այնոցիկ՝ զորս մեք իսկ աչօք տեսաք եւ ականջօք մերովք լուաք, որք թողեալ զամենայն գործս իւրեանց եւ զկարիս՝ երթեալ զմեռեալս թաղէին, ոչ թէ աղքատաց եւ անտեսաց, այլ առ այնպիսիս՝ որ ոչ երթիցեն եւս այսպիսի անձինք բազումք. նոյն մեռեալն բազում հանդիսութեամբ թաղելոյ ունի զմարդիս: Եւ յետ թաղմանն տագորեցեալք եւ պղծեցեալք, գնան ի տուն եւ մտանեն ի մէջ փափկամարմին ընտանեացն իւրեանց եւ զաւակացն իւրեանց ծաղկանանոցից, եւ տագորեցուցեալ զնոսա տապաստ արկանեն կամաւ իւրեանց զընտանիս եւ զզաւակունս եւ /154ա/ կամք Տեառն այսպէս լինիլ համբաւեն եւ ճակատագիրն գոլ ստուգեն իրաւ. եւ մոլորին ի յեկեղեցւոյ շաւղաց, որ խոյս տալ քարոզէ ի վտանգաւոր իրաց եւ բանից այսպէս կիր առնլեաց:

Եւ զգիրն ճակատուց սպառ սպուռ մերժէ եւ զհաւանօղս ընդ անիծիւք գրաւէ: Եւ նոյն անկիրթք անձինքն մեծագոյն բաստիւք յառաջ մխեալ զօղանջեն՝ թէ մեք միշտ նոյն ախտիւք տագորեցելոց միջի գեղերիմք եւ ընդ նոսա նստիմք եւ ուտեմք, վնաս ինչ ո՛չ լինի մեզ: Որք ոչ գիտեն թէ նոյն հասակն որ հասեալք են, ո՞րքան այսպիսի վտանգաւոր տարիք անցեալք են զիւրեամբք նոցա եւ մարմինք իւրեանց եղեալք են իբրեւ զկեղեւ կրիայի եւ բնութիւնք իւրք՝ ապառաժի: Մինչ զի այսպիսի բնութեան պնդութեան գոլոյ վիճակեալ ինքեանց՝ հաստագունեղքն այնոքիկ եւս /154բ/ քան զեւս՝ իբրեւ եւ իսկ նման ապառաժ վիմից հատելոց կոտորից ի շարժմանէ այսորիկ ժամանակի՝ վերուստ ի վայր իջուցեալ ընդ երկիր հաւասարեաց եւ ի ներքոյ հողոյ կաշկանդեալ ըստ յիշայուսիցն իւրեանց, անդ գրաւեալ ընկողմնեցոյց եւ ըստ ըզձից իւրեանց անձնասպանք եղեալ ինքեանց եւ տղայոց իւրեանց խողխողիչք եւ սպանօղք եղեալ պսակեցան ի յանմարդաբարոյութենէ իւրեանց:

Ուստի այսպիսի անձինքս այնքան անհամբոյրք են բարուց իմաստնոց, որ բաց ի չքսողութենէ եւ ի չանսալոյ բանից նոցին եւ խօսից: Եւ յասացելոց նոցա խրատուց հպատակելոյ փոխանակ, զհակառակն կատարեն եւ ի կիր առումն փութան ի ժանտաբարոյութենէ բնութեանց իւրեանց եւ ի յեէթեէյէ ոչ քարշեցեալ ելոյ ի բնէ՝ բարոյից իւրեանց հաստա/155ա/գունից: Զի այնպիսիքն ո՛չ ունին ամենեւին զընտրողութիւն ինչ ի

մէջ բարւոյ եւ չարի առնել եւ զանազանել զլաւն եւ զխոտանն ի բաց ընկենուլ փութալ:

Քանզի եթէ անօգուտ լինէր խոյս տալն ի ցաւէս [յ]այսմանէ եւ ունայն, ընդէ՞ր դեսպանք քրիստոնէից. որք բնակեալք են ի քաղաքիս եւ այլ մեծազգի անձինք նոյնոց ազգաց՝ պրծեալ ազատեցան ի ժանեաց այսորիկ ախտիս: Զի զկնի դադարման ախտիս տարաժամու, քննեալ իմացաք ստուգապէս, որ ի ընդդէմ դեսպանաց հարիւրականէն աւելի ունողաց զմարդիս ընդ իւրեամբք եւ ո՛չ ամենեւին ի նոցունց ումեք գիպեալ է ցաւս այս՝ եւ մահու գրա/155բ/ւեալ զմի ոք ի նոցանէ: Բայց միայն զՄուսիայի դեսպանի աշճին, որ դուրս ելեալ յարգելարանէն իւրմէ առանց գիտութեան տեսան իւրոյ եւ ընդդէմ սովորութեան նազարէթին իւրեանց, իսկոյն ըմբռնեալ ի ժանտէ հիւանդացեալ է. վասն որոյ յղեալ առ հիւանդանոց ըսպիդալս իւրեանց, անդ մեռեալ է եւ ոչ այլոյ ումեք ինչ վտանգ եղեալ է բնաւ:

Ուրեմն նոքա ամենքն արդա՞ր էին՝ որք ո՛չ պատժեցան եւ մեք քրիստոնեայքս՝ մեղաւորք, որք ի Պոլիս բնակիմք: Ո՛չ այնպէս՝ այլ նոքա ի յայսպիսի վտանգաց խոյս տան՝ եւ որպէս ի յերկրի իւրեանց նազարէթիս պրծեալք լինին յոլով ամս: Որ եւ իսկ մեք փորձիւ տեսաք ի պատերազմի ժամանակում, թէ ո՞րպէս ազատեցաք ի քանի մի ամս, իբրեւ ութից: Ուստի կոտորիլն մեր ունայնաբար է մեր կոպտա/156ա/զունից սակի: Ո՛հ եւ աւա՜ղ ի տարապարտուց կոտորելոց անձանց, եւն:

Իսկ վասն է՞ր երկարեցից այսպիսի իրաց սակս, վասն զոլոյ անօգուտ ամենեւին համարեցեալ ի նոցանէ. այլ յառաջ ընթացցուք ի խղճալի պատմութիւնս մեր, զոր ձեռնարկաք թողուլ հետագայից զյիշատակ իմն ողբալուր եւ բօթալի եւ խթանիկ ինչ զարթուցման ի քնոյ կոպտաբարոյութենէ:

Բայց կոտորումն ժանտախտի այնքան բազմացաւ, մինչ զի վասն ճաղից կռիւ եւ կաղ լինիւր մեռելատեարց ընդ ժամակոչաց եկեղեցեաց: Քանզի փութային զմինն վերուցանել ի տանց առ ի տանել թաղումն, զի հանդերձեալ զոյր ի տան անդր. գմիւս եւս եւ կամ երկուս: Այնքան մինչ զի ի կիսոյ մայիսի ամսոյ սոյն ամիս մինչեւ ցկէսն օգոստոսի ամսոյն, յորս էր սաստկութիւնն ժանտի, մանաւանդ ներ յունիսում եւ յուլիսում /156բ/ ամսոց. եւ ի մէջ նոյնոց երից ամսոց եղեւ թուեցեալ յինէն՝ հազար մեռեալ ել միայն ի Հրեշտակապետու եկեղեցւոյ ժողովրդոց ի Պալատու կողմն եւ եթ: Զի ի վերայ յայլ կողմանց՝ մերս այս կողմն սակաւաժողովուրդ իսկ է յոյժ: Եւ այս եւս իմա՞զի օրն քան զքսան եւ ինն մեռեալ ոչ եղեւ աւելի թուով, մինչեւ ցայն թիւ հաս եւ ո՛չ աւելի եղեւ:

Եւ զայս զոր գրեցաք, մերս ազգի սակս է միայն եւ ո՛չ այլոց ազգաց սակի ինչ գրեցաք: Զի ի յեկեղեցւոյ ճաղիցն իմանայաք եւ ի թաղողաց. եւ ոչ եւս յայլմէ կողմանէ եկեալ մեռեալսն ի թիւ եղաք, այլ միայն որպէս ասացաք սոյն կողման ի ժողովրդոց մեռեալսն եւ եթ:

Եւ յորժամ հասաք ի տօնն Վերափոխման Սրբուհւոյ կուսին Աստուածածնի, սկսաւ երկրպագելի այցելութեամբ նորին՝ շիջանիլ եւ նուազիլ. յայտնի հրաշիւք ծնողին Աստուծոյ մերոյ Յիսուսի Քրիստոսի փրկչին բնաւից:

/157ա/ Եւ զկնի սրբոց Հրեշտակապետաց տօնի ընկղմեցաւ անունն ախտիս այսորիկ, բայց միայն ի հեռուստ լուայաք, եւ ո՛չ տեսանէաք նման անցելոց ամսոց զտեսութիւնս մեռանողաց այնոցիկ ողբալեաց եւ զկանս աղիողորմ տեարց նոցին խղճալեաց: Ուստի նարդեանս լուր հարսանեացն սկսաւ յերկրի մերում լսելի լինիլ (որ ի զատկէ հետէ խափանեալ էր եւ գուժ բօթի մահուանն տիրեալ էր զերեսս երկրիս այսմիկ):

Ուրեմն փառք եւ երկրպագութիւն մեծաւ գոհութեամբ բարերարին Աստուծոյ եռանձնեայ միութեանն, որ միջնորդութեամբն ամենասուրբ կուսին Մարիամու Աստուածածնին եւ օգոստոսափառ տիրուհւոյ մօրն Աստուծոյ իսպառ սպուս հերքեաց, մերժեաց եւ վանեալ կործանեաց զիշխանութիւն մահուս այսմիկ ժանտի: Ուստի երկրպագութիւն ընծայեսցուք աստուածածնողութեան սրբուհւոյ մօրն /157բ/ գթութեան, որոյ մայրական գութն առ պաշտօնատուս իւր է գիտահրաշ եւ գեր ի վերոյ այցելութեամբն իւրով առ ազգս մարդկան: Վասն որոյ ծնկովք կրկնելովք (ըստ երգաբանելոյ հրեշտակային առնն Աստուծոյ) մատուցանեմք քեզ բա-

բեբանութիւն օրհնաբանական գովութեամբ տիրամայր սուրբ Աստուածածնին: Որ եղեր օգնական եւ տուն ապաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութեան, որ մաղթանօք քումդ պահպանութեան՝ աներկրայ յուսով ապատութիւն ի չար մահուս քեւ իսկ ընկալաք: Քանզի յարժանահայց եւ ամենագօր քո բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ մնամք ի հաստատութեան խնամեալք եւ հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ Աստուածածնիդ: Վասն որոյ աղաչեմք եւ աղերսեմք առ մայրդ ողորմութեան, /158ա/ զի բարեխօսեսցես վասն ամենայն քրիստոնէից եւ մանաւանդ այնոցիկ՝ զոր յատկապէս զանձինս իւրեանց առ մայրական գթութիւնդ յանձնեալք են: Ուրեմն փառք եւ երկրպագութիւն տիրամօր կուսիդ, որ կեաս եւ վայելես ի հրճուանս սրբոյ եռանձնէի՝ հօր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, որում երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն:

* * *

/158բ/ Յամի Տեառն 1782, Հայոց ՌՄԼԱ, յունիս ամսոյ ԻԸ [28] ՌՅԹ սենէին ըէճէպի 28, յաւուր Գ[3]շաբաթի երեկոյին ժամ իբրեւ հինգն, մօտ ի կողմն Սամաթիայու եղեւ հրկէզ մօտ եկեղեցւոյն սրբոյն Գէորգայ. այրեաց զբազում տունս հայոց եւ յունաց, եւ քանի մի եկեղեցի յունաց, զինեատունք եւ քէրէստեճիք, պալըխճիք եւ առ Տօղրու եօլն գնաց սակաւ ինչ, եւ շիջաւ ժամ հինգ Դշաբաթի լոյս, որ տեւեաց իբրեւ տասն ժամ:

Յուլիսի ԺԲ [12] շապանի 13, զկնի ԺԵ [15] աւուր, յաւուր Գ[երեք]շաբթի ժամ ԺԱ [11], սկսաւ այրիլ հրկէզն Պալատու: Քիւրքճիւ չեշմէի ետեւն Տէլի Յարութեան տանէն ելեալ այրեաց զԲարմախաբուն բոլոր հանդերձ մեծամեծ օտալարօք եւ Քէսմէխայեայի կողմանէ ելեալ գնաց մինչեւ Ալի փաշայի կողմն, որ զշաբաթ աւուրսն փազար լինի անդ՝ Սուլթան Մէհէմէտի տակն անկանի դէպ առ Խարակէօմրիւկն, որ եւ անդ վնասեաց եւ տաճկաց վնաս շատ եցոյց: Եւ վայրի ծայրն զհրէայս բոլորովին այրեաց ի ներքոյ բերդի պալատին, միայն մնաց եկեղեցւոյն դէմ եղեալ տունքն մինչեւ Քիւրքճիւ չէշմէի նոյն սրբայի ծայրն: Եւ զայլազգսն Քիւրքճիւ չէշմէի ոչ այրեաց, եւս մնաց լէպլէպիճոց եւ խաֆաֆից սօխախսն եւ զայլսն սրբեաց մինչեւ ցնոր բաղնիքն Դաղտա մի/159ա/նարէի եւ Հիսար տիպին մինչեւ ցՏօղրամաճի ֆէրմանի խանութն այրեաց, մնալով մեծ տուն մի հրէայ Մէնթէշին եւեթ: Եւ շիջաւ ժամ իբր Շին չորեքշաբթի երեկոյին, որ տեւեաց քսան եւ եօթն ժամ, որ եկերեցաւ ի մեծ չայիրն Եէնի Պազճայի:

Եւ յետ հնգետասան աւուր եղեւ հրկէզ իմն ի Ֆընտըխլը կոչեցեալ տեղին, որ է մօտ Սալը փազարին Պէյօղլուի կողմն, բայց փոքր քան զվերոյիշեալ հրկէզսն:

Բայց այժմ եկեսցուք նոյն ահաւոր եւ սարսափելի հրկիզութեանն, որ բոլոր քաղաքն սարսեցոյց եւ դողացոյց համանգամայնքս հասարակաբար, զմեծսն քաղաքին եւ զփոքրն, զհարուստն եւ զմիջակսն եւ մոխրացոյց զաղքատսն: Եւ մեծատունսն ապքատութեան շղթայիւք կաշկանդեաց եւ զնոսին իսկ ամայաբնակ արար եւ զհասարակս ամենայն, յամենայնից ազգաց զբազումս՝ անապատասուն արեւակէզ արարեալ տոչորեաց, եւ ի գիշերի լեռնաբնակ լեալ արտաքոյ քաղաքին, անձրեւամած արարեալ ի ցեխս եւ ի չամուռն մածուցեալ դողացոյց: Թողլով զկիզեալ անձինս, ասա յիշել այժմ, զոր ի տեղիս իւրեանց փոքր ի շատէն ասելոց եմք: Եւ այսոքիկ ամենեքեան եղեալ վասն բազմանալոյ մեր մե/159բ/զաց եւ սակս բազմանալոյ անօրէնութեանց մարդկայինս ազգի:

Յամի Տեառն 1782. մերս թուականութեանն ՌՄԼԱ, յամսեանն Օգոստոսի Ժ [10], ՌՅԹ սէնէին, բամազանի 12. յաւուր չորեքշաբթի երեկոյին, ժամ իբրեւ երկուքն անցեալ սկսաւ արժանահաս պատուհասն հրկիզութեանս այսմիկ ի ներքոյ կուսէ Ճիւպալիին ի թաղն Քիւչիւք Մուստահայ փաշային, մօտ ի շուկայն Ագապլարի, ուր գոյ Տէյիրմէն մի Զընկուտաքըլ կոչեցեալ: Եւ անտի լայնածոց ծաւալմամբ եւ ի բազում յառաջս որոշեալ աստուստ եւ անտուստ հրոյ արար ճարակ զքաղաքն, եւ ապականեաց զերկիր սաստիկ կիզողութեամբ իւրով: Զորոց զյայտնի տեղիսն նշանակեալ ցուցցուք հատանելով զսահման ըստ դրութեան քաղաքիս:

Զի անտի սկսեալ այրել սաստկաշունչ հողմով արեւելեան եւ հիւսիսային քամւոց սաստկութեամբքն ընթացեալ՝ յաջմէ կողմանէ դէպ ի

յարեւմուտս կոյս մինչ ի Ճումայ փազարի համամն կանգնեցաւ, ուր կայր նախապէս տեղի այրեցեալ յառաջ ժամանակաւ: Եւ ի ձախմէ լայնացեալ ընդ պարսպօք առ /160ա/ հարաւակողմն մինչեւ ի խանթարճիսն կայացաւ: Եւ անտի դէպ ի վեր կոյս դիմեալ այրեաց զԱզոյի դուռն բոլորովին: Եւ միւս ծայրն ճարակեալ դիմեաց մինչեւ ի Սախըզ աղաճին, որ է առընթեր մեծ մզկիթի Սուլթան Սէլիմի, ուր է Զարշամպա փազարին: Յորմէ շառաչիւն արձակեալ վասն բարձրաշէն պալատացն կարդացողաց հրակիզելոց, այրեաց ներ գաւիթին դիզեալ զլաթեղէնսն եւ զամենայն կահսն եւ զկարասիս բազմաց անդ ամբարողաց վասն ապահովութեան լայնարձակութեան դաւթին նոյնոյ Սուլթան Մուհամմէտ Ֆէթիհի ճամուոյն. ուր բոլորովին աճիւնացեալ ոչնչացոյց զնոսա եւ ոմանց զտեարսն ընդ նոցին կիզեաց եւ իբրեւ կիսայրեաց կոճղ դիզեաց: Եւ զանհամար գանձս ոսկւոյ եւ արծաթից եւ պատուական ականց ընդ դեռնի ապականեալ հաւասարեաց:

Այլ եւս զարեւելեան կողմն նոյն ճամուոյն քայքայեաց ամենեւին եւ նոյն կողման մինարէի գլուխն խոնարհեցոյց եւ զոմանս անդ մեռոյց եւ գմրէթայարկ տեղին, ուր կային գերեզմանք նախ/160բ/նի թագաւորաց նոցա կիզեալ քայքայեաց: Այլ եւ զՏէվէ խանին՝ ամրաշէն եւ հաստատահիմն, որ եւ անդ ամբարեալսն ամենայն աճիւնացոյց. եւ զԱթիազարն, զՍարըկէրզ կոչեցեալ տեղին եւ զՍարաճխանէն՝ բոլորովին եւ զխաֆաֆխանէն, եւ զմեծ պալատն թագուհւոյն՝ որ է ի գլուխ Զէյրէկի սարին եւ զՎէֆա մէյտանին, եւ զՊօզլուխան քէմէրին, մերձենալով մինչ ի դուռն Սուլթան Պայազիտի Միւրէքէպճոց դուռն անուանելոյ եւ շուրջն Հասան փաշայ խանին, յորմէ ի վայր դիմեալ եւ մի ծայրն ընթացեալ այրեաց զերկու մինարէից գլուխսն Շահզատէ ճամուոյն (բայց անդ ի գաւթի ամբարեալ եղելոց ոչ վնասեաց ինչ): Եւ զնորին շրջակայս յաջմէ եւ յահեկէ ի դիմաց եւ ի թիկանց եղեալսն այրեաց: Նաեւ զենի օտալարն մեծ եւ զհինն խշլայ անուանեալսն այրեալ տոչորեաց զբոլորն իսկ անհետ արարեալ, միայն գծխահանսն մնացեալ ցցեցեալք: Սակայն կայ առեալ աստ, զայլ տեղիսն ձեռն արկցուք ասել զպղետալիսն:

/161ա/ Զի որպէս յառաջն ասացաք թէ ի Հասան փաշայ խանէն ի վայր դիմեալ հրոյն դէպ ի Կոսկայն, ուր մօտ է մեծ մզկիթին Լալէլի Ճամիսին՝ առ ընթեր Լալէլի աղբերն, զոր շինեալ էր քաջաիզձ թագաւորն Մուստաֆայ նախորդն սորին, ուր եւ ինքն թաղեալ է: Զայս մզկիթ յանկարծակի շրջապատեաց հուրն յամենայնից կողմանց եւ այրեաց, որ ինչ ի նմին գաւթի գոյր բարգեալ եւ դիզեալ զկահս եւ զկարասիս, եւ զմի գլուխ ցրցին կործանեաց, եւ զամենայն գեղեցկութիւն շինուածոյն տգեղացոյց եւ խանգարեաց:

Բայց ո՞ւր դիցուք զտեարսն ընչից, որ այրեցան, տոչորեցան եւ սեւացեալ խանձեցան առաւել քան զհինգ հարիւր անձինս՝ որք ապաստան եղեալք էին ի գմբեթայարկ ամուրն այն. եւ յոլովք ի ներքոյ հիմանն մզկիթի խեղդամահ եղեն ծխովք եւ բազումք ի մէջ ջրոյ շատրվանին կարմրացեալք թէքէանման խարշեցան: Իսկ նորին արտաքնոցի զոգեալն ապրեցան, որք էին բազումք ի նոցանէ հայ ազգաւ:

/161բ/ Զի ահա անդ էր տեսանել զողբ եւ զաղաղակ ընտանեացն այրողաց անձանց եւ զճիչ մերձաւորացն խանձողաց, որք որոնէին ի մէջ անծանօթ եւ այլանդակ դիակացն: Հարք՝ զորդիս եւ մարք՝ զդստերս եւ այլք զայլս ի մերձաւորաց իւրեանց: Եւ հառաչական աւաղմամբ լային ի վերայ աննշան դիոց խանձեցելոց դառնակսկիծ սրտիւք եւ աղիողորմ արտասուօք: Զորս տեսանել եւ ոչ ողբալ չէր բաւական տանել բնութիւն մարդկան: Զի անբանք եւ անասունք եւ արարածոյ բնութիւնք ամենայն արտմել երեւէին, թող թէ մարդոյ մեղի եւ մտաւոր բանականի:

Եւ մինչդեռ յայն կայաք յանկարծ շուրջ զերրորդ ժամու գիշերոյ հինգշաբթի աւուրն, յորում ուրբաթն էր լուսանալոց՝ բորբոքեցաւ հրդեհ միւս եւս ի կողմանէ Լանկայու մերձ ի Ճելլատ ջեշմէսին, ի տանէ ուրումն իշխանի Աղաճքք կոչեցելոյ: Եւ անտի սկսեալ սաստիկ ընթացմամբ աստի եւ անտի /162ա/ այրեաց զրաղում տունս այլազգեացս հայոց եւ յունաց:

Զի յառաջ դիմեալ հուրս այս դէպ ի յաղբիւրն Լանկայու եւ անտի լայնացուցեալ զշաւիղս իւր, կիզեաց զտաճարն սրբոյն Թէոդորոսի որ յունաց եւ առ վեր կոյս ընթացաւ: Իսկ միւս ծայրն ուղղապէս խաղացեալ շուրջ զպարսպօք

մինչեւ մօտաւորիլ սրբոյ եկեղեցոյն Աստուածածնի, ուր է Պատրիարքարանն Հայոց, զոր շատ գուն գործեալ եւ բազում դրամս մսխելով հազիւ թէ զերծաւ տերամբ:

Նաեւ այրեաց զմեծածախ տունն Սախայ զատէ մահտեսի Մարտիրոսին, յորմէ անցեալ հուրն զպարսպօք իբրեւ զլափլիզօղ գազան ամենի հրդեհեաց զպասմաճոց գերխանէսն, որ ի դուրսն Եէնիխաբուլի, իսկոյն ոչնչացուցմամբ լափեաց եւ անհետ արար: Եւ որ ինչ կայր անդ եւս արտաքոյ նոր դրանն Եէնիխաբուլի զտունս Հայոց եւ զգեղեցիկ խահվէխանէսն՝ զոր լցուցանել ետ սուլթան Մուստաֆայն եւ շնորհեաց գանձիւք մերոյս ազ/162բ/գի իբրեւ զպերկիւզար շիքեար, զոր ի պատմութեանն թագաւորիս ասացեալ եմք ի գրգոջն օսմանցւոց թագաւորաց գաւազանագրքոջ[24], տե՛ս անդ. եւ զայն վայր, զոր իբրեւ զնորաշէն դիւղ մի էր առժամայն սրբեաց ի վայրկեան ժամու: Որպէս թէ չէր անդ շինեցեալ շէնք ինչ եւ կառուցեալ զտունս այնքան գեղեցկաշէնս: Բայց միայն երեւէին ծխնելոյզք տանք ցցեցեալք յորոց իմացեալ լինի թէ եղեալ է երբեմն ասա շինութիւնք տանց:

Բայց աղէտ խղճալի եւ խղճութիւնք սգալիք այնք են, զի անձինք անդ բնակօղք ի սաստկանալ հրոյն ի կողմանէ բերթի դրանն, շրջմրջկեալ ասա եւ անդ տեղի փախստեայ որոնեալ չգտանէին բաց ի ծովու կողմանէն, զի այն էր բաց միայն առաջի նոցա եւ այլ կողմունքն շրջափակեալ հրոյ պարսպաւ եւ բօպէ առ բօպէ ծախել փութայր՝ զշէնսն, զկարասիս եւ զանձինս ընչից տեարց:

Ուստի անկար մնացեալ եւ հատեալ ի յուսոյ փրկութեան դիմեցին ի ծովն կոյս մեծ տարակուսութեամբ, ի գժնդակութենէ հրոյ մահուանէ խոյս տուեալք, մատնեցին զանձինս իւրեանց խղճալիքն ի խեղդումն, /163ա/ ապաւինելով ի յԱստուած, զի ապրեցուցէ զինքեանս ի նոյն պատուհասէն ըստ կամաց իւրոց: Եւ մտեալք ի ջուրն թաքեան յերեսաց հրոյն եւ մինչեւ ի կոկորդս իւրեանց զօղեցան ջրով եւ յորժամ գայր բոց հրոյն ի վերայ իւրեանց՝ զգլուխս իւրեանց քարշել ի մէջ ջրոյն ընկղմէին եւ այնպիսի հնարիւք ապրեցան բազումք Տեառն շնորհիւ եւ հրաշագործութեամբն բարեբարին Աստուծոյ: Բայց տե՛ս դու զայնոսիկ փափկասուն անձինսն, որք որպէս տոկացին այնպիսի գժնդակ տանջանացն, որ ի մէջ ջրոյն եւ յերկիւղէ գառնատեսիլ հրոյն, զի կային անդ ներ ծովուն սաստիկ ալեօք ծփելոյ փափկասուն աղջկունք եւ նորածին հարսունք կամնարոյծ մանկամբք: Մանաւանդ երեքօրեայ եւ քառօրեայ ծնեցեալք, մնալով անդ քանի մի ժամս:

Եւ թէպէտ գտանէին անդ ի բացեայ նաւս բազումս, բայց երկնչէին գալ եւ յօդնել նոցա, զի ո՛չ կարէին մերձենալ ի բուռն բորբոքմանէ ալեացն ծովու սաստկացելոյ, զի կարի գժնդակ է այն կողման մրրիկն ջրոյ:

/163բ/ Եւ կանայք, որք էին ի մէջ ջրոյ ծովուն եւ կոհակացն ալեօքն տարաբերեալք լինէին, ձայնէին եւ աղաղակ բառնային ազիոզորմ բարբառով առ նաւսն այնոսիկ, որք տարակաց կային մեծք եւ փոքրկունք, ցուցանելով ապարանջանս իւրեանց եւ գօտիս ոսկեղէնս եւ մատանիս եւ զայլ կանացի զարդս, զորս գտանէին ի վերայ իւրեանց տալ գնոսա եւ յօդնել նաւուք եւ ապրեցուցանել զինքեանս ի վտանգէն զորս կրէին ի մէջ ջրոյն եւ ի տապոյ հրոյն, զի մերձ էին խեղդամահ լինիլ եւ կիզամահ հանդերձ ստնդիայ մանկամբք եւ այլովք: Զի լուաք քանի մի տղայ խեղդիլ եւ ի վերայ ջրոյն տարաբերիլ եւ կիզիլ յերեսս եւ ի ձեռս: Եւ խանձարրապատ երեխայ մի ի քիթն այրիլ ի գիրկ մօրն ներ ջրոյն ի բոցոյն ծաւալմանէն եւ այլ խղճութիւնք յոլովք որ ոչ կարէ պատմել մարդ հողեղէն:

Բայց ո՛չ ոք էր որ ունկնդիր լինէր նոցա եւ գալ ի յօգնութիւն: Զի եւ ո՛չ կարէին գալ իսկ նաւքն այնոքիկ, զի ալիք ջուրցն լեռնակուտակ բարձրութեամբն եւ խստութեամբն հողմոյն

24 «Գաւազանագիրք օսմանցւոց թագաւորացն» - Մեր կարծիքով խօսքը ներկայումս Երեւանի Մատենադարանում հանգրուանած թիւ 10716 ձեռագրի մասին է, խորագրուած «Գիրք պատմութեան օսմանցւոց թագաւորացն» (ձեռագրի համառօտ նկարագրութիւնը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հատոր Գ, կազմեց Ա. Մալխասեան, Երեւան, 2007, էջ 97-98):

բախմանէն ո՛չ կարէին նաւուք մերձենալ առ նոսա: Բայց ամէնագթած Տէրն օգնեաց նոցա հրաշիւք պահելով զնոսա անդ եւ ազատեաց զնոսա: /164ա/ եւ փախուցեալ ինչք եւ ստացուածք նոցա բազումք այրեցան եւ տեարք ընչիցն զգեցեալ հանդերձիւքն, հազիւ թէ զերծան մազապուր փախստեամբ:

Այլ արդ, հայեցուք զմնացեալ բանս մեր, զոր թողաք յառաջն, որ էր ի կողման Քրդք տիրէկին: Քանզի էանց անտի կիզելով զնա, յետոյ միաւորելով ընդ նախկին կրակին (զի այսոքիկ որ ասացաք Աղաճըքի տանէն ելեալն էր), այրեաց զՏավուտ փաշայան զերկոսին, նաեւ զԱխ սարայն եւ զԱվրէտ փազարն եւ մինչեւ մօտ ի Մէլլէխանայի դուռն պարսպին եւ մօտ ի դուռն Սիլիվրի:

Բայց տե՛ս զանտանելի ցաւ վշտացն անձանց կողմանն Սամաթիայու, զի կրկնեցաւ տառապանք նոցա եւ վիշտք նոցա դառնակսկիծ եղեւ յոյժ, որ նախ այրեալ էր եւ սկսեալք էին շինել, ոմանք լրացեալք եւ ոմանք կիսատի եւ ոմանք դեռ սկսեալք, այժմիկ եկեալ բոլորովին սրբեաց, այրեաց, մանրեաց ժանեօքն իւրովք եւ զմնացեալսն առ ոտն եհար ըստ տեսլեանն /164բ/ մարգարէին Դանիէլի: Այլ եւ զգեղեցիկ տաճարն սրբոյն Գէորգայ բոլորովին այրեաց եւ հողոյ հաւասարեաց մեղք մեր, զի ըստ ասիցն Աստուծոյ, թէ նախ ի տանէ իմմէ առիւ զվրէժխնդրութիւն եւ այժմ տեսաք աչօք մերովք զպատուղն մեղաց մերոց եւ վայելեցաք դառնորակ կսկիծ յանցանաց մերոց. վա՜յ ինձ:

Եւ յեօթանց տաճարացն յունաց ազգին յայնմ կողման մինն միայն զերծաւ, որ յանուն սուրբ Աստուածածնի էր կերտեալ, զոր կոչեն Պէլլոկրատ[ի]լիսէ. ըստ որում թաղ մի ամբողջ տունք յունաց: Իսկ զայլսն ամենայն որպէս ասացաք՝ գրեթէ զբոլորն ջնջեաց, բաց ի ծովեզերեայ քանի մի տանց մերձ եղելոց Նաալը խաբուսիին. նոյնպէս եւ ի ներքոյ բերդին տունք տաճկաց:

Եւ յետ որոյ զայս արժանահաս պատուհաս աստուածային առեալ զլայնագոյն ծոց քաղաքիս, երթալով երթայր եւ չէր ոք կարօղ որ ընդդէմ նորա դառնայր: Վասն որոյ աճապարեալ գնաց մինչեւ ի եօթնաշտարակն այն ահագին բարձրաբերձ եւ հնակերտ ուր զմեծազգիս պահէն ի կալանս եւ զգեսպանս թագաւորացն սկսողացն ընդ սոսա զպատերազմ: Եւ եկեալ ասա դադարեցաւ՝ ո՛չ գտա/165ա/նելով զնիւթ պատեհաւոր եւ խորտակեալ զոսոսա մնաց անդ Տեառն շնորհիւ:

Իսկ զյոլովութիւն մարդկանց այրեցելոց կամ ծխախեղդ մեռանելոց, որպէ՞ս կարեմք զհամարս նորա ի ձեռն արկանել: Զի բաց ի Լալէլի Ճամիսիէն, զոր գրեցաք ի բազմաց զսկաւն յամենայն ուրեք գտանիւր որպէս վկայեցին տեսօղք եւ մեք իսկ տեսաք աչօք մերովք խանձեցեալք ի կողմն Սամաթիայու իբրեւ զկիսայրեաց սեւացեալ կոճղ եղեալք, բազում յոյժ ի փողոցս եւ ի յանցս ճանապարհաց անկեալք, շատսն անճանաչ եղեալք: Եւ որպէս աչօք տեսաք եւս սուրբ Գէորգեայ եկեղեցւոյն տակն ներ միոյ վերանէի աղջիկ մի այրմամբ մեռեալ ամբողջ մարմնով պառկեալ յանթատակոյն իւղն մարմնոյն աղբեբացեալ: Եւ ծեր մի եւս առընթեր նմին կիզեալ եւ եէնիխաբուլի դուրսն առաջի խահվէխանէից ծեր մանաւ մի խանձեցեալ, մեռեալ եւ ի մէջ ջրոյն մնացեալ եւ այլ բազումք: Այր եւ կին ի միասին լուաք այրեալ. /165բ/ մարք զորդիս ի գիրկս առեալ եւ անկեալ յերկիր. եւ ոմանք զաւակունս թողեալ եւ զինքեանս ապրեցուցեալ: Զորս բարձեալ յարքունուստ թաղեցին զանելաբար ի տեղի ուրեք, զերկու եւ զերիսն ի միասին:

Իսկ մարդիկքն ի կողմանս Սամաթիայու տեղի եւ դադար ո՛չ գտանելոյ ի քաղաքամիջի տեղիս, ապա ելեալ արտաքոյ քաղաքիս ի բացութեայ վայրս բնակեցան քաղցով եւ ծարաւով, զի քանի մի աւուրս (վասն այրեցեալ գոլոյ խանութից աղօրեաց եւ հացեփեաց): Լալիւն տղայոց անդ տեսանէին յաճախեալք եւ մորմոքմունք ծնողացն ո՛չ գտանելոյ հաց եւ այլ ինչ, զի տայցէին զաւակացն իւրեանց, եւ դադարեցուցանէին զնոսա ի լալոյ (ո՞հ բնութիւնս մարդկայնոյ զի տեսեալ այսպիսի աղետալի ժամանակ եւ ո՛չ երբեք կասեցաւ ի թիւր գործոց իւրոց եւ ի բարկացուցանելոյ զարարիչն իւր, որ այսպիսի ձաղանօք խրատէ միշտ եւ ո՛չ արթնանամք ի քնոյ մեղաց եւ խորդամք դեռեւս ներ խոր քնոյ մեծամեծ յանցանաց. վա՜յ ինձ): Մինչեւ գտին զտեղի յարկի ի տունս մնացորդաց քաղաքիս, կամ ի շրջակայ /166ա/ գիւղօրէս:

Բայց ոմանք խղճաբար կացեալք յանբնակ տեղիս արտաքոյ շինութեանց եւ վասն ո՛չ գտանելոյ զտնակ ինչ եւ կամ վարձ տանց ծանրացեալ գոլոյ եւ անկարօղ լինելոյ հատուցանել, ուստի շինեալ խուղս ի յաւերակս բնակէին ամսօրեայ ժամանակաւ եւ այլ աւելի. արեւակէզ ի ցերեկին եւ տառապեալ ի յանձրեւին, իսկ ի գիշերի լեալ արհաւրաց անզգամաց ոլոքամերկից՝ թողումք ընթերցողացդ զայս պատմութիւն իմանալ զխղճութիւնս նոցա:

Զի ոմանք ամենեւին բարձին ի սրտից իւրեանց զխիղճս, զի արտաքս մնացեալքն երթեալ պաղատէին եւ յոգւոց հանելով աղաչէին, թէ տո՛ւք մեզ ի յանկեան ուրեք տան ձերոյ զբնակութիւն ինչ յատոր տեղւոջ, թէ եւ քիլէր եւ մագազայ լինիցի, միայն թէ հանդերձ ընտանեօք մտանիցեմք եւ պատսպարիցիմք ի յարտաքին վտանգաց, արհամարհէին եւ վարէին արտաքս՝ տեղ չունիմք՝ ասելով եւ կամ վարձս ծանուցս պահանջէին: Անգութքն այնոքիկ պահ գտեալ պատեհաւոր երկպատիկ եւ եռապատիկ եւ այլ աւելի վարձիւք տուն շնորհէին. ոմանք եւս արտաքս մնացեալոց եւ նոքա անճար գոլոյ եւ արտաքս մնալոյ փոխանակ՝ տալ եւ ընտանեօք նստել անդ փու-/166բ/թային ոչ հայելով ի ծանրութիւն քիրային եւ չարժողութիւն տան՝ յորս բնակելոց էին:

Ուրեմն տե՛ս դու զանգթութիւն եւ զանաստուածութիւն անձանցն այնոցիկ ունողացն զտունս եւ զբնակութիւնս անկէզ, որք մատուցանէին առանց խղճի մտաց այնոցիկ խղճալեաց արտաքս մնացելոց: Այլազգիք աղեխարշ սրտիւք եւ անհամեմատ հաւատիւք եւ կրօնիւք գթային եւ անվարձ տեղ շնորհէին քրիստոնէից եւ հաւատակիցքն անաւս արարեալ ամենեւին, անգութ ղէպ ի նոսա լինէին եւ թէ գթայինն ի շահ եւ ի յօգուտ իւրեանց փութային:

Ուրեմն զի՞ երկարեցից զբանս իմ եւ ճմլեցից զսիրտ իմ, որ եւ ես եմ իսկ մինն ի նոցանէ բազմօք խրատեալս եւ ո՛չ զգաստացեալ. ատա՛ղ անձինս յանցանօք լցելոյս: Եւ այս հրկէզ տեւեաց ըստ իմս իմացման վատսուն եւ չորս ժամ ամբողջ: Որ իբրեւ քսան եւ հինգ ամօք յառաջ եւս եղեալ է. յամի ՌՄԶ Յունիսի ԻԴ [24], 1179 շէվալի 9, յաւուր կիւրակէի Լուսաւորչի բարեկենդանի երեկոյին ժամ իբրեւ 3, սկսեալ է հրայրեցումն Ճիւպկէ Ալիի դրսէ բերդին եւ մտեալ ի մէջ բերդին այրեալ է զկողմն բոլոր Սուլթան Սելիմին, զՍուլթան Մուհամմէտ Ճամիին, զՍառաճխանան, զԱթթարարն, զՀա/167ա/սանփաշայ խանի կողմունքն, զՊօղտուլան քէմէրին, Լանկա եէնիխաբուն, Մուսալայ, Շահզատէ պաշին, Էսկի օտալարն, Ախսարայն, Քըրք տիրէկն, Ճէռահ փաշայն, Օտունխաբույի ներսն, մինչեւ խուղուս պէլիի մէկմար չէշմէսին, Ալի փաշայի շարշրն, Աղայի դրան հարէմի կողմն սրբեալ է, իբրեւ երեսուն եւ վեց ժամ այրեալ է եւ Աստուծով շիջեալ»[25]:

25 Ստորեւ բերում ենք 1782 թուականի ամռանը Կ.Պոլսում բռնկուած հսկայական հրդեհի աշխարհագրութեան վերաբերեալ մեկ այլ հայերէն բնագիր, իր հաղորդած լրացուցիչ մանրամասնութիւններով.

Յաղագս մեծի հրդեհին Ստամպօլու

Յամի Փրկչին 1782. ի յօգոս. 10. ըստ հնոյն եւ ի սէնէի տաճկաց 1196. ի ռամազան ամսոյ 12. եւ ի թագաւորութեան սուլթան Համիտին եղեւ հրդեհ մեծ եւ դառնաղէտ ի Ստամպօլ, որով այրեցաւ երրորդ մասն ի հինգ մասանց Ստամպօլու եւ եղեւ Ստամպօլ դաշտ ապականութեան:

Տեւեաց հրդեհն գրեթէ աւուրս երիս. վասն զի տեւեաց ժամս վաթսուն եւ երկու, որոյ նմանն չէ եղեալ ասեն ի Ստամպօլ:

Արդ՝ այս հրդեհ փչմամբ սաստկահնչիւն փոթեազ հողմոյ սկսաւ ընդ միոյ ծայրին ի Ճիպալիէն ի տանց ի ներքս պարսպին եղելոց՝ յերրորդ ժամու գիշերին, որ լուսանայր ի հինգշաբաթի եւ անդ զօրացեալ սկսաւ գնալ դէպի ի յԱղայ խափուսին եւ յԱքսարայն: Եւ միւս ծայրն յերկրորդումն աւուր սկսաւ ի Վլանկայէն, լինելով անդ եւ այլ նոր իմն հրդեհ խունտախանգութեամբ անզգամացն տաճկաց եւ այրեալ զՎլանկայ՝ սկսաւ եւ նա զօրանալ եւ գնալ դէպ ի նոյն Աքսարայն՝ մերձ որոյ միացեալ երկուց հրդեհիցն՝ սկսան յառաջ գնալ ընդ արեւմուտս այրելով զամենայն բնակութիւնս եւ ժամանեալ ի յԻետի դուլէն, որ եւ այրեցաւ, վերջացաւ եւս հրդեհն:

Բայց առ ի լիով իմանալ զմեծութիւն հրդեհիս՝ նշանեսցուք նախ զսահման նորա եւ ապա զմիջի հրկզեալ երեւի թաղս կամ զտեղիս: Սկսանի հրդեհն ի Ճիպալիէն եւ ձգի սահմանն անտի դէպ յարեւելս՝ ոչ ելանելով հրդեհին արտաքս ի պարսպէն մինչեւ ի յՈւնկնափանն այրելով անդ զամենայն պէյլիկ ջաղարջս եւ ի խանթարճիներն առ վայրոք Օտուն խափուին: Անտի վերանայ սահմանն դէպ ի հարաւ ի Մէֆայ մէյտանն ի յԱղայ խափուսին, ի Ռէօփրիլիւ օղլուին սարայն հանդէպ Էսքի սարային եւ անցանելով մերձ

վէզնէճիներուն իջանէ ի Կօսկան, ի յէշէկ չէշ-մէսին, ի Մուսալլան եւ ի յԵալընըզ էքմէքճին մինչեւ ցպարիսպն հարաւակողման քաղաքին: Եւ ապա ձգի առ նոյն պարսպաւն դէպ յարեւ-մուտս մինչեւ ի դրսի Իէնի խափուն եւ անտի առ պարսպաւն Վլանկայ պօստանին մինչեւ ի Տաւութ փաշան եւ անտի առ պարսպաւն մինչեւ ի Սամաթիայ, ի Նաոըխափուն եւ ի յԻետի դուլէն: Անտի վերանայ սահմանն մինչեւ ի յԱլթը Մէոմէոն եւ մօտ Սիլիվրի խափուին եւ անտի ի յԻէնի պախճան եւ ի Զարշամպայ փազարն՝ ուր 20շաբաթէ զաւերակն հրդեհին Պալատու, որ քսան եւ ութն օր յառաջ եղեւ քան զայս հրդեհ եւ անտի խոտորելով ընդ Կոէկօճ՝ այսինքն ընդ Ուռումէլակողմն գնայ ի Հալըճըլար քեօշկին եւ ի բնակութիւնս արեւելակողման Սուլթան Սէլիմին եւ դառնայ անտի ընդ արեւելս եւ իջանէ մերձ Այա խափուին եւ գայ ժամանէ մինչեւ ի նոյն Ծիպալին: Իսկ երեւելի թաղք կամ տեղիք հրկիզեալք են այսոքիկ: Ծիպալին, Զէյրէկն, Պօզտուղան քէմէ-րին, Մէֆայ մէյտանն, Աղայ խափուսին, Շահ-զէտէնէրն, Իէնի եւ Էսկի խըշլանէրն իէնիչէրոց, Լալէլին, Կօսկան, Էշէկչէշմէսին, կէսն Մուսալ-լային, բոլոր Վլանկայ կամ դրսի Իէնի խափուն ընդ բնաւից տանց եղելոց, ի նոր լըցուած տեղին արտաքոյ նոյն Իէնիխափուի դրանն, ուր եւ ոչ ցից մի մնաց անկէզ. ընդ որս եւ պասմաճիներն ամե-նայն. Աթփազարն, Սուլթան Մէհէմէտն, Սառաճ-խանան, Մօլլայ Կիւրէնն, Էթմէյտանն, Աւրատ փազարն, Աքսարայն, Ճէլլատ չէշմէսին, Ճեռահ փաշայն, Տաւութ փաշայն, Բոլոր Սամաթիա, յո-րում այրեցաւ եւ ժամն Հայոց սրբոյն Գէորգայ՝ մնալով ի նմին միայն քարաշէն մատուռիկն սուրբ Երրորդութեան, յորում հազիւ բովանդակին եր-կուհարիւր անձինք: Այրեցան ի նոյն Սամաթիա իբր հարիւր նոր կառուցեալ, այսինքն չաթմիշ եղած տունք, մինչ քառասուն օր յառաջ այրեցաւ կէսն նոյն Սամաթիոյ:

Այրեցան եւս անդէն այն եալընք, որք ի դրանէն Սամաթիոյ ձգին դէպ ի Տաւութ փաշայն եւ ընդ նոսին իէմիշճիներն եւ խահվէճիներն, որք առ դրանն. իսկ եալընքն՝ որք ձգին ի մէյտանէն դէպ ի Նաոլընխափուն՝ զերծան ի հրդեհէն, որպէս եւ տունք քանի մի անդ ի ներքս պարսպին: Նաոլը խափուն եւ Իէտի դուլէն, յորում այրեցան եւ տունք եղեալք ի մէջ դուլէններուն, բայց ի նմին տունք քանի մի դէպ ի Մէոմէո դուլէն՝ զերծան: Մեծ Իմպռահոռն, Լէպլէպիւճիւքեօշէսին, Ալթը Մէոմէոն, Զինար տիպին, Տայրէն Հէքիմօղլու Ալիփաշայ ճիամիսինն, Իէնի պախճան, Զար-շամպայ փազարն, Հալըճըլար քեօշկին եւ արեւելակողման բնակութիւնք Սուլթան Սէլիմին: Ցայսմ հրդեհէ այրեցան ժամք յունաց 6 եւ մի ժամ հայոց վերոգրեալն եւ ճամիք եւ մէչիտք տանկաց իբր երկու հարիւրք: Իսկ տունք իբր երեսուն հազարք, որոց երկու հազարքն էին տունք յունաց եւ հայոց եւ մնացեալքն տանկաց, յորս էին մեծա-մեծ խօճախք իրիճալից եւ մանաւանդ կարդացո-ղացն տանկաց իբր հազարք, որոց պատճառաւ թէպէտ վայրն հրկիզեալ մեծ է, բայց տունք այրե-ցեալք համեմատութեամբ այլոց բնակութեանց խիտ եղելոց, սակաւ:

Ցայսմ դառնաղէտ հրդեհի այրեցան նաեւ բա-զում մարդիկ, որոց մեծ մասն էին ի յայնց տանկաց, որք կահիւք եւ կարասիւք տանց իւրեանց զգուշացան ի սէլաթին ճամիս եւ ի բակս նոցին, ուր ի հրդէհիլ այնց կահուց եւ կարասեաց այրե-ցան եւ ինքեանք ընդ նոսին չգտանելով զելս փա-խստեան: Ոմանք եւս մնալով ի տան վասն պի-տոյից եւ կամ վասն անկարողութեան իւրեանց՝ գտան յետոյ կոճղ այրեցեալք: Ոմանք եւս խեղդա-մահ եղեն ի ծխոյ հրդեհին, թէ անդ ի վերոյգրեալ ճամիս եւ թէ այլուր: Ոմանք եւս ծովահեղոյց եղեն եւ սոքա էին ի բնակչաց նոր լըցուած տեղւոյ Իէնի խափուին. վասն զի հրդեհն նախ զդրունս ելանելոյ եւ մտանելոյ յայն տեղի այրելով՝ չտայր անցս փախուցելոցն անտի. վասն այն եւ նոքա ի ծովն զեղուին եւ անդ ոմանք հեղձնուին եւ ոմանք յաճախիցս թաղվելով ի ջուր եւ ելանելով ի վեր առ ի պահիլ ի թափուածոյ շանթից տանցն այրե-ցելոց՝ զերծանէին. յողորմելեացս յայսցանէ ոմանք եւս որք փախուցեալ էին ի Վլանկայ պօս-տանին, այրեցան անդ ընդ կարասեաց իւրեանց, ուր եւ բոյսք եւ ծառք պօստանին ըստ կիսոյն այ-րեցան եւ ըստ կիսոյն ոտնակոխ եղեն:

Իսկ թիւ ամենայն այրեցելոցս եւ խեղդեցելոցս այսոցիկ էր իբր երկու հազար անձանց, որպէս ստուգեցաւ ի դիոց նոցա:

Պատճառաւ այսր հրդեհի բազումք անյարկ մնա-լով՝ ցիրուցան եղեն յայլ մօտակայ եւ հեռաւոր գիւղս եւ քաղաքս: Բազումք եւս մանաւանդ ի մեծամեծացն տանկաց փէրմանով վէզիրին բռնի յափշտակէին զտունս ոչ այրեցեալս՝ ի տեարց նոցա եւ բնակէին ի նոսա: Իսկ կորուստ ընչից եւ կահուց եւ կարասեաց տանցն էր անպատմելի, վասն այն եւ աղէտ տեարց տեանց այրեցելոց անտանելի:

(Տե՛ս Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի մատենադարան, ձեռ. 2057, թթ. 1ա-4ա:

Մեր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այս անանուն փաստաթղթի եւ կից հրդեհի տարածման գծագրի իրական հեղինակը Մխի-թարեան Վարդապետ Հ. Զաքարիա Ալեքսա-նեանն է: Վերջինս իր ձեռնարկած գործի մասին գծագրի կիսատ բացատրագրի ներքեւում աւե-լացնում է. «Ցանդիման թուագրաց ինչ թողաք պարապ, զի թէ կամեսցիս գրել եւ զայլ տեղ

նշանեսցես այնու թուագրովք: Իսկ նշանակեալքն թէ ոչ իցէն ուղիղ իգգապէս, մի՛ մեղա՛թեր, զի ոչ էր կարելի»:

Սբ. Ղազարի դիւանում պահուող հրդեհի մի այլ գծագիր (արուած Մխիթարեան քարտէզագիր Եղիա Էնտազիանի ձեռքով) շատ աւելի մանրամասն ու դասակագրուած է ներկայացնում հրդեհի ընդգրկած աշխարհագրութիւնն ու տարածումը: «Պատկեր հրդեհին մեծի, որ ի Կոստանդնուպոլիս հանդիպեալ յամին 1782. յօգոստոսի 21. ըստ նոր տօմարին եւ ի 12. ռամազան ամսոյն, առ տէրութեամբ Համիտ բռնակալին հագարացւոց. որ եւ տեւեաց զերկուս եւ զերիս գիշերս. այս է ժամս 64. սկսեալ ի Ճիպալիէն եւ ձգեալ ի հարաւ կոյս մինչեւ ի Վլանկայ քերելով առ պատրիարգարանաւն հայոց եւ յարեւմուտս կոյս մինչեւ ցԻէտի ղուլէն, իսկ ի հիւսիսակողմն մինչեւ ցսուլթան Սելիմ եւ անտի մինչեւ ցՉարշամպա բազարն, ուր միացաւ ընդ հրդեհին Պալատու, որ հանդիպեալ էր ամսօրեայ մի աւուրք յառաջ քան զայն՝ զմիջոցն համօրէն թափուր թողեալ յամենայն բնակութենէ, զորոց զերկոցունց եւս զտեղիս նշանագրէ կարմրանիշ գոյնն. որպէս եւ երեւի քաջ յայս պատկեր, զոր նկարագրեալ է աշխատասիրութեամբ վերապատուելի Հայր Զաքարիային մերոյ ի Կոստանդնուպոլիս եւ օրինակեալ ճշդիւ ի Վէնէտիկ ի նոյն ամի ի նոյեմբերի 25. ի վանս սրբոյն Ղազարու: [Ապա այլ գրչով՝] ձեռամբ Հ. Եղիայի Էնտազեան»: Զոյգ գծագրերը տե՛ս յօդուածի վերջում:

1782 թ. Կ.Պոլսի հրդեհի մանրամասն նկարագրութիւններից է Հ. Յովհաննէս Թովմաճանեանի «Պատմութեան» 28-րդ գլուխը, որ ամբողջութեամբ բերում ենք աստ.

Գլուխ ԻԸ. Յաղագս երից մեծամեծաց հրդեհութեանց Կոստանդնուպոլսոյ եւ ի Սարքեար զտուն շինելոյ Թովմաճանի եւ բարեկամանալոյն անդ ընդ Կարծօն Դեսպանի եւ վասն վախճանելոյ Տիզօղլուին եւ փոխանակելոյ որդւոյն ի տեղի հօրն մէքտերհանէով եւ բացորոշելոյն գնալ ի կողմն Թրեստացւոց եւ բաժանելոյ ի վաճառակցութենէ որդւոցն եւ թղթակցելոյ Յոհաննէս Աղայի ընդ Թովմաճանի վասն Պատրիարգին եւ մինչեւ ցելանելն ի Կոստանդնուպոլսոյ

Յայսմ ամի մեծ տագնապանք հրդեհութեանց եղեն ի Կոստանդնուպոլիս, որոց առաջինն էր ի Սամաթիա 1782 յունիսի 28 եւ էր ի ներքս բերդին եւ եկն մինչեւ ի տունն Թովմաճանի եւ նա եւս զկահ եւ զկարասի տանն, որքան կար եղեւ՝ եդ ի նաւակս, զի ծովեզերեայ եալը էր, ընդ հրդեհ եւ ընդ տունն Թովմաճանի ոչ այլ մնաց, բայց միայն բարձր որմն բերդին եւ նա պատսպարեաց եւ հուրն ո՛չ կարաց անցանել յարտաքս: Եւ այսպէս բարերարն Աստուած պաշտպանեաց զտունն Թովմաճանին եւ այլ բազում տունք եւ կրպակք հազարաւորք այրեցան: Եւ տեւեաց հրդեհն ժամս մետասան: Եւ յետ չորեքտասան աւուրց յուլիսի 12, մեծ քան զառաջին, սկսաւ ի Պալատու մինչեւ ի Եէնիպահճէ եւ այրեցան հազարաւոր տունք եւ հարիւրաւորք ճամիք եւ բաղանիկք, վաթսուն մահիալէ եւ տեւեաց ժամս քսան եւ չորս: Եւ յօգոստոսի առաջին աւուրն Թովմաճան սկսաւ շինել զտուն ի Սարքեար եւ յետ տասն աւուրց՝ 1782 օգոստոսի 10ին, մեծ հրդեհն սկսաւ ի ներքին կողմն ի Ճիպալիէն մեծ հիւսիսային հողմով, որ եւ մօտ էր տանն ամուսնացեալ Կատարինէ դստերն Թովմաճանի, բայց ի վերայ հողմոյ եւ բերդէն դուրս լինելով ազատեցաւ: Սակայն այսպիսի անտանելի հրդեհմունք ո՛չ երբեք էր եղեալ, քանզի ի բազում ճիւղս բաժանեցաւ, ի տեղիս տեղիս սկսաւ այրիլ զանհամար տեղիս տեւելով զաւուրս ինչ: Եւ բաց ի յայսմ հրդէհմանէս, երկրո[ր]դ աւուրն եւս ի Վըլանկայ՝ մերձ եկեղեցւոյ յունաց սրբոյն Թորոսի եւ այլ հրդեհմունք ի տանէ տանէ կի ուրումն: Ի միեւնոյն ժամանակի եւ նա եւս սկսաւ ի ճուղ ճուղս բաժանիլ եւ մի ծայրն մնաց ի Վլանկայ եւ ի Եէնի դաբուին, թէ ներսի կողմն եւ թէ արտաքոյ բերդին բոլոր պասմաճիք եւ բոլոր նոր ծովեզերեա[յ] տունք հայոց եւ փուռն հացի եւ Ֆրաճելայի եւ բաղանիքն եւ կրպակք՝ բնաւքն այրեցան: Իսկ միւս ծայրն գնաց ի Տաւուք բաշա՝ ի Սամաթիա եւ տունն Թովմաճանի վերստին յորոգայթի էր եւ ինքն ո՛չ էր ի տան, այլ ի Սարքեար զհետ էր շինութեան տանն եւ հասեալ որդիքն եւ բարեկամք նորա զկահ կարասիս եւ զզարդ տանն եդեալ են ի մեծ նաւակ մի եւ ընտանիքն յուսահատեալ, բարձի թողի արարեալ զտունն՝ փախուցեալ են ի բուրաստան ինչ: Եւ հրդեհմունքն ի Սամաթիայի բերթէն արտաքս ելեալ ի մի կողմն զամենայն այրեալ՝ էանց ի ներքս, իսկ ի կողմն տան Թովմաճանին չէ անցեալ եւ անտի գնաց հուրն ի կողմն Նաալը դաբուի եւ ի Եէտի ղուլէն եւ յետ այրելոյ զամենայն, նաեւ ի մէջ Եէտի ղուլէի մեծ բերդի եղեալ տունսն եւս այրեաց եւ զի այլ ինչ ո՛չ մնաց այրելոյ՝ վասն այն շիջաւ այս կողմն: Իսկ ընտանիք Թովմաճանի կացեալ ի բուրաստանի, անդ ուր էին փախուցեալ մի գիշեր եւ մի ցերեկ եւ ապա լալով եւ յուս[ա]հատեալ կամէին գնալ յայլ ինչ տեղի: Եւ ի նմին ժամանակի լուան յումեմնէ, թէ ի Սամաթիա, յայսկոյս ի կողմն դրան Նաալրին, չեն այրեալ եալրներն, բայց ո՛չ հաւատացին, ուստի մինն ի բարեկամաց տիկնոջն Թովմաճանին ի մէջ կիսաշէջ հրոյ եւ մոխ[ր] ոյ արշաւելով գնա[յ] եւ տեսանէ զտուն Թովմաճանի, որ Նախախնամութեամբ Բանին Բարձրելոյն չէ այրեալ: Ուստի վազվազելով գայ աւետիս տայ տիկնոջն եւ առեալ տանի զնա ի տունն իւր ուրախութեամբ: Իսկ միւս՝ ի Ճիպալիէն ելեալ հրդեհ-

մունքն հասանի եւ տարածի ի Ունդաբան, ի Զեյրէկ, ի Աթբազար, ի Սուլթան Մէհմեմմէտ, ի Աղա դաբուսին, ի Սիլէյմանի, ի Շահզէտելեր եւ ի մեծ Ղըշլան եէնիչերիից, ի Սառաջհանէն, ի Գոսկա, ի Լալէլի, ի Աքսառայ, ի Մոլլա Կիւրանի, ի Հասեքիլեր չարշըսը, ի Աւրէթբազար, ի Զնարտիպի եւ խեղճ ողորմելի հայոց մեծ եւ փառաւոր Սուրբ Գէորգայ եկեղեցին՝ Սուլու Մանաստրն, ի Քիւչիւկ Մէյտան, ի Հաճը քատրն, ի Միւստաֆա բաշայ եւ մինչեւ ի բերդն Սիլիւրիի դուռն շիջաւ: Եւ այս անտանելի հրդեհմունքս մեծ հողմով տեւեաց ժամս 62 եւ սպառեաց ի հինգ մասնէ զչորրորդ մասն քաղաքին: Այլ եւս հազարաւոր անձինք բազումք այրեցան եւ ցրուեցան աստ եւ անդ: Իսկ մնացեալքն, ոմանք՝ վրանօք, ոմանք՝ ի հրդեհեալ տանց գետնատունս, այսինքն ի մաղազայս եւ ի նկուղս, այսինքն՝ ի պոտուրումս բնակէին, անտանելի խ[ե]ղճութեամբ: Եւ այն գեղեցիկ շէն քաղաքն վայրենացեալ, խոպանացեալ, տոչորեալ մոխրաթաւալ դաշտ անբնակ եղեւ: Եւ զաւուրս ինչ զհաց ուտելոյ եւ զայլ ինչ ո՛չ գտանէին, զի փուռքն հացի, կրպակք մսոյ եւ այլ պիտոյից կրպակք՝ բնաւքն այրեցան, մինչեւ ի մերձակայ քաղաքաց եւ գիւղից բոնութեամբն դատաւորաց ետուն բերել: Իսկ Թովմաճանն, յետ երկուց աւուրց, ընդ լսելն՝ եկն ի Սարրեարէն եւ ետես զտունն, որ Նախախնամութեամբ Տեառն, զի զերծեալ էր ի հրդեհմանց, ուստի գոհութիւնս բազումս մատուցանելով Տեառն, դարձաւ ի Սարրեար առ ի եզերել փութով զսկսեալ շինուածն, զի այնու հետեւ հիւսք, այսինքն՝ տիւրկերք, դժուարաւ գտանին, վասն բազմաց շինուածոց: Եւ ի հոկտեմբերի 15ին եզերեաց զշինուածն Սարրեարի տան, զոր օգոստոսի առաջի յօրէն սկսեալ էր. իբր 75 աւուրն եզերեցաւ: Եւ 1783 ապրիլի 29ին Թովմաճանն ընդ որդւոյ հանի Աբրահամին եւ ամենայն ընտանեօքն գնաց ի Սարրեար, ի նոր տունն եւ ամենայն բարեկամք եկին ի շնորհաւորել: Այլ եւս Տիւզօղլու Միքայէլ աղան, որ ո՛չ գնայր յումեք տուն, բայց մեծ սէրս ընդ Թովմաճանի ունելոյ վասն, բազմիցս գայր ի Սարրեար եւ երբեմն եւս առեալ զԹովմաճանն գնային ի զբօսանս, զի փոքր ինչ ունէր զտկարութիւնս Միքայէլ աղան: Եւ Վենետիկու դեսպանն Զելենցայ Ակուստին Կարծօնն, մերձ ի Սարրեար՝ ի Պոյուքտէրէ բնակէր յամառնային ժամանակս: Եւ այս Կարծօնն, յաւուր միում ընդ անցանելն առաջի տան Թովմաճանին, ասէ ցԹովմաճանն.

– Քո՞յ է այս նոր տունն: Եւ նա.

– Այո՛, ծառայիդ է, ասելով, հրաւիրեաց զնա եւ զորս ընդ նմա եւ մուծեալ զնոսա ի ներքս շրջեցոյց ի վեր, ի վայր յամենայն տեղիս: Եւ ապա նստուցեալ զնոսա ի փառահեղ զարդարեալ սենեակն արար պատիւս: Եւ Թովմաճանն սկսաւ պատմել նմա, թէ ես քանի մի անգամ եկեալ եմ ի Վենետիկ եւ թէ Վենետիկ քաղաքն յոյժ սիրելի եւ ազնիւ քաղաք է, վասն կուսութեանն եւ ո՛չ ուրեք գտանի այնպիսի կոյս քաղաք, զի այլ քաղաքք հանապազ փոփոխականք են, որպէս զ յոռի կանայս ի բազմաց ձեռս անցանեն: Եւ յորժամ լուաւ Կարծօնն զայս, թէ կոյս անուամբ դրուատէ զիւր քաղաքն զՎենետիկ, ասէ ցԹովմաճանն.

– Սիրտ իմ յոյժ սիրեաց զքեզ, վասն որոյ կամիմ, զի ի վաղիւն պարտիս գալ ի պալատ իմ եւ ճաշեսցուք ի միասին: Եւ ի միւսում աւուր գնաց Թովմաճանն առ նա եւ անդ եւս զպատմութիւնն հապեշին առնելով՝ յոյժ սիրահարեցան ընդ նա եւ հանապազ ո՛չ անցանէր շաբաթ, զի գայր ի տուն Թովմաճանի եւ ընկերացեալ ընդ նմա տանէր ի պալատ իւր ի ճաշ: Եւ ի ձմերան եւս, որ բնակէր ի Պէյօղլու նոր գնեալ տունն Թովմաճանն, առաքէր զսպասաւորս եւ հրաւիրէր զնա հանապազ: Եւ վերոյ գրեալ Տիւզօղլու Միքայէլ աղան, նոյն հիւանդութեամբն ծանրացեալ անկաւ ի մահիճս ի ծովեզերեայ տունն իւր, որ է ի Խուրուչէշմէ եւ Թովմաճանն բազմիցս գնայր ի տեսութիւն նորա, զի յոյժ սիրահարեալ էին միմեանց ընտանեբար: Եւ ի յօգոստոսի 17ին, ի հինգշաբթի աւուրն, ի վեց ժամուն աւանդեալ է զհոգին եւ մեծ որդի նորա Յովհաննէս չելեպին ի Խուրուչէշմէէն ի Սարրեար առաքեալ զսպասաւորն ազդ արարեալ է Թովմաճանի: Եւ նա, ընդ լսելն յողբ եւ ի յարտա/385/սուս փղձկելով, առեալ զորդիսն եւ զհոճա Գալուստն խնամին գնաց առ ննջեցեալն: Եւ ի 18 օգոստոսի արարին զթաղումն մեծաւ ցնծութեամբ բազում քահանայիք եւ ի Ղուրուչէշմէի ի հայոց եկեղեցին տանելով բազմութեամբ ամիրայից: Տէր լուսաւորեսցէ զհոգի նորին: (Տե՛ս Պատմութիւն Տէր Յովհաննիսի Թովմաճանեան, աշխատասիրութեամբ Էլիզաբէթ Թաջիրեանի եւ Մերուժան Կարապետեանի, Երեւան, 2024, էջ 407-412)

ՎԱՍՆ ՄԵԾԻ ՀՐԿԻԶՄԱՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՔԱՂԱՔԻՍ ՉՈՐՐՈՐԴ ԱՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՍՈՒԼԹԱՆ ՍԵԼԻՄ ԱՐՔԱՅԻՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ ԵՒ ՅԵՊԱՐՔՈՍՈՒԹԵԱՆՆ ՄԵԼԼԷՔ ՄՈՒՀԱՄՄԷՏ ՎԵՐԱԿՈՂԵԼՈՅՆ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՄԽԱ [1792] ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2. ՅԱՒՈՒՐ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ԵՒ Ի ՍԷՆԷԻՆ. ՄՈՒՀԱ. ԱՄՍՈՅ ՀԵ [26]ԻՆ ՀԱՅՈՑ ԹՎԻՆ ՌՄԽԱ [1792]

Արդ՝ ի յսկիզբն աշխարհակործան հարուածոյս այսորիկ, լուացեալ բորբոքեցաւ ի միջոյ քանթարճիներուն, ուր կայ աղօթարան մի տաճկաց, որ է առ պարսպաւ Ծոուն Գափուլին, որ ասի Սարը Դէմիրճի ճամիսի: Հուպ անտի փայլատակեալ առ ժամայն ծաւալեցաւ ի բազում /167բ/ առաջս եւ աղարտեալ խանդարեաց զյոլով տեղիս: Զորոց եւ մեք ըստ կարի մերում նշանդրեսցուք փոքր ի շատէ:

Եւ արդ յաջմէ ընթացեալ մինչ ի պանդոկին Ալի փաշային՝ բայց ոչինչ վնասեաց շինուածոյն: Եւ անտի ոստուցեալ դէպ ի վեր կոյս՝ այրեաց զՍուլու սարայն եւ զորս շուրջ են զնովաւ եւ զՏեւօղլու չէշմէսին եւ զշրջակայս նորուն՝ մինչ ի Սիւլէյմանիէ շուկայն, ուր քանթակագործք են արուեստականք եւ այլք ընդ նոսա. որ եւ այրեաց զգլուխ բարձրաւանդակ մինարէին՝ որ անկանի ի կողմն արեւելեան՝ արժանի սքանչացման: Բայց ի ձախմէ յառաջ կոյս ընթացեալ այրեաց զմասն քութուճիներին եւ զԹահտի Գալեայ շարշուն: Իսկ պալգափանին եւ խասիրճիներն մնացին ամբողջ: Եւ անտի ոլորեալ հրակիզեաց զԱլաճայ համամին մինչ ի Գէրէնճիլեր պաշին, ուր եւ տունք եւ ապարանք բազումք /168ա/ նորոգ շինեցեալք, որք նախ այրեցեալք էին: Իսկ յետ կոյս հայեցեալ տեսցուք զՄէհէմմէտ էմին օղլուն զմեծագոյն ապարանս, զոր գնեաց Իսմայիլ փաշայն որ եւ գլխատեալ, որդի նորա նստէին:

Եւ ի վեր կոյս թռուցեալ այրեաց զհին Աղայ Գաբուսին եւ անդր ընդ դիմաք էսկի սարային մինչ ի Պիրի Փազար Գափուսին: Եւ ի Թահտի Գալէէն ի վեր կոյս աճապարեալ հրոյ ճարակ տայր զխանութս ճախարակեայ արուեստաւորաց եւ զորս ընդ նոքօք: Այլեւ զկրպակս թիւլպէնտճոց համանդամայն (անդ ծխախեղդ մեռաւ ժամկոչ որդի Յոհաննէսն եւ ոմն ընդ նմա ի պանդոկիկն իյնէճոյն): Եւ զՄերճան շարշուն մինչ ի Պասարմաճի խան եւ ի Պապա Ալի ֆըրընէն մինչ ի մեծ Նոր խան, զոր շինեալ էր սուլթան Մուստէֆայն: Դարձեալ ի Պապա Ալի ֆըրընէն ի Սրրի /168բ/ համամ եւ անդր մինչեւ յԱստարճի խան եւ անդ կարկեալ դադարեցաւ հրամանաւ փրկչին:

Այլ արդ գիտելի է՝ զի զհանդամանս եւ զորպիսութիւնս զայրացեալ եւ կատաղի հրդեհմանս այսորիկ պատմեալ միբստմիջէ տկարութեանս մերում, ահա անկարելեացն է: Քանզի ամենայն շինուածք կամարակապք եւ ամենայն վայելչութիւնք կերտուածոց քարայարկ պանդոկաց, որոց բազմութիւն տեղիք են ի մէջ շուկայից եւ ամենայն կառուցմունք հաստահիմն մթերանոցաց, գրեթէ առ հասարակ խանգարեցան, անկան փշրեցան եւ հալեցան առաջի սաստկութեան հրակիզման այսորիկ: Զոր ո՛չ երբէք էր լուեալք ոք եւ կամ տեսեալ ուրուք, որ երկարեալ տեւեաց իբրու ժամս տասնեւինն. սկսեալ յառաջներորդ ժամու տունջեան հինգշաբաթի աւուրն, մինչ ի յութերորդ ժամն հետեւ/169ա/եալ գիշերին: Բայց յուրբաթի առաւօտին եւս հրդեհեալ այրեցաւ տունք ոմանք մեծամեծք առ երի Վալիտէ խանին իբրեւ ժամս երկուս, մօտ աւերակացն այնոցիկ:

Ապա դարձաւ ի խաղաղութիւն ակնարկութեամբ ամենակարողին. յորմէ փրկիլ յուսամք բարեխօսութեամբ ամենից սրբոյն եւ մանաւանդ սրբոյ Աստուածածնի կուսին, ամէն:

ՃՇԳՐԻՏ ՀԱՇԻԻ ՏԱՆՑ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Տեղիք	*Տունք*
Ստամպօլ	*٥١٠٠ [2100]*
Սամաթիա	*١٤٠٠ [1400]*
Պալատ	*١٤٠٠ [1400]*
Պէյօղլու	*١١٥٠ [1150]*
Իւսկիւտար եէնի Մահլլէ	*٠٨٠٠ [0800]*
Սէլամսրզ	*٠٣٥٠ [0350]*

Եէնի գափու	*·Է··[0400]*
Խասքէօյ	*·Է··[0400]*
Թօփգափու	*·ՕԼ·[0280]*
Գալադա	*·ՕԼ·[0280]*
Էյուպ առ հասարակ	*·ՌՕ[0135]*
Օրդաքէօյ	*·ՌՐ·[0120]*
Հիսար	*·Ռ··[0100]*
Պէշիքդաշ	*··Ղ·[0065]*
Գասըմփաշա	*··ՂՐ[0062]*
Պէյ քօղ	*··Ղ·[0060]*
Եէնի քէօյ	*··Է·[0040]*
Գուրուչէշմէ	*··Ռ·[0030]*
Տուն ընդ ամմէնը	*ՑՌՎՐ[9172]*
Տընվոր	*Ռ····[30000]*

Եղեալ Լ [8] ոգիք առ մի տնվոր, ոգիք ընդ ամենայն ՌԷ····[24000]:

(Տե՛ս Մխիթարեան Միաբանութեան Վիեննայի մենաստանի մատենադարան, ձեռ. 779, թ. 33բ)

ԲԱՌԱՐԱՆ

ազըխ (ազըգ) - պարէն, պաշար

ալայ - թափոր, վաշտ, գունդ

աճէմ - իրանցի

այազմա - աղբիւր

այնա - հայելի

այնաճի (այնաճը) - հայելագործ, հայելավաճառ

աշճի (աշճը)-խոհարարապետ

զէր մահպուպ - օսմանեան ոսկեդրամ

զիլիֆտար - զինակիր

փուսատ - սպասք, կարասի

էլչի - դեսպան

էսնաֆ - արհեստաւոր

թահմիզ (թահմիս) - խորովել, բովել

թերճիման - թարգման(իչ)

թէլլալ - մուներտիկ, քարոզիչ

թուլումպա - ջրհան

թուլումպաճը - հրշէջ

իսկելէ - նաւամատոյց

լէպլէպիճի - բոված սիսեռ վաճառող

խաֆաֆ - կօշկագործ, կոշկակար

սօխախ - փողոց

խաբամա/գափամա(ճի) - կտաւէ կամ մետաքսէ ներքնազգեստի հանդերձ(ավաճառ)

խալեօճ (գալեօճ) - մեծ առագաստանաւ

խալէ (գալէ) - ամրութիւն, ամրոց, բերդ

խահվէխանէ - սրճարան

խահվէճցի - սուրճ եփող

խայեխանա - Ղայեղհանայ- (Գայըգ-խանէ, Գայեքխանէ), - Թերսխանէին (արքունական նաւերի նաւարանին) կից գտնուող նախկինում ռազմագերիների («արգելարան գերեաց») համար նախատեսուած բանտը («քիւրէկ»), որտեղ բանտարկեալները դատապարտուած էին թիավարութեան՝ տարբեր պատժաժամկէտներով, տարբեր նաւերի վրայ

խանթարճի (գանթարճը) - կշռող (հանրային)

խզլար աղասի - ներքինապետ

խուլումճի (գուլումճու) - ոսկերիչ

համամ (համմամ) - բաղնիք

ղանճապաշ - օսմանեան արքունական նաւակ

ճամի - մզկիթ

մանաւ - մրգավաճառ

միւթէվէլլի - վերակացու

միւշավէրէ(թ) - խորհրդակից լինել

չամուռ (չամուր) - ցեխ, տիղմ, շաղախ

չէքմէճէ - գզրոց

չրախ (չըրագ) - աշակերտ

չօռպաճի (չօրպաճը) - տէր

պազիրկեան - վաճառական

պալըխճը (պալըգճը) - ձկնորս, ձկնավաճառ

պալթաճի (պալթաճը) - փայտահատ

պախալ (պագգալ) - նպարավաճառ

պախշիշ - պարգեւ

պաճանախ (պաճանագ) - քենակալ

պայրախտար (պայրագ-տար) - դրօշակակիր

պասմաճի (պասմաճը) - կերպասեղէնի վրայ տպող կամ վաճառական

պարութճի - վառօդ պատրաստող կամ վաճառող

պէյլիկ նաւ - արքունական նաւ

պէօլիւկ - առատութիւն

պօստանճի պաշի - սուլթանական պարտէզների կառավարիչ

սահաթ - ժամ

սանճախ (սանճագ) - տարածքային ստորաբաժանում, գաւառ

սիլահ - զէնք

վախըֆ - հոգեւոր կառոյցներին նուիրաբերուած անօտարելի կալուածքներ

տէօքիւնտիւ - մնացորդ

տօնանմա - հրավառութիւն, տօնական լուսավառութիւն

ռայա - հպատակ ժողովուրդ

րէզիլ - խայտառակ

քերխանայ (գերհանա, քէրխանէ)- արհեստանոց

քեօզ չալօղք - ուղտի կողերից կախուած կարասիկները նուագող

քեօշէք - մունետիկների խումբ

քէրէստեճի - ատաղձագործ

քիւլհանճի - բաղնիքի հնոցապան

քիւրքճի - մուշտակագործ, մուշտակավաճառ

օտապաշի - սենեկապետ

օրթա - կենտրոն

օրտու - բանակատեղ, ճամբար

ֆէթհ - բացում, սկիզբ, նուաճում

ֆնտըխ (ֆընտըգ) ոսկի - կլոր ոսկի

ֆըսանտ (ֆուրսաթ) ժամանակ, հնարաւորութիւն

ջէյրէկ (= չէյրէք) - քառորդ

քէմէր - կամար, գօտի

քէլլէ - գանկ, գլուխ

միւճտէճի (միւժտէճի) - աւետաբեր, մունետիկ

խասապայ - աւան, գիւղաքաղաք

եհվալ - ցանկութիւն, սպասելիք, ակնկալիք

խարաճ - գլխահարկ

րիճալ - աւագանի

պինա - շինութիւն, կառուցուածք

կէլիւր (կէլիր) - հաս, մուտք

մէյմար - ճարտարապետ